

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOLOGY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 3(42)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2023

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի

Журнал "Вестник Ереванского университета. Филология" выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"

Three issues of "Journal of Yerevan University. Philology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009

Խմբագրական խորհուրդ.

Գլխավոր խմբագիր՝ Ավետիսյան Անն (բ.գ.թ., դոց.)

Ավետիսյան Յուրի (բ.գ.դ., պրոֆ.), Փասապարյան Սեդա (բ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ թղթակից անդամ), Կատվալյան Վիկտոր (բ.գ.դ., պրոֆ.), Կարապետյան Շուշան (բ.գ.թ., ԱՄՆ), Հովակիմյան Արմեն (պատմաիս. խմբագրի տեղակալ, բ.գ.թ.), Մատթեոսյան Վարդան (պ.գ.թ., ԱՄՆ), Մարտիրոսյան Հրաչ (բ.գ.թ., Նիդերլանդներ), Մուրադյան Գայանե (բ.գ.դ., պրոֆ.), Ոսկանյան Վարդան (բ.գ.թ., դոց.), Չոլաքյան Հակոբ (պ.գ.դ., Միդիս), Պետրոսյան Դավիթ (բ.գ.դ., պրոֆ.), Քալանթարյան Ժենյա (բ.գ.դ., պրոֆ.)

Редакционная коллегия:

Главный редактор: **Аветисян Левон** (к.фил.н., доц.)

Аветисян Юрий (д.фил.н., проф.), **Восканян Вардан** (к.фил.н., доц.), **Гаспарян Седա** (д.фил.н., проф., член.кор. НАН РА), **Калантарян Женья** (д.фил.н., проф.), **Карапетян Шушан** (к.фил.н., США), **Катвалян Виктор** (д.фил.н., проф.), **Мартirosyan Грач** (к.фил.н., Нидерланды), **Маттеосян Вардан** (к.ист.н., США), **Мурадян Гаяне** (д.фил.н., проф.), **Овакимян Армен** (зам. ответ. редактора, к.фил.н.), **Петросян Давид** (д.фил.н., проф.), **Чолакян Агоп** (д.ист.н., Сирия)

Editorial Board:

Editor-in-chief: **Avetisyan Levon** (Ph.D. in Philology, Associate Professor)

Avetisyan Yuri (Sc. D. in Philology, Professor), **Cholakyan Hakob** (Sc. D. in History, Syria), **Gasparyan Seda** (Sc. D. in Philology, Professor, NAS RA Corresponding Member), **Hovakimyan Armen** (Deputy Managing Editor, Ph.D. in Philology), **Kalantaryan Zhenia** (Sc. D. in Philology, Professor), **Karapetyan Shushan** (Ph.D. in Philology, USA), **Katvalyan Victor** (Sc. D. in Philology, Professor), **Martirosyan Hrach** (Ph.D. in Philology, Netherlands), **Matteosyan Vardan** (Ph.D. in History, USA), **Muradyan Gayane** (Sc. D. in Philology, Professor), **Petrosyan David** (Sc. D. in Philology, Professor), **Voskanyan Vardan** (Ph.D. in Philology, Associate Professor)

ՆԱՐ-ԴՈՍԸ «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍՈՒՄ ԵՎ ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՈՒՄ

ՎԱԶԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Ուսումնասիրության առանցքում ունենալով Արշակ Չոպանյանի՝ Նար-Դոսի և նրա ստեղծագործության վերաբերյալ «Անահիտ» հանդեսի՝ 1930-ական թվականների տարբեր համարներում տեղ գտած անդրադարձումները՝ հողվածում առաջին անգամ հանգամանորեն ներկայացվում են անվանի գրականագետի գեղագիտական ու հասարակական հայացքները մեծանուն արձակագրի ստեղծագործության մասին: Նար-Դոսի գրականությանը թեև ծանոթ լինելով հեռվից՝ միջնորդաբար, այնուամենայնիվ Չոպանյանը նրբին ու հետաքրքիր դիտարկումներ է արել գրողի աշխարհայացքի, գեղարվեստական մեթոդի և մտածողության համակարգի վերաբերյալ: Խնդիր է դրվել բացահայտել Չոպանյան գրականագետ-քննադատի գնահատման գեղագիտական չափանիշները՝ մատնանշելով թե՛ արժեքավոր դիտարկումները, թե՛ հակասական, վիճարկելի կամ անընդունելի մտքերն ու տեսակետները: Հողվածում կիրառվել են համեմատական, համադրական, մեկնաբանական, վերլուծական, ինչպես նաև նկարագրական մեթոդները:

Հողվածի առաջին մասում ընդարձակ տեղ է տրված Նար-Դոսի հետ հայտնի արվեստաբան Արամ Երեմյանի հարցազրույցին, որտեղ հեղինակի մեկնաբանությունները՝ սեփական կյանքի և ստեղծագործության վերաբերյալ, առավել ամբողջացնում են նրա՝ իբրև գրողի դիմանկարը:

Բանալի բառեր – Նար-Դոս, Ա. Չոպանյան, «Անահիտ» հանդես, մշակութային մերձեցում, հարցազրույց, կենսագրություն, գրական ազդեցություն, գեղարվեստական մեթոդ, հայ ռեալիստական վեպի սկզբնավորող

1890-ական թթ. պոլսահայ գրական միջավայրում ձևավորված, հետագայում փարիզաբնակ արևմտահայ անվանի մտավորական Արշակ Չոպանյանի գործունեության էական կողմերից մեկը եղել է հայ ժողովրդի երկու հատվածների մշակութային արժեքների գնահատումը, փոխադարձ տարածումն ու ծանոթացումը. «...Արշակ Չոպանյանը ուներ համահայ մտահոգություններ և գրականագետ-քննադատի ու արվեստաբանի իր ողջ գործունեության ընթացքում գրեթե հավասարապես իր աչքի տակ պահեց արևելահայ ու արևմտահայ, սփյուռքահայ ու սովետահայ գրական-հասարակական-քաղաքական կյանքի երևույթները»¹, - գրում է Վազգեն Գաբրիելյանը:

¹ Վ. Գաբրիելյան, Արշակ Չոպանյանը սովետահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, № 1, էջ 33-34:

Ա. Չոպանյանը ուշագրավ և գիտական լուրջ ուսումնասիրություններ է գրել ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ, իսկ հետագայում՝ սփյուռքահայ ու խորհրդահայ գրողների և նրանց ստեղծագործությունների մասին՝ ազգային միասնական գրականության զարգացման համար միշտ կենսական համարելով նրանց մշակութային մերձեցման, միմյանց միջև մտավոր սերտ հարաբերություններ հաստատելու, իրար լրացնելու ձգտումը: Եվ եթե անգամ Չոպանյանի գրախոսություններից, նաև հոդվածներից ու գրվածքներից շատերը հեռու են տվյալ հեղինակի ստեղծագործության վերաբերյալ գրականագիտական-գեղագիտական հանրագումար լինելուց և ոչ էլ առաջին կամ ելակետային խոսքն են այս կամ այն գրողի կամ գործի վերաբերյալ, հաճախ էլ գուրկ են տեսական բանաձևումներից կամ իմաստասիրական բարդ դատողություններից, երբեմն ունեն թռուցիկ բնույթ՝ գրված ընդհանուր գնահատանքի մակարդակով, այնուհանդերձ դրանք ուշագրավ են նրանով, որ իրենց անպաճույճ արտաքինի տակ անպայմանորեն ուրվագծում են Չոպանյանի քննադատական խառնվածքի, գեղագիտական նախասիրությունների առանձին կողմեր, և դրանք մոռացության մատնելը կլինի անարդարացի:

Այդպես ահա հատուկ որևէ ուսումնասիրություն չգրելով՝ Նար-Դոսի և նրա ստեղծագործության մասին՝ Չոպանյանը, սակայն, իր խմբագրած «Անահիտ» հանդեսի 1930-ական թթ. տարբեր համարներում՝ իր նախասիրած լրագրային ժանրում՝ քրոնիկներում, հակիրճ բնութագրումներով անդրադարձել է նաև արձակագրին, արել մի շարք նրբին դիտարկումներ նրա ստեղծագործության որոշ առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք, սակայն, անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել: Ընդ որում անտեսել են ոչ միայն Նար-Դոսի գրականության ուսումնասիրողները, այլև Չոպանյանի գրականագիտական ու քննադատական ժառանգությամբ զբաղվողները:

Սակայն, մինչև Նար-Դոսին ուղղակիորեն անդրադառնալը Չոպանյանը «Անահիտի» 1930 թ. հինգերորդ համարում տպագրել է ամսագրի աշխատակից, գրող, գրականագետ, հայտնի արվեստաբան Արամ Երեմյանի գրույցը արձակագրի հետ՝ թվագրված 1929 թ. դեկտեմբերի 11-ով: Զրույցի շարադրանքի առաջին էջում տեղադրված է Նար-Դոսի լուսանկարը:

Գրողների ստեղծագործական արժեքը, կատարած հասարակական դերն ու գաղափարախոսությունը ավելի ճիշտ ընկալելու և լուսաբանելու տեսակետից մեծ կարևորություն տալով նրանց կենսագրության, հուշերի, նամակների, ինչպես նաև միջավայրի հետ կապված պատմական տվյալների հետազոտությանը՝ Ա. Երեմյանը գտնում է, որ շատ կարևոր են նաև հենց իրենց՝ հեղինակների մեկնաբանությունները՝ սեփական կյանքի և ստեղծագործության մասին: Իր գրույցը «տաղանդավոր վիպագիր» Նար-Դոսի հետ գնահատում է որպես այդ ուղ-

դությանը արված առաջին համեստ փորձերից մեկը²:

Նար-Դոսին ուղղված հարցումները և տված պատասխանները շոշափում են տարբեր հարցեր՝ ե՞րբ է գրողը մուտք գործել գրականություն, գրական ի՞նչ հոսանքներից է ազդեցություն կրել, ո՞ր հեղինակներ են մասնավորապես տպավորություն գործել նրա վրա, այս կամ այն գործի նյութը իրական կյանքի ց է առնված, թե՛ ոչ, և այլն:

Իր առաջին գործերը պատկերավոր համեմատելով նոր թևավորված թռչնի առաջին երգերի հետ՝ Նար-Դոսը փաստում է, որ նախ գրել է ռոտանավորներ, որոնցից մի քանիսը անգամ տպագրվել են: Հետագայում է միայն անցել արձակյին, սկզբից փոքր պատմվածքների, ապա վիպակների ու վեպերի:

Ինչ վերաբերում է գրական ազդեցությունների հարցին, պարզվում է՝ եթե ժամանակի՝ 1880-ական թվականների հայ գրականությունը նրան ոչինչ չի տվել, ինչպես ինքն է հիմնավորում, «ծայր աստիճան աղքատիկ» լինելու պատճառով, ապա փոխարենը նրա վրա «խոր եւ անջնջելի տպավորութիւն է գործել» ժամանակի ռուս գրականությունը՝ հանձինս Տուրգենևի, Դոստոևսկու, Գոնչարովի, Տոլստոյի, որոնց երկերից օգտվել է մասնավորապես իր գրվածքները հոգեբանորեն հիմնավորելու տեսակետից: Միակ բացառությունը մեզանում Նար-Դոսը համարում է Սունդուկյանի պիեսները, որոնց տպավորության տակ անգամ գրել է դրամատիկական մի գործ, որի ձեռագիրը, ինչպես ավստրալիացու փաստում է նա, կորել է: «Դարաշրջանի գրական գլխավոր ուղղութիւնը Բաֆֆիական ռոմանտիկ ուղղութիւնն էր, որն ինձ վրայ ոչ մի ազդեցութիւն չի գործել...», - ասում է նա և քիչ հետո շարունակում: «Դրօշիս վրայ գրուած է եղել.- Հեռո՛ւ Բաֆֆիական հեքիաթաբանութիւններից (բնագրում՝ հեքիաթաբանութիւնները, որ անշուշտ վրիպակի հետևանք է- Վ. Ա.), իրական կեանքը՝ ինչպես որ կայ եւ մարդուս ներքինը»³:

Պաշտպանելով ռեալիզմի՝ կյանքը, մարդկային հարաբերություններն ու հոգեբանությունը ճշմարիտ և օբյեկտիվորեն պատկերելու ելակետը և ըստ էության կրկնելով իրապաշտության զոհրապայան սկզբունքը՝ «Կեանքն ինչպես որ է», Նար-Դոսը, այնուամենայնիվ, ոչ միայն Բաֆֆու ստեղծագործության որակման հարցում, այլև 1880-ականների արևելահայ գրականությանը տված գնահատականում ընկել է չափազանցության մեջ: Անգամ առերևույթ ընկալմամբ նկատելի է նրա ծայրահեղությունը: Չէ՞ որ հենց նույն 1880-ականներին միայն Պ. Պոռոշյանի «Հացի խնդիրը» (1880), «Ցեցերը» (1888), «Բղդեն» (1889) զարգացրին հայ սոցիալական վեպը և նոր խոսք էին մեր գրականության մեջ: Չմոռանանք նաև Ռ. Պատկանյանի նորնախիջևանյան բարբառով գրված

² Տե՛ս Ա. Երևմեան, Զրոյց վիպագիր Նար Դոսի հետ, «Անահիտ», Փարիզ, 1930, թիւ 5, էջ 42:

³ Նույն տեղում, էջ 42-43:

պատմվածքները, որոնք ուղղակիորեն կապված էին տվյալ իրականությանը, արտացոլում էին իրողություններ, «ուր,- ինչպես նկատում է գրականագետ Ստ. Թովչյանը,- չեն նկատվում առանձնապես գրողի երևակայության, ստեղծագործական հնարքների, «գրչի» հետքերը»⁴:

Ինչպես գիտենք, Նար-Ռոսը իր ստեղծագործական տարերքով ու պաթոսով անտարակույս ռեալիստ է: Բայց ահա այդ ռեալիստ գրողը, հանդես գալով քննադատի դերի մեջ, լավ հասկանալով գրական ուղղությունների տարբերությունները, Բաֆֆուն գնահատելիս, ինչպես տեսանք, նրան հեզնաբար անվանում է «հեքիաթաբան»: Ռեալիստ Նար-Ռոսին, իհարկե, չէին կարող գրավել Բաֆֆու մանավանդ քաղաքական-ծրագրային վեպերի («Կայծեր», «Խենթ», «Ջալալեդդին») արկածային հանգույցները, հոգեբանական անհամոզիչ երանգները, ռոմանտիկական բուռն ու անզուսպ երևակայությունը: Անշուշտ, նրան՝ որպես «օբյեկտիվիստ գրողի» (Վազգեն Սաֆարյանի որակումն է)⁵, գրականության մեջ չէր կարող հանդուրժելի լինել նաև որևէ կանխակալ միտում կամ քարոզչական նպատակ⁶:

Սակայն Նար-Ռոսը անտեսել է մի շատ կարևոր հանգամանք. այն, որ գեղարվեստական ռճի խնդրին Բաֆֆին նայում էր հասարակական դիրքից՝ նկատի ունենալով և կարևորելով օգտակարության հարցը. «- Բաֆֆին,- ինչպես գրում է անվանի գրականագետ Հր. Թամրազյանը,- երբեք չի անտեսել գեղարվեստական հատկանիշների կարևորությունը, սակայն նրա մոտ դրանք իմաստավորվել են միայն և միայն ազգային առաջընթացի և հասարակական շահերի տեսանկյունից»⁷:

Մեծանուն վիպասանը, ասես տարիների հեռվից՝ շուրջ հիսուն տարի առաջ՝ 1883 թ., մարգարեաբար կռահելով նաև ապագա, իր ստեղծագործության ռոմանտիկական միտվածությունն ու արկածայնությունը անընդունելի համարող քննադատի իրեն ուղղված հնարավոր մեղադրանքները, պատասխան է տվել ոչ միայն իր օրերի «կրիտիկոսին»՝ Հայկունուն (Հովակիմ Գեղամյան), այլև նրան. «...հիսուն տարիներից հետո,- գրում է Բաֆֆին,- եթե մի կրիտիկոս հանձն կառնե քննել Կայծերը կամ Բաֆֆիի մյուս վեպերը, նա միշտ սխալանքների մեջ կընկներ, եթե ի նկատի չէր առնի ժամանակի պատմությունը և այն բոլոր

⁴ Ռ. Պատկանյան, Երկեր, Եր., 1980, էջ 16:

⁵ Տե՛ս Վ. Սաֆարյան, Գրողի և կերպարի անհատականությունը, Եր., 2001, էջ 178:

⁶ Ի դեպ, ինչպես գրականության հասարակական ու գեղագիտական կոչման վերաբերյալ իր պատկերացումներում, այնպես էլ Բաֆֆու գրականության մասին գնահատականներում Նար-Ռոսը ունեցել է ակնհայտ հակասություններ. մի կողմից նա պահանջել է իդեալներ և հայ ռոմանտիկ հեղինակների հետևողությամբ սահմանել նրանց գործունեության ոլորտները, մյուս կողմից համոզված պնդել է, «որ գրողը պետք է աշխատի չերևալ իր երկերում, չպետք է զգացնել տա իր գաղափարները, մի բան, որ ռոմանտիզմի հիմնական էությունն է». այդ մասին հանգամանորեն տե՛ս Վ. Սաֆարյան, Գրողի և կերպարի անհատականությունը, էջ 177-178, 189, նաև՝ Վ. Սաֆարյան, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը (Դասախոսություններ 1), Եր., 2022, էջ 186-187:

⁷ Հր. Թամրազյան, Հայ քննադատություն, Գիրք Գ, Եր., 1992, էջ 403:

հանգամանքներն ու շարժառիթները, որ պատճառ եղան այդ վեպերի ստեղծվելուն»⁸:

Եվ իսկապես, Նար-Ռոսն ընկել է որոշ «սխալանքի» մեջ: Բայց և այնպես, կարծում ենք, այդ սուբյեկտիվիզմը ուներ նաև ինչ-որ հասկանալի հիմքեր և թերևս կապված էր հայ վիպասանության առաջընթացի հետ: Մասնավորապես, ռուս գրականության անցումդարձերին և գրական զարգացումներին քաջաձանոթ Նար-Ռոսը, համոզված ենք, ձգտում էր վերջինիս օրինակով ընդլայնել հայ վեպի ընդգրկումը և մեծացնել տեսակարար կշիռը՝ հատկապես բարձր գնահատելով իր դերը վիպասանության զարգացման շղթայի մեջ:

Արամ Երեմյանի հարցումներին, թե «Աննա Սարոյան», «Տանտիրոջս աղջիկը» վեպերի նյութը իրական կյանքի՞ց է առնված, Նար-Ռոսը տալիս է դրական պատասխան՝ յուրաքանչյուրի կապակցությամբ հակիրճ բացատրելով, թե ինչ նպատակ է հետապնդել և ինչ է ցանկացել ցույց տալ: Իսկ Երեմյանի՝ մասնավորապես «Աննա Սարոյանի» վերաբերյալ Լեոյի տված կարծիքի հարցում՝ ճիշտ է արդյոք պատմաբան-գրականագետը, երբ վեպի գեղարվեստական հաջողության երաշխիքը համարել է սոսկ դրության արձանագրումը՝ առանց քննության առնելու նրա պատճառները, «առանց երեւոյթի պատմութեան եւ հոգեբանութեան մէջ մտնելու»⁹, Նար-Ռոսը տալիս է հետևյալ պատասխանը. «Լէօն ճիշդ է ասում, որ ես բաւականացել եմ միայն դրութիւնն արձանագրելով. բայց եթէ նա գտնում է որ ես չեմ բացատրել պատճառները, չեմ մտել երեւոյթի պատմութեան եւ հոգեբանութեան մէջ, ապա կ'ասեմ, որ այդ դէպքում ես կը նմանէի այն նկարչին, որ քաղաղ նկարելով, տակը գրէր. «Սա քաղաղ է»¹⁰: Այս դէպքում արդար է Նար-Ռոսի հեզմանքը: Լեոն, ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Նար-Ռոսի հիշյալ երկու վեպերը, նկատել է. «...Նա (Նար-Ռոսը- Վ. Ա.) միայն պատմում է իրողութիւնը: Նրա հերոսները կազմ ու պատրաստ են դուրս գալիս ընթերցողի առաջ: Եւ այդ պատճառով պ. Նար-Ռոսի այս երկու գրուածքները պէտք է պարզապէս կէանքի տեսարաններ անուանել»¹¹:

Քանի որ այս դէպքում մեր խնդրո առարկան հատկապես «Աննա Սարոյան» նամակագրական երկն է, նկատենք, որ «ոչ շատ հաջողված քննադատ» Լեոն (որակումը Վազգեն Սաֆարյանինն է)¹² շրջանցել է նրա ժանրային-ոճական առանձնահատկությունները՝ մոռանալով, որ այդ ժանրում դժվար է ստեղծել վիպաշխարհ. այստեղ բախումները

⁸ Բաֆֆի, ԵԺ, «Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը», հ. 10, Եր., 1964, էջ 125-126:

⁹ Լեոյի կարծիքի բնագիրը ամբողջապես տե՛ս Լէօ, Ռուսահայոց գրականութիւնը, սկզբից մինչեւ մեր օրերը. Բանաստեղծութիւն.- թատերգութիւն, վիպագրութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 1904, էջ 370-371:

¹⁰ Ա. Երեմեան, նշվ. աշխ., էջ 43:

¹¹ Լէօ, նշվ. աշխ., էջ 370-371:

¹² Տե՛ս Վ. Սաֆարյան, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը (Դասախոսություններ 1), էջ 83:

տեղի են ունենում մարդու կամ հերոսի հոգեբանության մեջ¹³: Եվ հետո՝ նամականու ձևը թույլ չի տալիս միջանկյալ նկարագրություններ, մանրամասներ, հանգամանալից բացատրություններ. այն պահանջում է հնարավորինս սեղմ և ընդգծված ցույց տալ հանգուցային պահերը¹⁴:

«Սպանված աղավնի» վեպի՝ իր ստեղծագործական գլուխգործոցը լինելու հարցի պատասխանը թողնելով քննադատներին ու ընթերցողներին՝ Նար-Դոսը, սակայն, վերջինիս թեման գտնում է «գերիրական, եւ մշտական-այժմեական», քանի գոյություն կունենա երկու սեռերի հարաբերության խնդիրը, որը ավելի քան երբևէ, ինչպես նկատում է արձակագիրը, «ուժեղ թափով ծեծում է ռուս յետ-հոկտեմբերեան գրականութեան մեջ...»¹⁵:

Չաջորդ հարցերը վերաբերում են «Մահը» և «Պայքար» վեպերին, դրանցում շոշափված խնդիրներին: Եթե առաջինում, ինչպես հեղինակն է փաստում, շոշափել է կյանքի և մահվան պրոբլեմը, ապա երկրորդում պատկերել է ժամանակի հայ հասարակական երկու գլխավոր հոսանքների՝ պահպանողականների, որին, ի դեպ, ինքը անգիջում հարել էր¹⁶, և լիբերալ-ազատամիտների («նոր-դարական եւ մշակական»-Նար-Դոս) բախումը:

Նար-Դոսը իր նախաձեռնությամբ՝ չսպասելով հարցի, խոսում է նաև «Մեր թաղը» նովելաշարի մասին, ասում, որ դրանում ընդգրկված բոլոր պատմվածքների նյութը առնված է իրական կյանքից գրված պատանեկան տարիների անմիջական տպավորության տակ: Իսկ սովորաբար իր գրվածքներում հասարակական ո՞ր խավերի կյանքն է պատկերել, ո՞ր միջավայրն է գլխավորապես նյութ ունեցել, Նար-Դոսը պատասխանում է. «Իմ գրվածքներում ես ուզեցել եմ պատկերել առհասարակ մեծ քաղաքի խուլ թաղերում իրենց ողորմելի կեանքը քարշ տող խեղճ, աղքատ դասակարգի չարքաշ կեանքը, այդ դասակարգի մեջ տիրող մտաուր թանձր խաւարը, նախապաշարումները, մանաւանդ կնոջ սոսկալի վիճակը տղամարդու ձեռքին. այնուհետեւ նոյն քաղաքի մեշչանական (քաղքենիական- Վ. Ա.) եւ մանր-բուրժուական ընտանիքի կեանքը, մեր հասարակական հոսանքների բաղխումները, մեր ինտելիգենցիայի, զանազան ներկայացուցիչների տիպերը»¹⁷:

Վերջին հարցին, թե որոնք են իր կյանքի «բնորոշ գծերը», Նար-Դոսը իրեն հատուկ համեստությամբ¹⁸ պատասխանում է, որ ոչինչ իր կենսագրության մեջ հետաքրքիր չկա, և շատ հակիրճ, մի քանի բառով ներկայացնելով իր կյանքը՝ ավարտում է գրույցը:

¹³ Տե՛ս **Տ. Մերջանյան**, Կյանքի և մահվան խնդիրը Նար-Դոսի երկերում, Եր., 2022, էջ 104:

¹⁴ Տե՛ս «Հայ վեպի պատմություն (19-րդ դար)», Եր., 2005, էջ 395:

¹⁵ **Ա. Երեմեան**, նշվ. աշխ., էջ 43:

¹⁶ Տե՛ս **Վ. Սաֆարյան**, Գրողի և կերպարի անհատականությունը, էջ 175:

¹⁷ **Ա. Երեմեան**, նշվ. աշխ., էջ 44:

¹⁸ Նար-Դոսի խառնվածքի ու բնավորության մասին տե՛ս **Վ. Սաֆարյան**, Գրողի և կերպարի անհատականությունը, էջ 174-177:

Արամ Երեմյանն իր գրույց-հոդվածը եզրափակում է Նար-Դոսի արտաքինի նկարագրությամբ, որի պատկերավոր գծագրության մեջ բացահայտում է մեծ գրողի բնավորության առանձնահատկությունները՝ եռանդը, համառ աշխատասիրությունը, իմաստությունը: Ակնառու է գրականագետի խորին ակնածանքը Նար-Դոսի նկատմամբ:

«Անահիտի» նույն թվականի՝ 1930-ի հաջորդ համարում՝ «Լրատու գրականութեան եւ արուեստի Հայաստանից եւ Կովկասից» խորագիրը կրող բաժնում, որտեղ պարբերաբար տեղեկություններ էին տրվում Խորհ. Հայաստանում տեղի ունեցող տնտեսական վերափոխումների, հայաստանյան մշակութային կյանքի, նորատիպ հրատարակությունների ու ստեղծագործությունների և այլնի վերաբերյալ, թղթակիցը հայտնում է, որ Վրաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի հայկական բաժանմունքը մարտի 20-ին Տպագրիչների ակումբում կազմակերպել է գրական դատ Նար-Դոսի «Մպանված աղավին» վեպի շուրջ, որը առաջ է բերել մեծ հետաքրքրություն¹⁹: Իսկ հանդեսի՝ համանուն խորագիրը կրող 1931 թ. թիվ 1-2 միացյալ համարում փոխանցվում է, որ Վրաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի հայկական բաժանմունքը ապրիլի 23-ին կազմակերպել է զեկուցում՝ նվիրված Նար-Դոսի ստեղծագործություններին: Ներկաներից շատերը իրենց համակրանքի և գնահատության խոսքն են հնչեցրել գրողի հասցեին: «Խորհրդային Հայաստան» լրագրից առնված տեղեկությունների միջնորդությամբ տեղեկացվում է նաև, որ նույն թվականի հունիսի 14-ին Ռուսթավելու անվան թատրոնի համերգային դահլիճում տեղի է ունեցել Նար-Դոսի 45-ամյա գործունեության հորելյանը, որտեղ հանդիսության կազմակերպիչ, Վրաստանի հանրային կրթության գործավար Կվիրակաձեն իր ոգևորիչ ճառում հաղորդել է, որ Վրաստանի լուսժողովատը որոշել է Նար-Դոսին տալ Վաստակավոր գրողի կոչում՝ նրան ապահովելով թոշակով, և Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղի յոթնամյա դպրոցը վերանվանել նրա անունով: Բազմաթիվ ողջունողներից, նրանց թվում նաև Դ. Դեմիրճյանից և Ալազանից հետո՝ հորելյանական նիստի վերջում, հանդես է եկել «ալեգարդ յոբելեարը»՝ շնորհակալական ջերմ հարգանք հայտնելով իր գրական վաստակը գնահատողներին և խորհրդային իշխանությանը՝ գրողներին «գուրգուրանքի» արժանացնելու, քաջալերելու և գնահատելու համար: Հաղորդվում է նաև, որ Վրաստանի կառավարությունը որոշել է Նար-Դոսին նշանակել կենսաթոշակ, վրացերենով տպագրել նրա «Մեր թաղը» ժողովածուն և «Մպանված աղավին» վիպակը, իսկ Հայաստանի պետհրատը՝ նրա գրվածքների լիակատար ժողովածուն: Ադրբեջանի պետհրատը նույնպես հրատարակում է նրա լավագույն երկերը, իսկ Ռուսաստանի պետհրատը ռուսերենով արդեն լույս է ընծայել «Մահը» վեպը²⁰:

¹⁹ Տե՛ս «Լրատու գրականութեան եւ արուեստի Հայաստանից եւ Կովկասից», «Անահիտ», Փարիզ, 1930, թիվ 6, էջ 126:

²⁰ Տե՛ս **Ա. Զօպանեան**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, թիվ 1-2, էջ 187-188:

«Անահիտի» նույն՝ 1931 թ. մայիս-օգոստոսյան համարում՝ իր նախասիրած լրագրային ժանրում՝ քրոնիկում, կովկասյան թղթակցի միջնորդությամբ Չոպանյանն է նաև հաճույքով տեղեկացնում, որ և՛ Երևանում, և՛ Թիֆլիսում տոնվել են Նար-Ռոսի 45-ամյա և Դեմիրճյանի 35-ամյա գրական գործունեության հոբելյանները: Չոպանյանը դրանք գնահատում է որպես «բերկրառիթ», «խորհրդային ռեժիմին պատուաբեր» երևույթներ, որոնք նաև վկայում են ամբողջ պետության և ոչ միայն հայ, այլև «դրացի ու դաշնակից ժողովուրդներու ե... ազգերու եղբայրական» մեծարանքը, «միահամուռ յարգանքն» ու «սիրոյ արտայայտութիւնը» «ցեղին մտաւոր ու գեղարուեստական գործին վաստակաւորներուն հանդէպ»²¹: Սակայն նրբազգաց մտավորականը նաև ցավով փաստում է, որ նման մեծ գրագետների հոբելյաններին, «որ ամբողջ Հայութեան մտաւոր կեանքի սիւներէն են», արտասահմանի հայ գաղութներից որևէ մեկին հնարավորություն չի տրվել մասնակցելու²²:

Երկու տաղանդավոր արձակագիրներին համատեղ գնահատելով և հաճախ զուգահեռներ տանելով՝ Չոպանյանը Նար-Ռոսի կապակցությամբ մասնավորապես է, որ նա «հայ իրապաշտ վեպին մեծագոյն վարպետն է Արեւելահայոց մէջ», և անմիջապես նկատում՝ «Շիրվանզադէն յետոյ»²³: Ձեռքի տակ չունենալով Նար-Ռոսի որևէ գիրք կամ ստեղծագործություն՝ Չոպանյանը նրա մասին տալիս է ավելի շատ ընդհանրական գնահատականներ՝ ափսոսանքով փաստելով, որ գրողի գործերը Կովկասից դուրս շատ քիչ են կարդացված, իսկ ավելի հաճախ՝ ծանոթ միայն անունով: Համենայնդեպս՝ իր ընթերցողին խմբագիրը տեղեկացնում է, որ Նար-Ռոսը, ինչպես և Դ. Դեմիրճյանը, որ արդեն Առաջին աշխարհամարտից առաջ դրսևորել և ապացուցել էին իրենց տաղանդը, «թէւ ոչ համայնավար, ...առաջին բոլորէն բարեկամ եւ համակրող ցոյց տուած են նոր րեժիմին»: Գալով Նար-Ռոսի ստեղծագործության բովանդակությանը՝ Չոպանյանը գրում է. «Նար-Ռոսի վեպերը արդեն կծու քննադատութիւն մըն էին պուրժուական ընկերութեան, պատկերացում մը մարդկային անարդարութեանց, կեղեքմանց, շահագործմանց»²⁴:

Որպես առավելություն Չոպանյանը նկատում է, որ երկու հեղինակներն էլ, իրենց աշխարհայացքը զուտ գրական գործերի մեջ արտահայտելով, մնացել են ճշմարիտ արվեստագետներ՝ հեռու կուսակցական «բռնազբօսիկ եւ անկենդան» քարոզներից: Չոպանյանի գեղա-

²¹ Նույն տեղում, էջ 162: Այդ հոբելյանների առիթով Ա. Չոպանյանը նաև արժանի է հատուցում ԽՍՀՄ սյուս հանրապետությունների մասնակցության երևույթին. տե՛ս նաև՝ **Կ. Դալլաքյան**, Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 423:

²² Տե՛ս **Ա. Չոպանեան**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, թիւ 1-2, էջ 162:

²³ Գրեթէ նույն միտքը, սակայն այլ ձևակերպմամբ ու բառերով արտահայտել է Հր. Թամրազյանը՝ գրելով. «Մեզանում ոչ ոք այդպես խորը չի ըմբռնել ռեալիզմի բնույթը... որքան Շիրվանզադէն». **Հր. Թամրազյան**, նշվ. աշխ., էջ 506:

²⁴ **Ա. Չոպանեան**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, թիւ 1-2, էջ 162:

գիտության մեջ այս ըմբռնումը նորություն չէր. նա միշտ էլ պահանջ էր դնում արվեստի մեջ քողարկել հեղինակային միտումնավորությունն ու ջատագովությունը, գաղափարական բացահայտ ու անսքող քարոզը²⁵: «Ազգին շահը կուսակցության շահին վեր դնել միշտ»²⁶, - այս էր Չոպանյանի նշանաբանը: «Ճշմարիտ գրագետն ու բանաստեղծը, կոչուի Թումանեան կամ Չարենց, Թեքեան կամ Սիամանթո, Ահարոնեան կամ Իսահակեան, Բաֆֆի կամ Ալիշան, իրենց բուն գրական գործերուն մեջ՝ ամեն կուսակցությունե վեր կը բարձրանան, կը դառնան ներկայացուցիչները ազգին հոգւոյն ու հանճարին: Ասիկա չհասկցողը՝ բուն գրական քննադատութեան ու նաեւ ճշմարիտ կուսակցական գործունէութեան՝ անգիտակ կը մնայ»²⁷, - համոզված գրում է գրականագետը: Եվ վերջապէս, չէ՞ որ, ինչպէս իրավացիորեն նկատում է քննադատը, «տաղանդը, երբ կայ, ու եւ վարդապետութեան կեղերը կը ճեղքէ ու իր ծաղիկները դուրս կը հանէ, իրականացնելով գրականութեան եւ արուեստի բուն նպատակը, Գեղեցիկը»²⁸:

Վերջին անգամ Ա. Չոպանյանը Նար-Դոսին անդրադարձավ նրա մահվան կապակցությամբ 1933 թ.: Իր խոսքի մեկնարկում գնահատելով Նար-Դոսին՝ ասես նրա մեծությունը ընդգծելու համար դարձյալ համեմատում է Շիրվանզադէի հետ, սակայն այս անգամ նրանց դնում է նույն աստիճանի վրա. «Նար-Դոս (Միքայէլ Յովհաննէսեան) հայ իրապաշտ վեպին ռահվիրան եղած է մեր մեջ, Շիրվանզադէի հետ, եւ իր գործերու շարքով այդ գրական սեռին մեջ մեծ վարպետ մը հանդիսացած է,- գրում է նա՝ քիչ ներքևում շարունակելով:- Նար-Դոս եւ Շիրվանզադէ, մտցուցին վեպի մեջ այդ իրապաշտ ուղղութիւնը, գոր Մունդուկեան, առաջինը հայ իրապաշտներուն, մտցուցած էր թատերգութեան մեջ»²⁹:

Փոյթ չէ, որ ինչպէս նախկինում³⁰, այնպէս էլ ընդամենը մի քանի տարի առաջ արևելահայ գրականության մեջ ռեալիստական վեպի սկզբնավորողի՝ իր իսկ կողմից Շիրվանզադէին շնորհված բացարձակ առաջնորդությունը Չոպանյանը առնում է նրանից և այն հավասարապէս բաշխում վերջինիս և Նար-Դոսի միջև: Առավել զարմանալին այն է, որ քիչ հետո էլ Նար-Դոսին գնահատում է «աւելի գուտ իրապաշտ», քան Շիրվանզադէն է, «որուն աւելի ընդարձակ ու բազմատարր գործին մեջ,- ինչպէս գրում է,- քիչ մը ռոմանթիզմ կայ խառնուած»³¹: Եվ վերջին

²⁵ Տե՛ս նաև Կ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 453-454:

²⁶ Ա. Չոպանեան, Մեր երեկն ու այսօրը, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 8:

²⁷ Ա. Չոպանեան, Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականութեան մեջ, «Անահիտ», Փարիզ, 1939, թիւ 1-2, էջ 91:

²⁸ Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, թիւ 5, էջ 107:

²⁹ Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 60:

³⁰ Դեռ 1909 թ. «Անահիտի» առաջին շրջանում, Ալ. Շիրվանզադէին նվիրված հոդվածում Ա. Չոպանյանը գրում է. «Շիրվանզադէ մեր ամենէն իսկական «իրապաշտն» է», Ա. Չոպանեան, Շիրվանզադէ, «Անահիտ», Փարիզ, 1909, թիւ 7-8, էջ 146:

³¹ Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 60:

հանգամանքը Շիրվանզադեի համար դիտարկելով որպես առավելություն («ատոր համար՝ աւելի լայն ու այլազան, աւելի հրապուրիչ է ան») ասես մի տեսակ շփոթություն է ստեղծում: Եվ քանի որ քննադատը հետո չի պարզում իր միտքը, լռում է, և բացակայում է բացատրությունը, ուստի դժվար է գուշակել, թե ինչ նոր բան կարող էր տեսած լինել նա Շիրվանզադեի ոճի և եղանակի մեջ՝ նման գնահատական տալու համար: Սակայն շուտով գալիս է ասվածի սրբագրումը. 1935 թ. Շիրվանզադեի մահվան կապակցությամբ ասես արդեն վերջավորված օրինականացում է իր նախկին տեսակետը. «...ան (Շիրվանզադե- Վ. Ա.) արևելահայ գրականութեան մեջ մտցուց իրապաշտ վեպը եւ այդ գրական սեռին մեջ մեծագոյն վարպետը հանդիսացաւ...»³²:

Վերադառնանք Նար-Դոսին: Համառոտ ակնարկ տալով գրողի կենսագրության վերաբերյալ ու ներկայացնելով հասարակական միջավայրը՝ Չոպանյանը, հավատարիմ իր որդեգրած քննադատական սկզբունքներին³³, Նար-Դոսի նախընտրած գեղարվեստական նյութի տարածությունն ու թեմաները պայմանավորում է ոչ միայն նրա ապրած կյանքով ու շրջապատով, այլև, որ շատ կարևոր է, անհատական խառնվածքով՝ դրանով չանտեսելով գրողի ներքին տարերքի դերը նրա ստեղծագործության մեջ. «...Նար-Դոս իր խառնուածքէն ու իր կեանքին ու շրջապատին իսկ պայմաններէն մղուած է արտադրել գործեր ուր մարդկային կեանքը կը պատկերացուի անոր անարդարութիւններէն, անհաւասարութիւններէն, անբարոյացուցիչ տգեղութիւններէն զգուած, ընդվզած, եսամոլ կեղեքիչներու դէմ ասելութեամբ լի, շահագործուող ու զոհուող տկարներուն հանդէպ արգահատանքով տոգորուն մտայնութեամբ մը... Իր գործերուն մեջ, հարուստ ջոջը եւ մամոնայի երկրպագու կղերական դեկավարը ժխտական գոյներով ներկայացուած են...»³⁴:

Այնուհետև Չոպանյանը ցույց է տալիս խոշոր ռեալիստ գրողի արվեստի սոցիալական միտվածությունը, որը, ինչպես ինքն է վկայում, «չ'արտայայտուի յեղափոխական տեսութիւններով ու մարդկային ընկերութեան անարդարութեանց դէմ կռուող հերոսներու պատկերացումներով...»³⁵: Նար-Դոսի գործերը, ինչպես համոզված է Չոպանյանը, օբյեկտիվորեն ներկայացնելով ժամանակի հասարակական հարաբերությունները, իրենց թողած տպավորությամբ ընթերցողի մեջ սերմանել են «ընդվզման ու վերանորոգիչ պայքարի տրամադրութիւն», ճիշտ այնպես, ինչպես Սունդուկյանի և Շիրվանզադեի «ընկերական յեղա-

³² Ա. Չոպանեան, Շիրվանզադե, «Անահիտ», Փարիզ, 1935, թիւ 6, էջ 44:

³³ Ա. Չոպանյանի տեսական-քննադատական սկզբունքների մասին տե՛ս Ա. Չոպանեան, Ուսումնասիրութեան մը շուրջը, «Ծաղիկ», Վ. Պոլիս, Ազգային, Գրական եւ Քաղաքական կիսամեայ հանդես, Նոր շրջան, թիւ 7, 20 մայիս 1895, էջ 261: Նաև՝ Ժ. Քալանթարյան, Հայ գրականագիտության պատմություն, Եր., 1986, էջ 377-392:

³⁴ Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», 1933, թիւ 1-2, էջ 60:

³⁵ Նույն տեղում:

փոխութիւն պատրաստող գործերը»³⁶: Նման ձևակերպմամբ, կարծում ենք, գրականագետը շատ է խտացնում գույները և հեռանում ճշմարտությունից³⁷: Անշուշտ չի կարելի ժխտել թե՛ Սունդուկյանի, թե՛ Շիրվանզադեի և թե՛ Նար-Ղոսի աշխարհայացքի դասակարգային բովանդակությունը, նրանց երկերի սոցիալական հագեցվածությունը, իրականության մերկացման քննադատական ուղղությունն ու դատապարտումը, այն, որ գրողները անտարբեր չեն եղել կյանքի անցուղարձին, հասարակական հարաբերություններին, սակայն դա դեռ չի նշանակում, թե նրանք իրենց ստեղծագործություններով նախապատրաստել են սոցիալական հեղափոխություն: Ասվածը ենթակա է խիստ վերապահության, անգամ՝ մերժման: Այլ բան, որ նրանք, պատկերելով իրենց ժամանակի սոցիալական միջավայրը, հասել են հասարակական կյանքի թերությունների և հակասությունների գեղարվեստական ամբողջացմանը, և այդ թերությունները ցանկանալով տեսնել վերացած՝ հասարակության վերափոխման և բարեփոխման մեջ ավելի հաճախ դրել են անհատի խնդիրը կամ նրա մաքրագործման պահանջը, գաղափարական բողոքը, որը եթե անգամ վերաճել է սոցիալական դժգոհության, ապա չի հասել դասակարգային ուղիղ կռվի կամ ըմբոստության նպատակի:

Գալով Նար-Ղոսի կյանքի վերջին շրջանին՝ Չոպանյանը վերստին վկայում է, որ գրողը համակրանքով է ընդունել խորհրդային իշխանությունը, առանց համայնավար դառնալու՝ դարձել «նոր րեժիմին» բարեկամ ուղեկիցը, հանգամանք, որ, ինչպես գրականագետն է բացատրում, շատ առումներով պայմանավորված էր նաև նրա գործերի հիմնական բնույթով: Մի քանի տողով էլ անդրադառնալով գրողի ստեղծագործական կյանքի վերջին շրջանին, հրատարակած նոր գործերին ու անավարտ մնացած հղացումներին՝ դարձյալ նկատում է, որ Նար-Ղոսի գրական արտադրությունները գրեթե անձանոթ են արևմտահայությանը: Եվ ակնկալելով, որ գեթ մահվանից հետո նրա գործերի նոր հրատարակությունը կտարածվի արտասահմանում և կգրավի նաև արևմտահայ ընթերցողին՝ ավարտում է խոսքը իր որակմամբ «խնամոտ, դժուարահաճ, կատարելասէր գրող,- ժուժկալ, ճշգրիտ ու յստակ ոճով նրբավրձին իրապաշտ» հեղինակի մասին³⁸:

ВАЧАГАН АВАГЯН – Нар-Дос в журнале «Анаид» и в оценках Аршака Чобаняна. – В данной статье, посвященной отзывам Аршака Чобаняна о Нар-Досе и его творчестве в разных номерах журнала «Анаид» за 1930-е годы, впервые подробно представлены эстетические и общественные взгляды известного литературоведа о творчестве знаменитого романиста. Будучи знакомым с литера-

³⁶ Նույն տեղում:

³⁷ Ի դեպ, Կ. Դավլաբյանը Ա. Չոպանյանին նվիրված իր արժեքավոր մենագրության մեջ առանց որևէ հիմնավորման լուր ընդառաջ է եկել Ա. Չոպանյանի այս տեսակետին բավարարվելով սոսկ նրա ասածի կրկնությամբ, տե՛ս Կ. Դավլաբյան, նշվ. աշխ., էջ 440:

³⁸ Տե՛ս Ա. Չոպանյան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 61:

турой Нар-Доса на расстоянии, посредническим путем, Чобанян сделал тонкие и интересные наблюдения о мировоззрении, художественном методе и системе мышления писателя. Задача автора статьи - выявить эстетические стандарты оценки Чобаняна-литературоведа, указав как на ценные наблюдения, так и на спорные, дискуссионные или неприемлемые мысли и взгляды.

В первой части статьи значительное место отведено интервью известного искусствоведа Арама Еремяна с Нар-Досом, где комментарии автора о собственной жизни и творчестве дополняют его портрет как писателя.

Ключевые слова: *Нар-Дос, Аршак Чобанян, журнал «Анаит», культурное сближение, интервью, биография, литературное влияние, художественный метод, родоначальник армянского реалистического романа*

VACHAGAN AVAGYAN – *Nar-Dos in "Anahid" Journal and Archag Tchobanian's Evaluations.* – Current article, focusing on Archag Tchobanian's references on Nar-Dos and his work in different issues of "Anahid" journal in 1930s, the aesthetic and public views of the famous literary critic on the work of the famous novelist are thoroughly presented for the first time. Although familiar with Nar-Dos's literature from a distance, through mediation, Tchobanian made subtle and interesting observations about the writer's worldview, artistic method and thinking system. The task of article's author is to reveal the aesthetic standards of evaluation of Tchobanian the literary critic, pointing out both valuable observations and controversial, disputable or unacceptable thoughts and views.

In the first part of the article, an extensive space is given to the famous art critic Aram Yeremyan's interview with Nar-Dos, where the author's comments on his own life and work complete his portrait as a writer.

Key words: *Nar-Dos, Archag Tchobanian, "Anahid" journal, cultural rapprochement, interview, biography, literary influence, artistic method, originator of the Armenian realist novel*

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՄՏԱՆԻ ՎԿԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՑԱՆ

Հոդվածում վեր է հանվում հայ գրականության դասական հեղինակ Հակոբ Մնձուրու (Հակոբ Տեմուրճյան) կյանքի պոլսյան շրջանը: Եղեռնի հետևանքով Հակոբ Մնձուրին ստիպված եղավ իր ողջ կյանքն ապրել հարազատ ծննդավայր Արմտանից հեռու, քանի որ աքսորվել ու սպանդի էին ենթարկվել ինչպես հարազատ ծննդավայր Արմտան գյուղի բնակչությունը, այնպես էլ իր ողջ գերդաստանը, այդ թվում և չորս երեխաները: Կ. Պոլսի «Մեհեան» և «Ոստան» հանդեսներում տպագրված մի քանի պատմվածքների հեղինակ Մնձուրին ամենամագործ աշխատանքներին զուգահեռ մխրճվում է գրական-ստեղծագործական ոլորտ՝ դառնալով կարոտի գրականության և սփյուռքահայ գրականության սկզբնավորողներից մեկը: Նրա հիմնական թեման գյուղն էր ու գյուղացին, հայրենի բնաշխարհն ու կենդանական աշխարհը, որ ընդհանրապես խտացնում էին աշխատանքի ու արարման խորին խորհուրդը ի հակակշիռ սպանդի ու ավերման: Մնձուրու գրեթե բոլոր պատմվածքներում ներկա է ինքը՝ մերթ որպես մասնակից ծավալվող դեպքերի, մերթ որպես ականատես, մերթ էլ որպես իր կերտած հերոսների և ընթերցողի հետ զրուցակից: Եվ այդ ամենը հետևանք այն բանի, որ նա գրում էր այլևս չգոյ մարդկանց ու եզերքի մասին, որոնք անընդհատ գալիս էին, լցնում նրա հիշողությունները, որոնցից նա «պարպվում», «խաղաղվում» էր գրելու միջոցով՝ նպատակ ունենալով յուրովի վերակենդանացնել նրանց բոլորին, շարունակել նրանց կյանքը:

Մնձուրու պատմվածքները, գեղարվեստական արժեքներից զատ, նաև երկրագիտություն են, ազգագրություն, ժողովրդական կենցաղի, բարքերի ու սովորույթների փաստագրում, բայց ամենից առաջ այն հայկական եղեռնի վավերագրումն է, նրա վկայությունը, մի գրականություն, որի ընթերցման ժամանակ ընթերցողի մեջ առաջանում է այն հարցը, թե ո՞ր է այդ մարդիկ, և ի՞նչ պատճառով նրանք չկան:

Մնձուրու պատմվածքների մեծ մասը թեև հազիվ 2-3 էջից են բաղկացած, սակայն նրա չորս գրքերը, մամուլում տպագրած վիպակներն ու գրություններն իրենց ամբողջության մեջ մեկ միասնական վեպ են կազմում, որ կարելի է անվանել Արևմտահայաստանի Արմտան գյուղի ասք՝ ուղղված ներկա ու գալիք սերունդներին՝ ի հավերժացումն հայրենի հողի ու բոլոր նահատակների:

Բանալի բառեր – «Կապույտ լույս», Արմտան, գյուղական թեմատիկա, «Նազար» թատերախաղ, Մնձուրի, Մեծ եղեռն

1914-ի աշնանը Հակոբ Մնձուրին մեկնում է Պոլիս՝ վիրահատելու նշագեղձերը: Վիրահատությունից զատ՝ կար շատ կարևոր ևս մեկ գոր-

ծոն: «Մեհեան» հանդեսում Յակոբ Տեմիրճեան ստորագրությամբ արդեն տպագրվել էին նրա երկու գործերը («Գիւղի գիշերներ», 1914, թիվ 3 և «Գիշերին մէջ», 1914, թիվ 6): Անհրաժեշտ էր գրական այդ մուտքը ամրակայել, ով գիտէ, գուցէ նոր գործեր էր իր հետ տանում՝ չիմանալով, որ պարբերականի օգոստոսյան համարը այլևս չէր տպագրվելու: Գուցէ և գնում էր «*ինքզինք ճանաչել տալու*» պոլսահայ գրական աշխարհին, իր «*Յակոբ Տեմիրճեան ըլլալը*» հաստատելու: Եվ իրոք. Պոլսում «*մինչև կոնակը*» սև-սեթ մազերով, կարճահասակ, գլուղացու տեսքով, «*ոտքերը եսենիով*» Տեմիրճեանին տեսնողները պիտի զարմանային ու կասկածէին: Չէ՞ որ գրողն ու բանաստեղծը ընդունված և կայուն իր տիպարն ուներ՝ սպիտակ մաշկ, «*սժգոյն դեմք*», «*սլացիկ հասակ մը*», մինչդեռ նա...:

Մնծուրու հայրն արդեն մեկ տարի էր, որ Պոլսում էր և կերավաճառի խանութ էր աշխատեցնում: Մեկ-երկու օր անց, փողոցում հանդիպելով համերկրացու, Մնծուրին տեղեկանում է, որ այդ օրը զավատ վերադարձող հայերի խումբ է ճանապարհ ընկնում: Եթէ խումբը երկու օր սպասէր, ինքը կվիրահասովեր և նրանց հետ կվերադառնար: Չէին կարող սպասել, նավը կմեկնէր առանց նրանց:

Նույն օրը Մնծուրին վիրահատվում է: Բժշկից տեղեկանալով, որ կարող է վերադառնալ երկիր, Մնծուրին վազում է նավահանգիստ, բայց. « - *Նաւը գնաց, ըսաւ Քերոբէն, քեզ ալ կը դնէինք նաւը դուն ալ կ'երթայիր, քսանը հինգ վայրկեան մը հագիւ եղաւ*»: Եվ լավ եղավ, որ ուշացավ: Սա արդեն երրորդ դեպքն էր նրա կյանքում, որ փրկվեց մահից: Մնծուրին անհամբեր սպասում է հաջորդ նավին և երկիր գնացող հայերի հաջորդ խմբին: Մենակ չէր կարող գնալ, քանի որ Կերսոնից, որը նավի վերջնակայանն էր, օրերով ճամփա պիտի գնար ոտքով, իսկ ճանապարհներին վիստում էին ավազակները:

«*Ո՞վ կրնար երեսակայել, թէ Սերպիոյ մէջ Աւստրիոյ գահաժառանգը պիտի սպանուէր...*» (Տեղեր, էջ 173): Սպանվել էր:

Եվրոպական պետությունները սկսել էին գայլային ախորժակով պատերազմել միմյանց դեմ: Թուրքիան ևս զորահավաք է հայտարարում. «*Փողոց, փողոց տաւուլ չալուեցաւ*»¹: Մնծուրուն հացագործ զինվոր են հրամանագրում: «Ալ ի նչպէս կրնայի երկիր երթալ» (Տեղեր, էջ 174): Նա դեռ չգիտէր, որ շուտով չէր լինելու ո՛չ երկիր, ո՛չ տուն, ո՛չ չէն, և ինքը ողջ կյանքում «*պատանդ մը*» պիտի մնար Պոլսում:

Կ. Պոլսի «Մեհեանում» տպագրված «Գիւղի գիշերներ» գործն ուներ «Փոքր Արմտան-Երիզիա» նշումը: Ի տարբերություն իր առաջին գործի («Հարս և սկեսուր»)՝ այստեղ Մնծուրու խոսք էր թափանցել արմտանյան բնանկարը, որն այլևս անբաժան էր մնալու նրա գործերից: Պատմվածքը ներկայացնում է աշնանային ուշագրավ մի համապատ-

¹ **Յ. Մնծուրի**, Տեղեր ուր են եղեր եմ, Իսթանպուլ, 1984, էջ 171: Այս գրքին հղումները այսուհետ կնշվեն շարադրանքում (Տեղեր և էջը):

* Թուրքիան պաշտոնապես պատերազմի մեջ է մտել 1914-ի նոյեմբերին:

կեր. արդեն ավարտվել են դաշտային աշխատանքները, մինչդեռ գյուղում շարունակվում է եռուզեռը, թոնիրներից էլնում է ծուխը, տեղի է ունենում բերք ու բարիքի շտեմարանավորում...

«Մեիյանում» տպագրված հաջորդ գործը՝ «Գիշերին մեջ», ավելի շուտ բնապատկեր է, քան պատմվածք:

1915-ի սկզբներին Թուրքիայում սկսվեցին զանգվածային ձերբակալությունները, տեղահանություններն ու արքայությունները. «1915 Մայիսին գաւառէն նամակ չեկաւ: Երկու անգամ պատասխանաւոր հեռագիր ուղղվեցաւ, չպատասխանուեցաւ: Երրորդիս պատասխանուեցաւ, թէ **հոս չեն, սեւթը մէճհուլ** (անհայտ վայր – Ա. Ա.) *դրկուեցան*»:

«Պապս, Մելքոն, 88 տարեկան էր, մայրս, Նանիկ, 55 տարեկան էր, տղաքս, Նուրհանը՝ 6, Մարանիկը՝ 4, Անահիտը՝ 2, Խաչօն՝ 9 ամսուան, կինս՝ Ողբտան՝ 29 տարեկան: **Ասունք ինտոք քալեցին:** Պապս մինչեւ – *Չուսագեղ Աղբիւր չէր կրնար երթալ*» (ընդգծ. – Ա. Ա.) (Տեղեր, էջ 174):

Այդ հետո Մնձուրին պիտի կախմիսցի քուրդ Թեմերից իմանար, որ ինչպես արմտանցիները, այնպես էլ ողջ գավառը «*սուներուն դոները ժամուն դոներուն պէս պագեր էին ու գատուեր...*» (Տեղեր, էջ 175):

Մնձուրին ևս նրանց շարքերում կլիներ, եթե Կ. Պոլսում չգտնվեր:

«*Իմ չմեռնիլս... 25 վայրկեանի մը. միմիայն 25 վայրկեան ուշացումի մը կը պարտիմ... նավը ճամբայ ելեր էր*» (Տեղեր, էջ 175):

Փոստան ծանր ու գիշերային աշխատանքներին զուգահեռ՝ Մնձուրին շարունակում է ստեղծագործել, տպագրում մի քանի պատմվածքներ, որոնցից մեկը «Մեռեր է Քաղաքը ծիրանի» գործն է, որը գրողը «եղերերգութիւն» է անվանում, և որը վերաբերում է Ակն քաղաքին: Հետագայում «Հանդէս մշակոյթի» ամսագրում տպագրած իր «Ժամանակագրութիւնում» Մնձուրին գրում է, որ «*հիմա*» այլ ձևով կգրեր այդ գործը, թեև իր ժամանակին այդ պատմվածքը հավանել էր «Ոստանի» հրատարակիչ Միքայել Շամտանձյանը և լուր ուղարկել, որ «... նոյն շունչով գրուածքներ գրեմ իր հանդեսին համար»: Եվ ահա, ականջալուր լինելով, Մնձուրին խմբագրություն է ուղարկել իր ուշագրավ գործերից մեկը՝ «Ան Կերգեր Երգերու Երգը», որն ունի «*Անոնց որ երգերու երգը, Ակնայ երգը կ'երգեն*» ընծայականը և Յակոբ Մնձուրի* ստորագրությունը: Պատմվածքում ներկայացվում է «*թէ երգող, թէ նուագող*» թափառական աշուղին, որի կլանող նվագին ունկնդիր «*...լեռները սրածայր կ'ելնէին ու կ'իջնէին, ու այգիները շառագոյն պար կը դառնալին, մինչ գետակները այգուետ կը կայնեցնէին իրենց վագրերը...*»²:

«Ոստան» հանդեսում Մնձուրին տպագրում է նաև «Քրոջ սեր»³ պատմվածքը:

* Յակոբ Մնձուրի գրական անունը նրան տվել է իր մտերիմ, արևմտահայ մտավորական, գրող Չիֆթե-Սարաֆը (Աբխաղոմյան)՝ իրեն էլ մկրտելով Հովհաննես Ասպետ գրական անվամբ:

² «Ոստան», Կ. Պոլիս, 1920, թիվ 5-6:

³ Տե՛ս «Ոստան», Կ. Պոլիս, 1920, թիվ 10:

Մնձուրին գրում է, որ իր բուն ստեղծագործական կյանքը սկսել է 1923-ից. «Առաջին Աշխարհամարտէն առաջ գրածներս... չորս հինգ հաստ մըն են... Ձինադադարին (այսինքն՝ 1918-ից հետո – Ա. Ա.) սկսայ երենայ ու... կը շարունակեմ»: «Կը շարունակեմ» Մնձուրու համար նշանակում էր գրել, անընդհատ գրել, նշանակում էր. «... Կը գրեմ, կ'արտագրեմ, կը հեղեմ» (Տեղեր, էջ 175):

Վերոհիշյալ վկայությունը առնվազն երկու առումով կարևոր է: Խոսքը «կ'արտագրեմ» և «կը հեղեմ» բառերին է վերաբերում: «Կ'արտագրեմ», ասել է թե՛ նորից գրել: Տարբեր առիթներով, այդ թվում և 1953 թ. «Հանդէս մշակոյթի» մեջ տպագրած «Ժամանակագրութիւն» գրության մեջ, Մնձուրին հաճախ է վկայում, որ ինքը դժվարությամբ է գրում. «... ի նչ մէկ, ի նչ երկու, ի նչ երեք, ի նչ չորս անգամ նստելով, ես որ ամէն նստելուս նորէն ետ կը դառնամ, առաջինները կը պատռեմ, նորէն կը գրեմ, ես որ ի նչ ալ ընեմ, շուտ գործ չեմ կրնար հանել»⁴:

«... շուտ չեմ կրնար գրել, ձեռքես ուշ, ձեր երեւակայածէն աւելի ուշ գործ կ'ելլէ,- գրել է Մնձուրին: - Գրածս կարճ ալ ըլլայ նոյնն է: ...Եթե ասեմ, որ դժվարութեամբ եմ գրում, շարքներով «մտքով կը բանիմ», դիմացինը «երեսիս պիտի նայի, մտային առողջութենէս պիտի կասկածի: ... Օրը երկու երեք էջ կը գրեմ»⁵:

Մնձուրին սովորություն ուներ գրելու փոքրիկ թղթերի վրա: Պատճառներից մեկն էլ այն էր, որ հաճախ գրում էր դեպի փուռ երկար ճանապարհին կամ ետդարձին ավիի մեջ (անգամ ավիի վրա), որտեղ կարող էր տեղ անել միայն փոքրիկ թղթիկը: Գրածները հաճախ չէր հավանում: Նորից էր գրում, մինչև որ հասնում էր իր ուզածին. «Նախադասութիւններս ուզածիս պէս բիրեղացուցած եմ: ... Խիճ չկայ: Անձերս իրականներու չափ իրական են: ... Տիպոկոս բնական է, ատկէ ուրիշ կերպ չպիտի խօսէին անձերս. գործողութիւնս տրամաբանական է: Ես ու գրածս կը ժպտինք իրարու: ... Կը երգեմ, կը կատակեմ...»: Եվ նորից առկայծում է Մնձուրու հումորը. «Ի նչ ընեմ որ խելքս շուտ վրայ չգար»: «... Գիտեմ որ չպիտի կրնամ հրատարակել գրածներս: ... Բնութենէն առի, բնութեան կը դարձնեմ նորէն կ'ըսեմ ես ինծի: Բայց արտադրելու հեշտանքէն ձեռքս չեմ կրնար ետ քաշել: Ըսելը, տայը հետս պիտի ընթանայ»: Շարունակելով խոսել իր ստեղծագործական մեթոդի ու երկունքների մասին՝ նա գրում է. «Աստե՛ն մը նիւթս ես կը գտնէի բան մը գրելու համար: Ետքը հասկցայ որ ես գտնելու չեմ, ան գալու է ինծի»⁶:

Ինչ վերաբերում է «կը հեղեմ» արտահայտությանը, ասենք, որ Մնձուրին ապրել ու ապրելու էր ամեն օր «կրկնվող» և երբեք չկրկնվող իրադարձությունների բովում, որտեղ գերակշիռը նրա մտածումներն էին, որ վերաբերում էին անցյալին: Եվ ուրեմն, անընդհատ **լցվում** էր.

⁴ «Հանդէս մշակոյթի», Իսթանպուլ, 1953, թիւ 16:

⁵ «Մարմարա», Իսթանպուլ, 1955, թիվ 4039:

⁶ Նույն տեղում:

«Կը լեցուիմ, պէտք է պարպուիմ որ խաղաղիմ»⁷: Եվ քանի որ Մնձուրու գրականությունն իր «խառնվածքի գրականությունն է, ենթակայական է», նրա այդ «լցվելը» ավարտվում էր հեղելով, այլ խոսքով՝ անընդհատ գրելով, որը նա պարպվել է անվանում:

1920 թ. «Ոստանում» տպագրված «Քրոջ սեր» (թիվ 10) և «Աւետիս» (թիվ 14) գործերը վկայում են, որ Մնձուրին արդեն գտել էր իր ստեղծագործական թեման ու ոլորտը՝ գյուղը և նրա մարդիկ, ընդ որում, վերջին գործը նրա ստեղծագործական գագաթներից մեկն էր մնալու: Հատկանշական է, որ եթե իր նախորդ գործերում գրողը ներկայացնում էր գյուղական կյանքի առանձին դրվագներ, սովորույթներ ու պատկերներ և կամ մշակում ժողովրդական հեքիաթների սյուժեներ, այս վերջին երկու գործերում արդեն առկա է պատկերակերտման մնձուրիական տաղանդը, բնանկարներ կերտելու ձիրքը, սյուժեներ կառուցելու միտումը, մարդկային հարաբերությունների, հոգեբանության ու զգացմունքների խոր ծայքերը թափանցելու ունակությունը: Թերևս սխալ չի լինի ասել, որ եթե մի պահ Մնձուրու ողջ գրականությունը պատկերացնենք որպես մի գունազարդ հագարաթոչուն, նրա ոտքերը «Ոստանում» տպագրված այս երկու գործերն են, որոնք նրան անդառնալիորեն տարել են Արմտանի դաշտերն ու այգիները, ժողովրդական կյանքի ու ընտանեկան ջերմ հարաբերությունների գրավիչ աշխարհը: Այսինքն՝ այն, ինչ Մնձուրին անվանում է «բառերով նկարչություն ընել», «իր լիրիզմը, ռոմանտիզմը, ռեալիզմը ղնել»: Եվ այն միտքը, թե «կհավատամ, թե լավագույն բանը, զոր կրնայի ընել գյուղը տալն էր»⁸, արդեն այս շրջանից նրա համոզմունքն է դառնում, որն արտահայտվում է որքան իրապաշտական տարրերի օգտագործմամբ, այնքան էլ խոսքի զեղումնայնության, քնարականության, գունաերանգային պատկերների համակողմանի կիրառություններով, անգամ բառերին տրված ձայնային հատկանիշներով:

Այդ երկրի ու այդ մարդկանց կյանքի անբաժանելի մասն էր պանդխտությունը, որը հաճախ տղամարդկանց համար շարունակվում էր ողջ կյանքի ընթացքում՝ նրանց կանանց ստիպելով այրու կյանքով ապրել, կատարել տան ու դաշտի ծանր աշխատանքները: Պատահական չէ, որ հայկական գավառներում, Մնձուրու խոսքով ասած՝ «ամէնէն կանչուած երգերում» կային նաև այսպիսի տողեր. «Աս տարի ալ պիտի չգամ, // Թող ճամբուս չնային» (Տեղեր, էջ 98): Հայ կյանքի չարիքներից մեկի՝ պանդխտության վերաբերյալ Մնձուրին գրել է տարբեր տարիների (այդ մասին նա շատ է խոսում մանավանդ «Տեղեր ուր ես եղեր եմ» գրքում): Գրողի այդ թեմայով գրած առաջին գործը եղավ 1920 թ. Կ. Պոլսի «Ոստան» հանդեսում տպագրած «Աւետիս»⁹ պատմվածքը, որը

⁷ «Մարմարա», Իսթանպուլ, 1968, 27 հունիսի:

⁸ **Հ. Մնձուրի**, Կապույտ լույս, Եր., 1968, էջ 15:

* Մնձուրու բոլոր երեք քույրերը մահացել են մինչև բռնագաղթը հարսնահար հիվանդությունից:

⁹ Տե՛ս «Ոստան», Կ. Պոլիս, 1920, թիվ 14:

նրա լավագույն գործերից մեկն է՝ գրված գեղարվեստական բարձր մակարդակով:

Այս պատմվածքից հետո Մնձուրին Ստամբուլի մամուլի զանազան օրգաններում տպագրեց բազում գործեր: Բայց պիտի անցնեին տասնյակ տարիներ, մինչև որ նա կունենար իր պատմվածքների առաջին գիրքը («Կապոյտ լոյս», 1958):

«Ոստանում» տպագրվել է նաև «Եղնիկ աղպարը» հեքիաթը (մաս Ա, 1920, թիվ 19-20)՝ խիստ բնութագրական ընծայականով. «*Լեռներուն երեսը, ճամբաներուն եզերքը անթաղ մնացած մեր բիրաւոր նահատակ մանուկներուն հոգիներուն*»: Այն մանուկներին, որ սուրբ եղնիկների տեսքով շարունակում են ապրել հայ հոգիներում: Նույն ամսագրի 1922 թ. թիվ 21-24 միացյալ համարում Մնձուրին տպագրեց այդ հեքիաթի Բ մասը:

Հեքիաթագիր Մնձուրին սովորական առումով այնքան էլ հեքիաթագիր չէ: Նա, ինչպես այս, այնպես էլ հետագայում գրած տասից ավելի գործերում հանդես է գալիս մշակողի դերում՝ հիմք ընդունելով թափառող սյուժեների տարբերակներից որևէ մեկը:

Այդ ժանրի գործերում Մնձուրին հաճախ է դիմում նաև պատրաստի նյութերի, որոնցից էին ժողովրդական բանահյուսությունն ու ժողովրդական գրույցները, որոնք տեղային պատումի տարբերակներ էին, և կամ՝ ինքը՝ Մնձուրին էր նման բնույթ հաղորդում դրանց, հերոսների գործունեության ոլորտը տեղափոխում Արմտանի միջավայր, որը նրան հնարավորություն էր տալիս գրելու իր հարազատ բնաշխարհի մասին. «*Հեքիաթներս միշտ իմ գիրդիս մէջ եղածի պէս կ'ըսես*»¹⁰, վկայում է Մնձուրին իր «Արմտան» գործում:

Կ. Պոլիս գալուց հետո Մնձուրու կյանքում շատ բան էր փոխվել, կամ, որ ավելի ճիշտ է, ոչինչ չէր փոխվել. նույն դառը ճակատագիրն էր, իր ժողովրդի ու իր հարազատների կորստից ծնված անանց մորմոքները, գրելու սովայտանքները, տնտեսական ծանր կացությունը:

Ընտանիքը պահելու համար Մնձուրին կատարում է ամենազանազան աշխատանքներ. «... *խանութպան էի: Կերավաճառ էի, անասնոց գարի, խոտ, թեփ, յարդ կը ծախեի: ... ածուխ ալ կը ծախեի: ... ուրիշ ի նչ կրնայի ընել, ստիպված էի: Վեց հոգի էինք* (ինքը, կինը, հայրը, երեք երեխաները. – Ա. Ա.), *պիտի ապրուէինք*» (Տեղեր, էջ 99):

Մնձուրին հայտնվել էր մի քաղաքում, որը թեն ծանոթ էր, սակայն օտար էր ու օտար: Շահասեր, նենգ ու եռուզեռով լեցուն այդ քաղաքում «*յետին թուղթի կտոր մը, փաստաթուղթ մը*» չունէր, որ իր «*բան մը գիտնայր ապացուցեր*», թույլտվություն ունենար ուսուցիչ աշխատելու:

Պատահում է այնպես, որ նրա ծանոթ պարսիկ գնորդները խաբելով ապառիկ տանում են ապրանքը և գումարը այլևս չեն տալիս: Եվ ոչ միայն նրանք: Խոսելով իր այդ վիճակի մասին՝ Մնձուրին դառնութեամբ

¹⁰ Թ. Մնձուրի, Կապոյտ լոյս, Իսթանպուլ, 1958, էջ 90:

յամբ (իսկ գուցե և հումորով) գրում է. «Մկիւտարի խանութս գոցեցի: Ինչ ունէինք կատուին բեռցայ» (Տեղեր, էջ 104): Այսինքն՝ երկարամյա աշխատանքից հետո ողջ ունեցածը մի կատվի բեռ է եղել:

Մնձուրին տասնյոթ տարի աշխատում է Թոքթաթյան պանդոկում որպէս գրագիր, հաշվեկալ, արկղակալ, քարտուղար, իսկ երբ պանդոկը փակվում է, մինչև իր մահը ծառայում է Տագսիմի Սբ. Հարություն հայկական փոքրիկ եկեղեցում որպէս եկեղեցական և մոմավաճառ...

Բայց ուր էլ գնաց և ինչ էլ արեց, Մնձուրին նույն Մնձուրին էր, և... գրում էր. չգրել չէր կարող, որովհետև անընդհատ *մնձրվում* էր նրա սիրտն ու հոգին: Գրում էր աշխատանքի ժամերին՝ իր գրությունները թաքցնելով մանավանդ դեկավարի (իր գրություններում նրան *«կոտո»* է անվանում) հսկող աչքերից, գրում էր անկողնու մեջ, քայլելիս, անգիր գրականություն էր ստեղծում՝ հետագայում գրառելու համար, որոնց մի մասն էլ մոռացվում էր, երբեմն՝ կրկնվում:

ՍԱՐԳԻՍ ԱՎԷՏՅԱՆ – Արարատյան բարբառում եզակի հրամայականի մեկ կարևոր առանձնահատկության շուրջ – Արարատյան բարբառում հրամայականի կազմության ձևաբանական կանոնները հիմնականում համապատասխանում են արդի գրական արևելահայերենի խոսակցական տարբերակում գործող ձևերին: Այդուհանդերձ, որոշ խոսվածքներ ունեն մի կարևոր առանձնահատկություն, մասնավորապես՝ *է* (< հ. հայ. *ե* և *ի*) խոնարհման անցողական պարզ բայերի եզակի հրամայականում ոչ թե *ի* հանգով, այլ *ա* հանգով ձև (ինչպես, օրինակ՝ *ուզա՛, վառա՛, գրրա՛*), որը, որքանով մեզ հայտնի է, մինչև օրս պատշաճ կերպով չի բացատրվել ո՛չ տարածամանակյա, ո՛չ էլ համաժամանակյա տեսանկյունից: Փաստարկվում է, որ տվյալ ձևը առաջացել է բարձր կիրառահաճախականություն ունեցող երեք անցողական բայերի (այն է՝ *սսել*, եզ. հրամ. *սսս՛, ածել*, եզ. հրամ. *աժա՛, անել*, եզ. հրամ. *արս՛*) հրամայականի ձևերի համաբանությամբ: Ուստի պատահական չէ, որ սովորաբար միայն *է* խոնարհման անցողական պարզ բայերն են եզակի հրամայականում հանդես բերում *ա* վերջավորությունը, մինչդեռ նույն խոնարհման անանցողականները պահպանել են կանոնիկ *ի* վերջավորությունը, որն էլ, իր հերթին, ծագում է հ. հայ. *իր* վերջավորությունից կամ, հնարավոր է, հիմքավերջյան *եա՛* երկբարբառից՝ անցնելով *է* միջակա աստիճանով (այսինքն՝ *եա* > *է* > *ի*): Ավելի ուշ եզակի հրամայականի *ա* վերջավորությունը որոշ խոսվածքներում *է* խոնարհման անցողական պարզ բայերից համաբանությամբ տարածվել է նաև պատճառական բայերի վրա (առավել կանոնավոր կերպով Վաղարշապատի (Էջմիածնի) խոսվածքում, որում այն դարձել է բացառություն չճանաչող գործուն ձևաբանական կանոն):

Բանալի բառեր – *ձևաբանական կանոններ, Արարատյան բարբառ, եզակի հրամայական, անցողական պարզ բայեր, բարձր կիրառահաճախականություն ունեցող անցողական բայեր, է խոնարհում, Վաղարշապատի (Էջմիածնի) խոսվածք, ա վերջավորություն*

САРГИС АВЕТЯН – К одной важной особенности императива единственного числа в Араратском диалекте. – Морфологические правила образования императива в Араратском диалекте в основном соответствуют тем, которые применяются в разговорной речи современного восточноармянского литературного языка. Тем не менее, некоторые говоры имеют одну важную особенность – форму, оканчивающуюся на гласный *ш*, а не на гласный *һ* в императиве единственного числа переходных простых глаголов спряжения *է* (< др. арм. *t* and *h*), как, например, *նգիշ´*, *շիշիշ´*, *զրրիշ´* – которая, насколько нам известно, до сих пор не была должным образом объяснена ни с диахронической, ни с синхронной точки зрения. Аргументируется, что данная форма была создана по аналогии с императивом единственного числа трёх высокочастотных переходных глаголов (а именно: *սուէլ*, Imp. sg. *սիւիշ´*, *սծէլ*, Imp. sg. *սծիշ´*, *սնէլ*, Imp. sg. *սրիշ´*). Более того, глагол *սիւէլ* сыграл ключевую роль в этом процессе аналогического преобразования. Поэтому не случайно, что только переходные простые глаголы спряжения *է* обычно показывают окончание *ш* в императиве единственного числа, в то время как непереходные глаголы в том же классе спряжения, регулярно сохранили стандартное окончание *һ*, которое, в свою очередь, восходит к древнеармянскому окончанию *հր*, или, возможно, к конечному дифтонгу *էի* глагольной основы через промежуточную стадию *է* (то есть, *էի* > *է* > *һ*). Окончание *ш* императива единственного числа далее распространилось по аналогии с простыми глаголами спряжения *է* также на каузативные глаголы в некоторых говорах (наиболее регулярно в говоре Вагаршапата (Эчмиадзина), где это стало продуктивным морфологическим правилом, не допускающим никаких исключений).

Ключевые слова: морфологические правила, Араратский диалект, императив единственного числа, переходные простые глаголы, высокочастотные переходные глаголы, спряжение *է*, говор Вагаршапата (Эчмиадзина), окончание *ш*

Հ.-Ե. ԵՐԿԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՍԵՐԱԾ
ԵՐԿԲԱՐԲԱՌԱԿԵՐՊԵՐՈՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
(տարածամանակյա և ապաժամանակյա քննություն)

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայերենագիտության մեջ հին հայերենի երկբարբառային համակարգի տարածամանակյա քննության փորձերը կրել են դրվագային բնույթ: Ընդ որում, հիմնականում քննության նյութ են դարձել հ.-ե. երկբարբառային համակարգի հետ ծագումնաբանական առնչություններ ունեցող երկբարբառային կազմությունները: Սույն ուսումնասիրության մեջ նախ՝ տարածամանակյա մոտեցումով ցույց են տրվում հին հայերենի աւ (աւ), էւ (եւ), իւ (իւ), այ (այ), ոյ (ոյ) երկբարբառակերպերի ծագումնաբանական առնչությունները հ.-ե. հիմք-լեզվի երկբարբառային և ոչ երկբարբառային նախաձևերի հետ, այնուհետև ապաժամանակյա մոտեցումով, այն է՝ հ.-ե. և ոչ հ.-ե. լեզուներից կատարված փոխառությունների հետ տիպաբանական զուգահեռների միջոցով, ինչպես նաև վիճակագրական մեթոդի կիրառումով հիմնավորվում է, թե ինչու հ.-ե. հատկապես տվյալ երկբարբառը պիտի համարել հայերենի այս կամ այն երկբարբառակերպի հիմնական նախաձև, թեև. 1) երբեմն հայերենի մեկ երկբարբառակերպին համապատասխանում են հ.-ե. մեկից ավելի երկբարբառային նախաձևեր (հմտ. հյ. աւ (աւ) < հ.-ե. *eu, *āu, հյ. ոյ (ոյ) < հ.-ե. *eu, *ou), 2) հ.-ե. նախաձևերի շարքում կան նաև ոչ երկբարբառային կազմություններ (հմտ. հյ. էւ (եւ) < *ēu. աղբեր < *b^hrēu₂,- հյ. իւ (իւ) < հ.-ե. *ij. ձիւ < *ghūōm):

Բանալի բառեր – Հ. Հյուբշման, Հ. Պեդերսըն, երկբարբառակերպ, երկբարբառային նախաձև, ոչ երկբարբառային նախաձև, տարածամանակյա հայեցակերպ, ապաժամանակյա հայեցակերպ

Հին հայերենն ուներ տասնհինգ երկբարբառակերպ՝ աւ (աւ), էւ (եւ), իւ (իւ), ու (օւ), լա (լա), լէ (լե), լէ (լե), լի (լի), լո (լօ), այ (այ), ոյ (ոյ), յա (յա), յէ (յե), յի (յի), յո (յօ), որոնցից վեցը՝ աւ (աւ), էւ (եւ), իւ (իւ), լո (լօ), այ (այ), ոյ (ոյ), «երկբարբառ» բնորոշումով տարբերակվել է դեռևս 19-րդ դարավերջի և 20-ի սկզբի հայերենագիտության մեջ (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Հ. Պեդերսըն, Ն. Մառ, Մ. Աբեղյան, Հ. Աճառյան), իսկ մյուսները տարբերակել ենք մենք՝ վերջերս հրապարակված մի ուսումնասիրության մեջ¹:

¹ Տե՛ս Վ. Պետրոսյան, Հին հայերենի երկբարբառային և եռաբարբառային կազմությունների հարցի շուրջ (համաժամանակյա հայեցակերպ) // ԲԵՀ. Բանասիրություն, 2023, թիվ 1, էջ 57-67: Ճիշտ է, Ն. Մառը դրանց համար չի գործածում «երկբարբառ» տերմինը, այլ անվանում է «խումբ» (“*epynna*”), որովհետև նա քննում է համապատասխան «տառերով» արտահայտվող միավորների հնչյունական (իմա՝ հնչույթային – Վ. Պ.) արժեքները, սակայն ակնհայտ է, որ այդ տառախմբերը դիտարկում է իբրև երկու հնչյունով արտա-

Նշվածներից առանձին երկբարբառակերպերի՝ հ.-ե. երկբարբառային համակարգի հետ ծագումնաբանական առնչությունների առաջին դիտարկումները պատկանում են Հ. Հյուբշմանին, Ա. Մեյեին և Հ. Պեդերսընին: Նրանք մասնավորապես արձանագրել են հետևյալ համապատասխանությունները. 1) հ.-ե. *eu և *ou > հյ. nj (հմմտ. հուն. *λευκός*, *λοῦσσον* - հյ. *լոյս* [lojs] (< *leuk- «լուսավորել»),- հուն. *σπουδή* - հյ. *փոյթ* [p'oi't'] (սեռ. *փուրթ*) (< *speud- «ճնշել. շտապեցնել»),- իրան. *kapauta-*, պիլ. *kapōt* - հյ. *կապոյտ*, - հյ. *քոյր* [k'oir] - սնսկ. *svásar*, լիտ. *sesūo*, լատ. *soror*, հիբլնդ. *siur*, գոթ. *swistar*, հիբլնդ. *syster* (< *syesōr / *swesōr/) և այլն): Եթե Հ. Հյուբշմանը հյ. nj-ի կիսաձայն j (i) բաղադրիչի համար հնարավոր է համարում սերումը հ.-ե. *s-ից², ապա Ա. Մեյեն *քոյր* (< *syesōr) բառի օրինակով նշում է *esō > *ehu > (h-ի սղումով) *eu անցումները, որից էլ հյ. *ոյ*: Այսինքն՝ հ.-ե. *s > հյ. nj անցում *h-ի միջանկյալ աստիճանով: Այդ երևույթը բացատրելու փորձ է արել նաև Հ. Պեդերսընը: Նրա կարծիքով տեղի է ունեցել *eu և *ou երկբարբառների միաձուլում. *eu-ն և *ou-ն «կ'երեւան շեշտին նախընթաց վանկի մը մէջ իբրև u, շեշտեալ՝ իբրև oi. այս oi ձայնին ծագման սկիզբը պէտք է ըլլայ öu (> öü > öi > oi)»: Ինչպես Կ. Բրուգմանը, Հ. Պեդերսընը ևս ընդունում է, որ «eu նախապես ou եղած է»: Այդ երկբարբառների միացումը նա համարում է «նմաներանգության»⁴ արդյունք, որը «մի միայն յայտնապէս բաւական փակ e և o ձայնաւորներուն վրայ ազդած է»⁵: Ընդ որում՝ հին հայերենի երկբարբառներն ըստ առաջացման բաժանելով առաջնայինների և «երկրորդականների» (իմա՝ երկրորդաբար առաջացածների - Վ. Պ.)՝ նա «երկրորդական երկբարբառներուն մէջէն հնագոյններն» է համարում «s ձայնի մը կորսուելովը ծագում առած», այսինքն՝ հյ. nj-ի տիպի երկբարբառները⁶: 2) Հ.-ե. *ai (*āt/*ət), *oi > հյ. այ (հմմտ. *daiyer > հյ. *տայր*, հուն. *δαίρ*, - *oid- «ուռչել» > հուն. *οἶδημα* «այտուց», *οἶδος* «ուռուցք» - հյ. *այտ* «թուշ», - *aig- > հուն. *αἶψ*, *αἶγός* - *այծ*, - *pater > հուն. *πατήρ*, լատ. *pater* - հյ. *հայր*, - *ātēr- > ավ. *ātar-*, պիլ. *ātur* - հյ.

հայտված հնչյութաբանական մեկ միավոր, ըստ էության՝ երկբարբառային կազմություն: Բացառություն է միայն երկգիր *ni* (*ow*)-ն, որին նա վերագրում է մենաբարբառային արտաբերություն, այլ կերպ համարում է պարզ ձայնավոր (տե՛ս **Н. Маррь**, *Грамматика древнеармянского языка*, С.-П., 1903, էջ 9-18): Այս առումով ուշագրավ է, որ Գ. Ջահուկյանն իր վաղ շրջանի աշխատություններից մեկում չի բացառել հին հայերենի *ni* (*ow*)-ի երկբարբառային բնույթ ունենալը (տե՛ս **Գ. Ջահուկյան**, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954, էջ 63):

² Տե՛ս **Հ. Հյուբշման**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 226:

³ Տե՛ս **А. Meillet**, *Esquisse d'un grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936, էջ 44:

⁴ Գործածվում է գերմաներենի *Umlaut* բառի նշանակությամբ, որը, որպես ձայնդարձի տեսակ, բնորոշ է գերմանական լեզուներին, սահմանվում է իբրև «գերմանական լեզուներում արմատական ձայնավորների պատմականորեն երանգային փոփոխություն՝ ածանցի կամ վերջավորության ազդեցությամբ» (*Лингвистический энциклопедический словарь*, М., 1990, էջ 535):

⁵ **Հ. Պեդերսըն**, Հայերեն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 107:

⁶ Տե՛ս **Հ. Պեդերսըն**, նշվ. աշխ., էջ 126:

այր(-եմ) «այրում եմ» և այլն)՝ նշելով, որ *յ*-ի համարժեքն է *հ*-ե. կիսա-
ձայն **j* (**y*)-ն կամ հպական խուլ **t*-ն⁷: 3) Հ.-ե. **au* > *ui* (հմմտ. հուն.
սնսկ. *nāus* «նավ», հուն. *ναός* - *հյ. նաւ*,- հուն. *πάτωρ* - *հյ. յաւրայ* «խորթ
հայր», *αῶλις* - *աւթ* «գիշերը մի տեղ անց կացնելը» և այլն)⁸:

Ըստ *հ*-ե. երկրաբառային համակարգի հետ ծագումնաբանական
առնչությունների հին հայերենի երկրաբառակերպերը կարելի է բաժա-
նել երկու խմբի՝ այդպիսի առնչություններ ունեցողների և չունեցողների:
Հ.-ե. երկրաբառային համակարգից են սերում կամ առնվազն *հ*-ե.
երկրաբառային նախածներ ունեն, մասնավորապես, պատմահամեմա-
տական հայերենագիտության մեջ երկրաբառ համարված *աւ*, *ել*, *իւ*, *այ*,
ոյ հնչյութաբանական բարդ միավորները (իմա՝ երկրաբառակերպերը)
և, այսպես կոչված, «երկրաբառային ձայնավոր» *ու*-ն⁹, որոնց երկրորդ
բաղադրիչը *ւ* (*u*) կամ *յ* (*i*) կիսաձայնն է: Այսպես.

1) **Աւ** (*au*). *աւղ* «կոշիկ» (< **eu*- «հագուստ կամ կոշիկ հագնել»՝ -*d*^h-
աձականով. հմմտ. ավ. *aōra*- «կոշիկ», լիտվ. *au-iū* «կոշիկ կրել», լեթթ. *au-ju*,
հին սլավ. *obu-ja* «կոշիկ հագնել», ռուս. *об-убе* «կոշիկ»)՝¹⁰, - *աւթ*
«գիշերելը. մեկ օրվա ճանապարհ» (< **au-ti*-՝ **au*- «գիշերել, քնել»
արմատից. հմմտ. հուն. *αῶμος* «գիշերատեղի»)՝¹¹, - *հաւ* (-ի, -աց) «ծայր,
սկիզբ» (< **paus*- «բաց թողնել, արձակել». հմմտ. հուն. *παύω* «դադար-
եցնել», *παύλα* «դադար, հանգիստ», լատ. *pausa* «դադար, վերջ», *pausare*
«դադար առնել, կանգնել», հսլավ. *pustiti* «թողնել, բաց թողնել»)՝¹², - *մաւր*
«ցեխ, տիղմ, ճահճուտ» (< **mauri*-/ **māuri*- «խոնավ. կեղտոտ հեղուկ.
կեղտոտել». հմմտ. լիտվ. *mauras*, *muras* «թաց և պարարտ խոտ, արոտ»,
հուն. *μῦρω* «հոսել, ողողել», լիտվ. *mūrti* «բոլորովին թրջվել», *maurai*
«ճահճացած ջրերի մեջ աճող մի տեսակ բույս, մորաբույս», լեթթ. *maura*
«տան շուրջն աճող թաց ու պարարտ խոտ», *mauragas* «ճահճաբույս»,
հսլավ. *murava*, ռուս. *мырава* «կանաչ, դալար խոտ» և այլն)¹³, - *նաւ* «նավ»
(< **nāu*- «նավ». հմմտ. սնսկ. *nāu*- «նավ, մակույկ», ավ. *nava*,- հին պրսկ.

⁷ Տե՛ս **Հ. Հյուբշման**, նշվ. աշխ., էջ 223, **A. Meillet**, նշվ. աշխ., էջ 44:

⁸ Տե՛ս **A. Meillet**, նշվ. աշխ., էջ 44:

⁹ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 5: *Ու* (օւ)-ի տարածա-
մանակյա և ապաժամանակյա բնութագրերին անդրադարձել ենք մի շարք հոդվածնե-
րում (տե՛ս **Վ. Պետրոսյան**, Հին հայերենի ձայնավորական համակարգի ծագումը և
հնչաբանական արժեքայնությունը // «ԲԵՀ. Հայագիտություն», 2017, թիվ 2, էջ 43-58,
Նույնի՝ Հայկական և հնդեվրոպական երկրաբառային համակարգերը // ՎԷՄ, 2015,
թիվ 3 (51), էջ 115-127, **Նույնի**՝ Հին հայերենի երկրաբառային կազմութիւնների հնչյո-
թաբանական և հնչիւնաբանական արժեքները // «Հայկագեան հայագիտական հան-
դես», 2018, էջ 57-78), ուստի այստեղ այն քննության նյութ չի դառնա:

¹⁰ Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՆԱԲ), հ. IV,
Եր., 1979, էջ 607:

¹¹ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՆԱԲ, հ. IV, էջ 610: Հմմտ. **Հ. Հյուբշման**, Հայերենի քերականու-
թյուն (այսուհետև՝ ՀՔ), Եր., 2003, էջ 411, **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական
բառարան (այսուհետև՝ ՆԱԲ), Եր., 2010, էջ 101:

¹² Տե՛ս **Հ. Աճառյան**, ՆԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 67, **Գ. Ջահուկյան**, ՆԱԲ, էջ 453:

¹³ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՆԱԲ, հ. III, էջ 374: Գ. Ջահուկյանն առաջարկում է **māu*-
meu*- նախածնային տարբերակները (տե՛ս **Գ. Ջահուկյան, ՆԱԲ, էջ 519):

nāviyā «նավատորմի», պիլ. *nāv*, հուն. *ναῦς*, լատ. *nāvis*, հիբր. *nau* և այլն¹⁴:

2) Այ (aj). *այծ* (< **aiǵ-* . հմմտ. հուն. *αἴζ* (սեռ. *αἰγός*) «այծ», սնսկ. *ajā* «այծ», *ajá-* «բուծ», *ajikā* «այծ», ավ. *izaēna-* / *īzaena-* «մաշկյալ, կաշեղեն», պիլ. *azak* «այծ», լիտվ. *ožỹs* «բուծ», *ožkà* «այծ» և այլն¹⁵,- *խայս* «խատուտիկ, պիսակավոր» (< **k^hāid-* ` **(s)kāid/t* «լուսավոր, պայծառ». հմմտ. սնսկ. *kētū-* «լուս, պայծառություն», ավ. *čī9ra-* «փայլուն, պայծառ», լատ. *caelum* «երկնիք» (?), *caesius* «ճաղար (աչք)», հիսլ. *heitr* «տաք», գոթ. *heitō* «ջերմություն», լիտվ. *kaistū* «տաքանալ», հ. վ. գերմ. *heitar* «պայծառ» և այլն¹⁶,- *տայգր* (< **daiwēr* «ամուսնու եղբայրը». հմմտ. հոմ. հուն. *δαῖρ*, սնսկ. *dēvár-*, հսլավ. *dēvrī*, հ. վ. գերմ. *zeihhur*, հանգլ. *tācor*, լատ. *lēuir* (< *dēuir*), լիտվ. *dieveris*, լատիշ. *diēveris* և այլն¹⁷:

3) Եւ (eu). *ալէւր* «ալյուր, փոշի» (< **aleuro-* ` **al-* «աղալ» արմատից. հմմտ. հուն. *ἄλευρον* «ալյուր») ¹⁸,- *առէւծ* (< **reug-* ` **reu-* «ռոնալ, գոչել, մոնչալ» արմատից ` **ǵ* աճականով. հմմտ. հոմ. հուն. *ἐρέγγομαι* «բառաչում եմ, մոնչում եմ» (“*реву, рычу*”), լատ. *rūgio* «առյուծի մոնչալը», հսլավ. *rǔžō* «մոնչում եմ», հռուս. *рѣжати* «մոնչալ» (“*ржать*”), հանգլ. *rēoc* «վայրի», հ. վ. գերմ. *ruhen*, գոթ. *in-rauhtjan* «կատաղել», հիսլ. *raukn* «լծելու կենդանի» (“*упряжное животное*”), լիտվ. *rūkti* «մոնչալ, բառաչել» և այլն¹⁹: Հայերեն ձևում բառասկզբի *ա-* (a)-ն նախահավելական մասնիկ (սուզման) է, ինչպես որ հունականի *ε-* (e)-ն:

4) Իւ (iu). *անիւ* «անիվ, կառքի ակ, տնի» (< **snēuo-* ` **snēu-* «պտտել». հմմտ. հիբր. *snua* «ոլորել, հյուսել», *snúigr* «պտտվող» (ջրաղացաքարի մասին), լատիշ. *snaujis* «օղակ») ²⁰,- *հիւծ-անեւ* «հյուծվել, մաշվել» (< **sēug-* ` **seug-* «տխուր, հիվանդ». հմմտ. գոթ. *siuks* «հիվանդ») ²¹:

5) Ոյ. *բոյլ* (-ի) I. «խումբ, հոտ» (< **b^heu-li-* ` **b^heu-* «ուռչել». հմմտ.

¹⁴ Տե՛ս նաև **Ն. Աճառյան**, ՀԱԲ, հ. III, էջ 433, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 563: Ըստ **Ն. Հյուբշմանի**՝ իրանական փոխառություն է (տե՛ս **Ն. Հյուբշման**, ՀՔ, էջ 201):

¹⁵ Տե՛ս նաև **Ն. Աճառյան**, ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 169: Հմմտ. **Ն. Հյուբշման**, ՀՔ, էջ 417, **Թ. Բ. Գամքրելիձե**, **Վյաչ. Վ. Իվանով**, *Индоевропейский язык и индоевропейцы*, т. II, Тбилиси, 1984, էջ 585, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 49:

¹⁶ Տե՛ս նաև **Ն. Աճառյան**, ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 326, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 314:

¹⁷ **Ն. Աճառյանի** ՀԱԲ-ը և **Գ. Ջահուկյանի** ՀՄԲ-ը *տայգր* բառը չունեն, բայց այն կա **Ն. Աճառյանի** «Հայոց լեզվի պատմության» բնիկ (իմա՝ հ.-ե. ծագման) բառերի ցանկում (տե՛ս **Ն. Աճառյան**, նշվ. աշխ., մաս I, Եր., 1940, էջ 74՝ **daiwēr* ձևից): Հմմտ. **Ն. Հյուբշման**, ՀՔ, էջ 496, **Օ. Семереньи**, *Введение в сравнительное языкознание*, М., 1980, էջ 53, **Թ. Բ. Գամքրելիձե**, **Վյաչ. Վ. Իվանով**, նշվ. աշխ., էջ 760:

¹⁸ Տե՛ս նաև **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 25-26, **Ն. Աճառյան**, ՀԱԲ, հ. I, էջ 94: **Ն. Հյուբշմանը** ևս *ալիւրը* ծագումնաբանորեն կապել է *աղալ* և հատկապես սրանից առաջացած *աղալրի* ձևերի հետ (տե՛ս **Ն. Հյուբշման**, ՀՔ, էջ 414):

¹⁹ Տե՛ս նաև **Ն. Աճառյան**, ՀԱԲ, հ. I, էջ 259, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 74, **Թ. Բ. Գամքրելիձե**, **Վյաչ. Վ. Իվանով**, նշվ. աշխ., էջ 511: Ըստ **Թ. Գամքրելիձեի** և **Վյաչ. Իվանովի**՝ հ. վ. գերմ. *rohōn* «մոնչալ» և լիտվերենի *rūkti* ձևերը առաջացել են հ.-ե. **reuk^{hl}*- արմատական տարբերակից (տե՛ս նույն տեղը):

²⁰ Տե՛ս նաև **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 58: **Ն. Աճառյանն** այս բառը թողնում է չստուգաբանված (տե՛ս **Ն. Աճառյան**, ՀԱԲ, հ. I, էջ 196):

²¹ Տե՛ս նաև **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, Եր., 2010, էջ 462: **Ն. Աճառյանի** «Արմատականում» այս բառը ևս ստուգաբանված չէ. հմմտ. **Հիւծ** «ծիրիլ, հալիլ, մաշիլ, ճնգիլ, նուաղիլ» (տե՛ս **Ն. Աճառյան**, ՀԱԲ, հ. III, էջ 99):

գործ. *bauljan* «ուռչել», հանգլ. *byle*, մ. վ. գերմ. *beul* «ուռչել», սերբ. *buljiti* «աչքերը չռել»²², - *բոյն* (< *b^heu-no- «աճել, բարգավաճել, լինել»։ հմմտ. արբ. *bun* «հովվական հյուղակ», իլլիր. *Boónvos* (տեղանուն)²³, - *բոյծ* (> *բուծանել*) (< *b^heug'- «վայելել, ուտել»։ հմմտ. հինդկ. *bhuj* «վայելել, ուտել», *bhóga* «ուտելիք. վայելելը», լատ. *fungor* «կատարել, իրագործել», անգլաք. *brúcan* «վայելել», գործ. *brūkjan* «վայելել, գործածել» և այլն)²⁴, - *բոյս* (< *b^heu-ko-՝ *b^heu- «աճել, բարգավաճել»։ հմմտ. հուն. *φυτόν* «բույս, բողբոջ. զավակ, սերունդ», ռուս. *булье* «բույս») ²⁵, - հյ. *լոյս* «լույս» (< *leuk- // *louk- «լուսավորել, լուսավոր»։ հմմտ. սնսկ. *rōka-* «լուսավոր», *rōcatē* «երևալ, փայլել», ավ. *raoxšna* «փայլող, շողացող», թոխ. Ա, Բ *luk*, իւեթ. *luk(k)*- «լուսավոր», հուն. *λευκός* «փայլուն, սպիտակ», լատ. *lūx* «լոյս», *lucis* «լուսաբաց», հայրուս. *lauxnos* «լուսատու. աստղեր», գործ. *liuhap* «լույս», հինդ. *lōche* «փայլակ», հալավ. *luča* «ճառագայթ», լեհ. *luna* «բոցի ցուլք» (*отблеск пламени*), ռուս. *лучь* «լույս», *лучь* (բրբռ.) «աղոտ լույս») ²⁶, - *ձոյլ* «ձույլ, միաձույլ, ձուլվածք» (< *g^heu-lo- «լցնել, թափել»։ հմմտ. հուն. *χέω* «լցնել, թափել», *χῶνος* «հալոց, կաղապար», լատ. *lūtis* «ջրամանի կտուցը», գործ. *giutan*, հ. վ. գերմ. *giozan* «ձուլել», հշվեդ. *giuta* «ձուլակաղապար») ²⁷, - *կոյ* (> *կու*) «թրիք, քակոր» (< *g^hōu-to- // *g^hōu-so- // *g^hū- «քակոր, թրիք, կղկղանք»։ հմմտ. հինդկ. *gūtha-* «կղկղանք», ավ. *gūṭa-*, պրս. *gūh*, թոխ. *kewiye*, հալավ. *govīno*, ռուս. *говно*, լեհ. *gówno*, անգլաք. *cowād* բոլորն էլ «աղբ, կղկղանք») ²⁸, - *լոյտ* «նախատիկնք, անարգանք» (*լուտամ*) < *loud- , - *լոյծ* «հոսանուտ. հեղուկ» (*լուծանել*) (< *leug- «կտորել, խախտել»։ հմմտ. հինդկ. *rujati* «կտորում է, ջարդում է», հանգլ. *tolūcan* «քայքայել, կործանել», լիտվ. *lauči* «կտորել» և այլն), - *փոյթ* (-ոյ) (< *speud- «ճնշել, շտապել»։ հմմտ. հուն. *σπεύδω* «շտապել, փութալ», արբ. *pune* «գործ, աշխատանք», կիմր. *ffwdan* «շտապողակա- նություն», լատ. *pudet* «ամաչել», լիտվ. *spudinti* «շտապել, փախչել») ²⁹:

Ինչպես այլ դեպքերում, վերոհիշյալ հինգ երկբարբառակերպերի բուն նախաձևերը հաստատելու հարցում նույնպես երկրորդական չեն հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներից կատարված փոխա- ռությունների տիպաբանական բնութագրերը: Ըստ այդմ.

Ա) *Ա* երկբարբառակերպը հանդիպում է. ա) *սեմական* (հմմտ. *ū, if, eḥ/ab* > *աւ*. ակկադ. (ն. ասուր.) *anūtu, unūtu(m), enūtu(m)* «անոթ, աման.

²² Տե՛ս **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 135:

²³ Տե՛ս նույն տեղը:

²⁴ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀՄԲ, հ. I, էջ 468, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 135:

²⁵ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 135:

²⁶ Տե՛ս **Հ. Հյուբշման**, ՀՔ, էջ 453, **Հ. Աճառյան**, ՀՄԲ, հ. II, էջ 294-295, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 300-301, **Օ. Семереньи**, նշվ. աշխ., էջ 54, **Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов**, նշվ. աշխ., էջ 685:

²⁷ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀՄԲ, հ. III, էջ 150, 158, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 476:

²⁸ Տե՛ս **Հ. Հյուբշման**, նշվ. աշխ., էջ 461, **Հ. Աճառյան**, ՀՄԲ, հ. II, էջ 628-629, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 418:

²⁹ Տե՛ս **Հ. Հյուբշման**, նշվ. աշխ., էջ 501, **Հ. Աճառյան**, ՀՄԲ, հ. IV, էջ 515, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 766-767:

գործիք, պիտույք, գույք, կահ-կարասի» > հյ. *անաւթ* (-ոյ) «անոթ, աման, գույք. գործիք, միջոց նն», - արաբ. *šārif* (հզն. *šawārif*) «ծեր էգ ուղտ» > հյ. *շառաւն* «ուղտ», - սսոր. *keḫšā, keḫeš*, արաբ. *kabš*, ակկադ. *kabsu* «մատաղ խոյ» > հյ. *քաւշ* (-ի, -ից) «արու այծ», *քաւշէլ* «հարձակվել», ք) *հրանական* (հմմտ. *āv, ab/'b/af/af, aiw (?)*, *aḍv, av/'w/aoy, ap* > **աւ.** (**armān* >) մ.պ. *armān*, պ. *xurmā* > հյ. *արսաւ* (ն, ու), - հ.պ. *abigāva-/abijava-*, պրթ. *'bg'w* «աճ, հավելում», մ.պ. *aḫzūdan*, պ. *afzūdan* > հյ. *աւզուտ* (/օզուտ) (-ի), - (**afšarak* >) պ. *afšara* «պտղահոյտ, քամուր» > հյ. *աւշարակ*, - (**avtar / *avitara-*) ավ. *aiwitara-* > հյ. *աւտար* (/օտար) (ի-ա), - (**aḫdēn* >) մ.պ. *aḍvēn(ak)* > հյ. *աւրէն* (/օրէն) (ի-ա), - ավ. *bav-* «դառնակ», *baoyō* «ավելի երկար», սող. *β'w* «բավական», *β'wwny* «ավարտ» > հյ. *բաւ* «ծայր, սահման, ավարտ», - իրան. *naft*. ավ. *napta-* «թաց, խոնավ», պ. *naft* > հյ. *նաւթ* (ի, ն), - իրան. *taft*. ավ. *tapta-* «տաք», *tapta-* «տապ ունեցող, ջերմող», պ. *taft* «տապ, տոթ» > հյ. *տաւթ* (/տօթ)(ն) «տապ, ուժեղ տաքություն», գ) *հունական* (հմմտ. **օ, օ՛** > **աւ.** *λωδίκιον* > *լաւդիկ* (*լոդիկ*) «վերարկու», - *Ραῦλος* (< լատ. *Paulus* «փոքրիկ») > *Պաւղոս* (/Պօղոս), - *Φαῦτος* (< լատ. *Faustus* «երջանիկ») > *Փաւստոս*) փոխառություններում:

Բ) *Այ* երկբարբառակերպը հանդիպում է. ա) *սեմական* (հմմտ. **ā** > **այ.** սսոր. *estratīgā* (< հուն. *στρατηγός*) > հյ. *աստրատիգայ* «գորպուտ, ստրատեգ», - սսոր. *madrāsā* > հյ. *մդրիշայ* «երգ», - սսոր. *abilā* > հյ. *արեղայ* (-ի, -ից) և այլն), ք) *ուրարտական* (հմմտ. **iau** (?) > **այ.** *Diau(e)hi* > *Տայթ*), գ) *հրանական* (հմմտ. **ay/āy/'h/ āh** > **այ.** ավ. *vikaya-*, պրթ. *wg'h*, մ.պ. *vikāy*, պ. *guvāh* > հյ. *վկայ* (ի)), դ) *հունական* (հմմտ. **ի** > **այ** (հմմտ. *σὺλαβή* > *սիղդրայ* (-ի, -ից) «վանկ») փոխառություններում:

Գ) *Եւ* երկբարբառակերպը հանդիպում է. ա) *սեմական* (հմմտ. **eḫ** > **եւ.** սսոր. *təreḫ, tarḫā*, էրբ. *tereh, tārah* > հյ. *տերեւ* (-ոյ)), ք) *հրանական* (հմմտ. **aēv/ēv/yw** > **եւ.** ավ. *daēva-*, պրթ. *dyw* (*dēv*), մ.պ., պ. *dēv* > հյ. *դեւ* (ի-ա)), գ) *հունական* (հմմտ. **εὖ** > **եւ** (հմմտ. *Εὐγένιος* > *Եւգենիոս*)) փոխառություններում:

Դ) *Իւ* երկբարբառակերպը հանդիպում է. ա) *սեմական* (հմմտ. **i/ā** > **իւ.** արամ. (սսոր.) *ḫāšib* «կարծված, համարված, հաշվված», *ḫšāb*, էրբ. *ḫāšab*, արաբ. *ḫišāb* > հյ. *հաշիւ* (-ի)), ք) *հրանական* (հմմտ. **ēv/yw/iv/ew/i/e** > **իւ.** իրան. *bēvar* (**baivar-*). ավ. *baēvar-*, *bēvar*, (թուրք.) *bywar*, օս. *birā, berā, bewrā* > հյ. *բիւր* «տասը հազար. շատ», - իրան. *griv*. պրթ. *gryw* > հյ. *գրիւ* (ի-ա) (հացահատիկի մի չափ)), գ) *հունական* (հմմտ. **ի, օ, օ՛** [(**h**)ju], **օ** > **իւ.** *βήρυλλος* > *բիւրեղ* (ուշ *բերիւղ*), - *κοριακή* > *կիւրակէ* «տերունական (օր). կիրակի», - *ὄηλ* [hjule:] > *հիւղ(է)* (հիղեայ, հիւղայ) «նյութ», - *ὄπατος* > *հիւպատ(ոս)* (-ի, -ից) «կուսակալ», - *Κόριλλος* > *Կիւրիէլ*) փոխառություններում:

Ե) *Ոյ* երկբարբառակերպը հանդիպում է. ա) *սեմական* (հմմտ. **ū/u, au** > **ոյ.** սսոր. *yahmūrā*, էրբ. *yahmūr* (արաբ. *yahmur* «ցիռ») > հյ. *յաւնոյր* (-ի, -աց) «վայրի այծ, այծյամ», - սսոր. *zaugā* «գույգ. կրկնակ, նման» (< հուն. *ζεύγος* «լուծ. գույգ») > հյ. *զոյգ* (-ի, -ից, -աց)), ք) *կովկասյան* (հմմտ. **i,**

ia/wa (?) > **ոյ**. *c'ulu kiti* «փոքր մատ» > հյ. *ճկոյթ* (*ծկոյթ*),- վրաց. *zrina* «կովի աղմուկ», *zriali* «բազմաձայն աղմուկ», *zraxwa* «խոսք, զրույց» > հյ. *զրույց*), գ) *խեթական* (հմմտ. **սի/սս** > **ոյ**. *խեթ*. *հւյա-* «վազել», *հսսի-* «վազել, փախչել, մազապուրծ լինել» > հյ. *խոյս* (*խուսել, խույս տալ* «փախչել»), դ) *իրանական* (հմմտ. **օ/w**, **օծ/aoi/օյ**, **ao/wj/u** > **ոյ**. (***anōš**>) պրթ. *'nws̄yyn* «անուշ, քաղցր», մ.պ. *anōš* «նեկտար, անմահության ըմպելիք», պ. *nōš* «կենաց ջուր, անուշահամ բան. քաղցր ըմպելիք» > հյ. *անոյշ*,- (***rōd** >) ավ. *raoiđita* «կարմիր, կարմրավուն», մ.պ. *rōd*, *roi*, պ. *rōy* «անագ, պղինձ, արույր» > հյ. *արոյր* (-ի),- իրան. *bōž* (հ.-է. **bheug(h)*- «հեռացնել, մաքրել, փրկել»), ավ. *baog-* (*bunja-*), պրթ. *bwj* (*bōž*), մ.պ. (պազ.) *bōžišn* «փրկություն» > հյ. *բոյժ* «ղեղ»), ե) *հունական* (հմմտ. **օ** > **ոյ**. *'Epaτῶ* > *Էրասոյ*) փոխառություններում:

Մի կողմից բնիկ հայերեն բառերի՝ դրանց նախաձևերի և ցեղակից համարժեքների հետ, մյուս կողմից՝ փոխառությունների՝ փոխատու լեզվի ձևերի հետ ունեցած համապատասխանությունները հիմք են տալիս արձանագրելու, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ կարգի բառերում վերոհիշյալ հինգ երկբարբառակերպերն ունեն տարբեր համարժեքներ. ա) երկբարբառային (հմմտ. *աւղ* «կոշիկ» (< **eu-* «հագուստ կամ կոշիկ հագնել»). ավ. *aoθra-* «կոշիկ», լիտվ. *au-iù* «կոշիկ կրել», լեթթ. *au-ju*,- *տայգր* (< **daiyēr* «ամուսնու եղբայր»)). հոմ. հուն. *δᾱήρ*, հին վ. գերմ. *zeihhur*, լատ. *lēuir* (< *dēuir*), լիտվ. *dieveris*, լատիշ. *diēveris*,- հուն. *Paδλος* (< լատ. *Paulus* «փոքրիկ») > հյ. *Պաւղոս*. ասոր,- *zaugā* «գույգ. կրկնակ, նման» (< հուն. *ζεῖγος* «լուծ. գույգ») > հյ. *զոյգ* (-ի, -ից, -աց),- ավ. *vīkaya-*, մ.պ. *vikāy* > հյ. *վկայ* և այլն). բ) ձայնավորական (հմմտ. *սւար* «ցեխ, տիղմ, ճահճուտ» (< **mauri-/ *māuri-* «խոնավ. կեղտոտ հեղուկ. կեղտոտել»). հմմտ. հուն. *μῦρω* «հոսել, ողողել», լիտվ. *muras* «թաց և պարարտ խոտ, արոտ», *mūrti* «բուրբուրվին թրջվել»,- *առեւծ* (< **reug-*՝ **reu-* «ոռնալ, գոչել, մոնչալ»). հմմտ. լատ. *rūgio* «առյուծի մոնչալը», հալավ. *rūžq* «մոնչում եմ»,- ասոր. *abilā* > հյ. *արեղայ*,- մ.պ. *anōš* «նեկտար, անմահության ըմպելիք», պ. *nōš* «կենաց ջուր, անուշահամ բան. քաղցր ըմպելիք» > հյ. *անոյշ*,- հուն. *κοριακή* > *կիրակե* «տերունական (օր). կիրակի» և այլն). գ) «ձայնավոր + ձայնորդ (կիսաձայն)» (երկբարբառակերպային՝ ն) հաջորդականությամբ (հմմտ. *խեթ*. *հւյա-* «վազել», *հսսի-* «վազել, փախչել, մազապուրծ լինել» > հյ. *խոյս* (*խուսել, խույս տալ* «փախչել»),- օս. *bewrā* > հյ. *բիր* «տասը հազար. շատ»). դ) «երկձայնորդ» հաջորդականությամբ (հմմտ. իրան. *bywar* (թուրք.) > հյ. *բիր* «տասը հազար. շատ»). ե) «ձայնավոր + բաղաձայն» հաջորդականությամբ (հմմտ. *նսս* «նավ» (< **nāu-* «նավ»). ավ. *nava-*, հին պրսկ. *nāviyā* «նավատորմիդ», պիլ. *nāv*, լատ. *nāvis*,- ասոր. *ṭerep̄*, *ṭarpā*, եբր. *terep̄*, *tārāp̄* > հյ. *տերեւ* (-ոյ))³⁰:

³⁰ Հ.-է. նախաձևերի և ցեղակից համարժեքների հետ համապատասխանությունների օրինակափականությունը վաղուց հաստատված է պատմահամեմատական հնդեվրոպարանության մեջ (տե՛ս **А. Мейе**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 134-140, **А. Савченко**, Сравнительная грамматика индо-

Իհարկե, հին հայերենի վերոհիշյալ հինգ երկբարբառակերպերի հ.-ե. առնչությունները նշվածներով չեն սահմանափակվում, սակայն մյուս նախաձևերն այլևս երկբարբառներ չեն: Դրանք են՝ 1) «ձայնավոր + ձայնորդ»՝ **ēy, *ey, *oy, *on, *in, *ām *ij* (հմմտ. *աղբէր* (-իր) < **b^hrēur, արեւ* < **rey*- «կարմիր» արեւ). (հմմտ. սնակ. *ravi*- «արեգակ») *նեարդ* < **sneyrt*-, *աւձանեւ* < **o(n)g^h*-, *գհ-ւ-տ* < **ui(n)d*-, *ձիւն* < **ghijōm*, *աւձ* < **ang^hhi*- (հմմտ. հուն. *ἄβεις*, լատ. *anguis*, հին պրուս. *angis*, լիտվ. *angis*),- *աւր* «օր» < **āmōr* (հմմտ. հոմ. հուն. *ἡμαρ* (սեռ. *ἡματος*), *ἡμέρα*, *ἀμέρα* «օր»³¹ և այլն³², 2) «ձայնորդ + ձայնավոր»՝ **je, *jə, *jo* (հմմտ. *լեարդ* < **(l)iek^hrt*-, *կեանք* (-աց) < **g^hiə-nā*-, *աճ-իւն* < **a(z)gio*-(?) և այլն), 3) «ձայնավոր + բաղաձայն»՝ **āt, *at, *əb^h, *ēb^h, *ep, *ip, *et* (հմմտ. *մաւրու* «խորթ մայր, մայրացու» < **mātruyā*, *աղաւնի* < **aləb^hnijā*-, *եւթն* (եւաթն) < **septm*-, *յաւր-այ* «խորթ հայր, հորու» < **pətr*-, *հելր* (հիւր) < **setro*-, *արաւր* < **aratrom/*arətrom*, *շիւ* < **sk^hi-p*-, *կորիւն* < **gorēb^h-no*-, *եղբայր* < **b^hrāter*, *հայր* (-ւր) < **pətér*, *մայր* (-ւր) < **māter* և այլն) կաղապարներով հաջորդականություններ են, 4) հ.-ե. հիմք-լեզվում երկբարբառային արժեք չունեցող երկու ձայնավորի՝ **iu, *īu, *əi* (հմմտ. *տիւ* «ցերեկ» < **diu*-, *կռի* (?) < **g^heri-u*- ?, *կիւ* < **g^hīu*-, *կայծ* (?) < **g^hai-d-s* (?), *սայր* (-ի) < **kai-ri*, *մայթ* (?) < **mai-thi*- և այլն) կապակցություններ են 5) մեկ առանձին ձայնավոր են ներառյալ հ.-ե. շվան³³, կամ վանկարար

европейских языков, М., 1974, էջ 87-89, **О. Семереньи**, Введение в сравнительное языкознание, М., 1980, էջ 52-54, **К. Красухин**, Введение в индоевропейское языкознание, М., 2004, էջ 65-66, **А. Мейе**, Общеславянский язык, М., 1951, էջ 47-49, **Э. Бурьсе**, Основы романского языкознания, М., 1952, էջ 42-43, **Э. Прокош**, Сравнительная грамматика германских языков, М., 1954, էջ 92-93, **Г. Льюис и Х. Педерсен**, Краткая сравнительная грамматика кельтских языков, М., 1954, էջ 122-124, **Т. Барроу**, Санскрит, М., 1976, էջ 98-99, **С. Соколов**, Язык Авесты // Основы иранского языкознания (Древнеиранские языки), М., 1979, էջ 145,- **նույնի**՝ Древнеперсидский язык // նույն տեղում, էջ 242, **Г. Джаукян**, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 36 և այլն), ուստի այդ առումով լրացուցիչ քննության անհրաժեշտություն չենք տեսնում:

³¹ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. IV, էջ 616: Հմմտ. **Հ. Հյուբշման**, ՀՔ, էջ 426, **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 104:

³² Հայտնի է, որ առանձին համեմատարաններ (Ա. Մեյե, Բ. Պրոկոշ, Կ. Չրասուխին) հ.-ե. հիմք-լեզվում տարբերակել են նաև **on, *ol, *er* (տե՛ս **А. Мейе**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 134-140, **Э. Прокош**, Сравнительная грамматика германских языков, М., 1954, էջ 92,- **К. Г. Красухин**, Введение в индоевропейское языкознание, М., 2004, էջ 65-66), նույնիսկ **ai, *al* տիպի, այսինքն՝ հ.-ե. առաջին շվայի և որևէ ձայնորդի միացությամբ երկբարբառներ (տե՛ս **Э. Прокош**, նույն տեղը): Եթե մի կողմ թողնենք վերջին տիպի «հ.-ե. առաջին շվա + ձայնորդ» կաղապարով կազմությունները, որոնց երկբարբառային բնույթը հնդեվրոպաբանության մեջ լայն ճանաչում չունի, մյուս բոլոր կազմություններում առաջին բաղադրիչը միշտ հիմնական ձայնավորներից մեկն է՝ **a, *e, *o*, ապա հին հայերենը չի ունեցել հիմնական ձայնավորի և *r, l, n, m* ձայնորդների բաղադրությամբ երկբարբառներ (երկբարբառակերպեր):

³³ Հ.-ե. շվային վերագրվել են տարբեր հնչյունական արժեքներ. ըստ Ա. Մեյեի՝ եղել է ձայնորդ (հմմտ. «... **ə*-ն *ā*-ին կամ *ē*-ին հարաբերվում է այնպես, ինչպես ձայնավոր ձայնորդը երկբարբառին, ... և իրականում էլ ... **ə*-ն ոչ թե ձայնավոր է բուն նշանակությամբ, այլ ձայնորդ», **А. Мейе**, նշվ. աշխ., էջ 126), Բ. Պրոկոշը և Օ. Մեմերեյի համարել են «թույլ ձայնավոր» (տե՛ս **Э. Прокош**, նույն տեղը, **О. Семереньи**, նշվ. աշխ., էջ 50-51),

ձայնորդ՝ *ā, *o/(n/m), *u, *ū *ə, *ɔ, *j (հմմտ. *հա-ւ-տ* «հոտ, ոչխարների կամ ուրիշ կենդանիների խումբ» < *pā-d-?, *մաւրու-ք* < *smok-ru-, *ցայլ-ք* «աճուկ» < *skəlīi- «ծռել, ծուռ», *մայր* (բ. *մարել*) < *mərjō-?, *գայլ* (-ոյ) < *yľk^ho- և այլն), 6) անգամ «ձայնավոր + ձայնորդ + ձայնավոր» կադապարով եռաբաղադրիչ կազմությունն է՝ *eīā (հմմտ. *կեաւ* < *geiā(ə-) (?)), որոնց հնչյունափոխությունը հայերենում տվել է երկբարբառակերպ կամ երկբարբառ, ինչպես վերջին օրինակում: Ավելին, քանակական հարաբերակցության տեսանկյունից «հ.-ե. երկբարբառ > հյ. երկբարբառակերպ» տիպի անցումները փոքր թիվ են կազմում ընդհանուր համապատասխանություններում, հետևաբար քանակական չափորոշիչը հիմք ընդունելու դեպքում հնարավոր չէ հ.-ե. վերոհիշյալ երկբարբառները համարել հայերենի նշված երկբարբառակերպերի բուն նախաձևեր: Օրինակ. 1) հյ. *էւ* (eւ)-ի հ.-ե. 10 նախաձևային համարժեքներից միայն 3-ն են երկբարբառ՝ *eu կամ *ēu. 2) *աւ* (aւ)-ի 54 նախաձևային համարժեքներից միայն 16-ն են երկբարբառ՝ *au կամ *āu. 3) *իւ* (iւ)-ի 18 նախաձևային համարժեքներից երկբարբառ են միայն 2-ը՝ *ēu (հմմտ. *հիւծ-անեւ* «հյուծվել, մաշվել» < *sēug-? «տխուր, հիվանդ», *անիւ* < *snēu-). 4) թեպետև *ոյ* (oi)-ի 19 նախաձևային համարժեքների մեջ գերակշռում են *eu (11), *ōu, *ou (2) երկբարբառները (19-ից՝ 13-ը), բայց դրանց մեջ չկա ոչ մի *oi, որից օրինաչափորեն պիտի առաջանար հյ. *ոյ* (oi)-ը. հյ. *թոյլ* (-ոյ) (< *toljō-?) և *ն-շոյլ* (< *kʷoljō-) բառերի *ոյ* երկբարբառակերպը, ըստ ամենայնի, հ.-ե. *l և *j ձայնորդների հետագա՝ վաղ-հայերենյան կամ նախագրաբարյան փուլում տեղի ունեցած դրափոխության արդյունք է:

Վերոհիշյալ հանգամանքները, իհարկե, բավականին խճողված պատկեր են ստեղծում հին հայերենի *աւ* (aւ), *էւ* (eւ), *իւ* (iւ), *այ* (ai), *ոյ* (oi) երկբարբառակերպերի բուն նախաձևերը հաստատելու հարցում, սակայն, մեր կարծիքով, ցեղակից լեզուների համապատասխան ձևերի հետ դրանց ունեցած ծագումնաբանական առնչությունները բավարար հիմք են տալիս ասելու հետևյալը. 1) նշված հինգ երկբարբառակերպերն առաջին հերթին հ.-ե. երկբարբառային համակարգի ռեֆլեքսներն են հայերենում: Դա չի նշանակում, թե այդպիսի երկբարբառակերպեր չէին կարող առաջանալ նաև հ.-ե. այլ հնչույթների կամ հնչույթակապակցությունների՝ նախահայերենյան փուլում կրած հնչյունա-

Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը բնորոշել են իբրև «ոչ հնչույթաբանական գերկարձայնավոր», որն ի հայտ է գալիս լիարժեք ձայնավորի կրճատման տեղում (տե՛ս **Т. В. Гамкредидзе, Вяч. Вс. Иванов**, նշվ. աշխ., տ. I, 1984, էջ 161-162): Այսինքն՝ դարձյալ ձայնավոր է: Թ. Բարոուն ընդհանրապես մերժել է *ə-ի՝ որպես հ.-ե. երկար ձայնավորի թուլացման տեղում առաջացած գերկարձայնավորի՝ հ.-ե. առաջին շվայի վարկածը, որովհետև, նրա կարծիքով, նախ ճիշտ չի վերլուծվել նման ձայնավոր վերականգնելու համար հիմք ընդունված սանսկրիտի բառային կառուցվածքը, քանզի համադրվող ձևերում սանսկրիտի *i*-ն վերաբերում է ոչ թե արմատին, այլ ածանցին (հմմտ. *sth-itá* «կանգնած», այլ ոչ թե՛ *sthi-tá*), «գրոյական աստիճանում նախասկզբնական երկար ձայնավորներն ամբողջությամբ սղվում են» (**Т. Барроу**, նշվ. աշխ., էջ 100-102):

փոխությունների հետևանքով. 2) այդ երկրաբառակերպերը հայերենի՝ իբրև հ.-ե. բարբառի հնագույն բաղադրիչներից են, ինչպես պարզ հնչյութների գերակշիռ մեծամասնությունը:

ВАРДАН ПЕТРОСЯН – Древнеармянские дифтонгоиды, происходящие из индоевропейской дифтонгоидной системы (диахроническое и ахроническое исследование). – Попытки диахронического исследования дифтонгоидной системы древнеармянского языка в армяноведении носили эпизодический характер. При этом материалом исследования в основном становились дифтонгные образования, имеющие генеалогические связи с индоевропейской дифтонговой системой. В данном исследовании, во-первых, с диахронической точки зрения показаны генеалогические соотношения дифтонгоидов древнеармянского языка *աւ* (au), *եւ* (eu), *իւ* (iu), *այ* (ai), *ոյ* (oi) с дифтангоидными и не дифтангоидными праформами индоевропейского языка-основы, а затем с анахронической точки зрения, посредством типологических параллелей заимствований из индоевропейских и не индоевропейских языков, а также с применением статистического метода обосновано, почему именно данный индоевропейский дифтонг нужно считать основной праформой того или иного дифтонгоида армянского языка, несмотря на то что 1) иногда одному армянскому дифтонгоиду соответствует более одной дифтонгной праформы индоевропейского языка (ср. арм. *աւ* (au) < и.-е. *eu, *āu, арм. *ոյ* (oi) < и.-е. *eu, *ou), 2) в ряду индоевропейских праформ есть также недифтонгные сочетания (ср. арм. *եւ* (eu) < *ēu. *աղբեր* < *b^hrēu̯,- арм. *իւ* (iu) < и.-е. *ij. *ձիւն* < *ghijōm).

Ключевые слова: Г. Гюбшман, Х. Педерсен, дифтонгоид, дифтонгоидная праформа, не дифтонгоидная праформа, диахронический аспект, ахронический аспект

VARDAN PETROSYAN – Diachronic and Achronic Nature of Old Armenian Diphthongoids Deriving from IE Diphthongal System. - The attempts of diachronic examination of the diphthongal system of Old Armenian in Armenian Studies were of episodic nature. As a matter of fact, it was the diphthongal units, which were in some genealogical relation with the IE diphthongal system, that underwent examination.

The diachronic approach applied in the current research reveals the ancestral relation between the Old Armenian diphthongoids *աւ* (au), *եւ* (eu), *իւ* (iu), *այ* (ai), *ոյ* (oi) and the diphthongal and non-diphthongal prototypes of the IE base-language. Afterwards, the achronic approach, i.e. through typological parallels between the borrowings from IE and non-IE languages, as well as through the application of the statistical method, helps provide grounds to explain why a certain IE diphthong should be regarded as the main prototype of a given Armenian diphthongoid, regardless of the fact that

- a. sometimes a single Armenian diphthongoid corresponds to more than one IE diphthongal prototype (cf. Arm. *աւ* (au) < IE. *eu, *āu, Arm. *ոյ* (oi) < IE. *eu, *ou),
- b. there are also non-diphthongal units among IE prototypes (cf. Arm. *եւ* (eu) < *ēu. *աղբեր* < *b^hrēu̯,- Arm. *իւ* (iu) < IE. *ij. *ձիւն* < *ghijōm):

Key words: H. Hubshman, H. Pedersen diphthongoid prototype, non-diphthongal prototype, diachronic aspect, achronic aspect

ՕՐԵՆՔ ԵՎ ԿՐՈՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ «ԿԱՆՈՆԱԿԱՆ ԱԻՐԷՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՈՒՄ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Միջնադարյան հայ մատենագրության մեջ իրավական մտքին և օրենսդրությանը վերաբերող Դավիթ վարդապետ Ալավկա Որդու օրենքների մատյանը՝ «Կանոնական արևնսդրությունը», լեզվաբանական ուսումնասիրության հարուստ նյութ է պարունակում: Հատկապես արդիական է Դավթի կանոնագրքի բառապաշարի կրոնաիրավական դաշտի բառային միավորների քննությունը: Իրավունքին և հավատքին վերաբերող բառերի իմաստաձագումնաբանական հետազոտությունը բացահայտում է, որ այս եզրույթների զգալի մասը բնիկ է և կենսունակ հայերենի զարգացման հետագա բոլոր շրջաններում: «Կանոնական արևնսդրությունը» կազմելիս Դավիթ Ալավկա Որդին օգտվել է տարբեր աղբյուրներից, որոնցից առաջնայինը Աստվածաշունչ մատյանն է, ապա՝ դավանաբանական, փիլիսոփայական և պատմագիտական երկերը, ինչպես նաև բանահյուսական նյութերը, հնագույն հավատալիքներն ու նախապաշարմունքները:

Մեր այս ուսումնասիրության մեջ ըստ ծագումնաբանության վերլուծելով կրոնի և օրենքի իմաստային դաշտի հիմնական միավորները՝ առանձնացրել ենք հնդեվրոպական կազմությունները, որոնք մեծ թիվ են կազմում, ապա՝ փոխառությունները և հիբրիդ կառույցները: Իմաստային այս դաշտերի միավորների 46 %-ը բնիկ բառեր են, 25 %-ը՝ հիբրիդ (հնդեվրոպական արմատ կամ ածանց և փոխառյալ արմատ կամ ածանց զուգակցումներով), 20 %-ը՝ իրանական, 4-ական %-ը՝ հունական, ասորական և 1 %-ը՝ ասուր-ակկադական: Դավիթ վարդապետ Ալավկա Որդու կազմած օրենսգիրքը վկայում է, որ հայերենը 11-12-րդ դարերում արդեն ուներ հարուստ ու տարրորոնակ կրոնաիրավական բառապաշար:

Բանալի բառեր – *Դավիթ վարդապետ Ալավկա Որդի, «Կանոնական արևնսդրություն», բառապաշար, իրավունքի և կրոնի իմաստային դաշտեր, ստուգաբանություն, հնդեվրոպական արմատներ, փոխառություններ, հիբրիդային կազմություններ*

11-12-րդ դարերի հայոց մատենագրության մեջ նշանակալի և իր բնույթով առանձնահատուկ տեղ ունի Դավիթ վարդապետ Ալավկա Որդու մատյանը՝ «Կանոնական արևնսդրությունը»: Միջնադարյան մատենագրության մեջ իրավագիտակցությանը և օրենսդրությանը վերաբերող այս կարևորագույն երկը՝ Ալավկա Որդու կանոնագիրքը, լեզվաբանական տեսանկյունից ուսումնասիրության գրեթե չի ենթարկ-

վել: Այնինչ Ալավկա Որդին հայերենի մասնագիտական բառապաշարի և գործառական ռճերի կայացման ու հարստացման տեսանկյունից մեծ գործ է կատարել: Մեր այս քննության նպատակն է բացահայտել *օրենք, կրոն* նշանակող իմաստային դաշտերի այն բառերը, որոնք կիրառության մեջ է դրել Դավիթ Ալավկա Որդին՝ կազմելով իր «Կանոնական արևնսդրությունը»:

Մարդկանց փոխհարաբերությունների հնարավորինս անվտանգ կարգավորումը, աստիճանակարգության, կենսագործունեության ոլորտների սահմանումը բոլոր ժամանակներում եղել են հասարակության հիմնախնդիրներից մեկը, որի լուծման համար ստեղծվել է կրոնը՝ հավատալիքների և նախապաշարմունքների ամբողջությունը՝ օրենք-պատվիրանների իր նախնական ենթահամակարգերով: Իմաստային այս կարևոր դաշտերի բառերի ծագումնաբանության հետազոտումը թույլ է տալիս վեր հանել հայկական ինքնության կայացման հիմքերից մեկը՝ հայերի լեզվամտածողության մեջ հնդեվրոպական նախալեզվից եկող կրոնական և օրենսդրական պատկերացումների զարգացման ուղղությունները, ազդեցությունները: Մինչ «Կանոնական արևնսդրություն» բառապաշարի՝ մեզ հետաքրքրող իմաստային դաշտի միավորների քննությունը անդրադառնանք Դավիթ Ալավկա Որդու վերաբերյալ բանասիրական աղբյուրներին, որովհետև դրանք ուղղորդող նշանակություն ունեն լեզվական փաստերի գիտական դասակարգման և նկարագրության համար:

Դավիթ Ալավկա Որդու կյանքի և գործունեության մասին սուղ փաստեր են պահպանվել, դրանք ամփոփ հիշատակված են «**Մատենագիրք Հայոց**»-ի ԺԶ հատորում: Նրա ծննդյան և մահվան թվականները հստակ չեն: «Մատենագիրք Հայոց»-ում նշված է, որ ծնվել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գանձակ քաղաքում ենթադրաբար 1065 թվականին: Իսկ Ա. Աբրահամյանն իր «Դավիթ Ալավկա որդու կանոնները» ընդարձակ ուսումնասիրության մեջ կարծում է, որ Ալավկա Որդին ծնվել է 12-րդ դարի 70-80-ական թվականներին: Աներկբա է, որ նա եղել է բազմակողմանի կրթված, ուսյալ այր: Դավթի գործունեության հիմնական ուղղություններն էին աստվածաբանությունը և մանկավարժությունը, նա ունեցել է վարդապետի աստիճան: Ժամանակակիցների հիշատակությունները վկայում են, որ Ալավկա Որդին ազդեցիկ և հեղինակավոր գործիչ է եղել. «...Կիրակոս Գանձակեցին նրան անուանում է «սուրբ լուսաւորիչ», իսկ ուշ շրջանի մատենագիր Ազարիա վարդապետ Մասնեցին՝ «կանոնատառ սուրբ վարդապետն Դաւիթ»¹: Սուրբ վարդապետ Դավթի հեղինակության և ազդեցիկ լինելու մասին է վկայում այն փաստը, որ նրա միջնորդությամբ է Ամենայն Հայոց կաթողիկոսությունը համաձայնել, որ Աղվանից կաթողիկոսական գահին հաստատվի Գագիկ եպիսկոպոսը: Ինչպես նշեցինք, մահվան ստույգ թվա-

¹ Մատենագիրք Հայոց, ԺԶ հատոր, Եր., 2012, էջ 675:

կանը ևս վերականգնված չէ. Ա. Աբրահամյանը ենթադրում է, որ Դավիթ Ալավկա Որդին մահացած պետք է լինի 1139 թվականին, նա հերքում է Սամվել Անեցուց պահպանված այն տեղեկությունը, թե Դավիթը մահացել է Հովհաննես Իմաստասերի մահվանից մի տարի հետո՝ այսինքն՝ 1130 թվականին: Պատճառաբանությունը հիմնավոր է, քանզի Դավիթ Ալավկա Որդին Աղվանից կաթողիկոսի համար վերոնշյալ միջնորդությունը կատարել էր 1138 թվականին²:

«Կանոնական օրենսդրութիւն»-ը սկսվում է «Նախադրութիւն» կոչվող հատվածով, որին հաջորդում են ՌԷ (97) հոդվածները: Իրավունքների այս ժողովածուի գրման տարեթիվը 1138 թվականն է: Միջնադարյան տարբեր աղբյուրների վկայությամբ՝ մատյանն անմիջապես տարածում է գտել հայկական տարբեր գավառներում՝ դառնալով հասարակական-իրավական կյանքի կարգավորման ուղեցույց: Ալավկա Որդու մատյանը ձեռագրերում ունի նաև հետևյալ նախադուր. «Դավիթ վարդապետ Ալավկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմարս և պիտանացուս ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն ի քաղաքէն Գանձակայ»: Հենց այս մեջբերմամբ է Կիրակոս Գանձակեցին անդրադառնում այս կանոնագրքին: Դավիթ Վարդապետի ուսումնասիրողներից Կ. Կոստանյանը կասկածահարույց է համարում այս նախաբանի պատկանելությունը հեղինակի գրչին՝ ենթադրելով, թե դա Կիրակոս Գանձակեցու բարձր գնահատանքն է: Կ. Կոստանյանն իրավացիորեն նշում է. «Թուի թէ այս վերտառութիւնը Դավթի գրչից էլած չէ, որովհետև հազիւ թէ նա իրեն ներեր գրել «գեղեցկայարմարս և պիտանացուս» իւր կանոնների ճակատին. այդ համապատասխան չէր լինիր հին վարդապետների բնատրեալ համեստութեանը»³: Օրենագետ համեստ վարդապետի աշխատության բանասիրական քննությանը անդրադարձել են Ա. Աբրահամյանը, Կ. Կոստանյանը, Մ. Աբեղյանը, Մ. Չամչյանը: Օրենսգիրքը հիմնականում ուսումնասիրողների բարձր գնահատանքի է արժանացել, և միայն Մ. Չամչյանն է կարծել, թե հավաքված կանոնները «խառնիխուռն և անիմաստ բաներ են»⁴: Ի տարբերություն նրա՝ Մանուկ Աբեղյանը ընդգծում է այս աշխատության նորարարական, գիտական բնույթը հայ մատենագրության մեջ. «Իսկապէս որ այդ երկն իր տեսակով մի նոր բան է եղել մեր հին գրականության մեջ, և այդ նորն էլ ծնունդ է նոր մտավոր հոսանքի»⁵: Ալավկա Որդու մատյանի հրատարակության կարևոր գործը ստանձնել է Ա. Աբրահամյանը՝ իրեն հասու 17 ձեռագրերի հիման վրա:

² Տե՛ս Ա. Աբրահամյան, Դավիթ Ալավկաորդու «Կանոնները» (Ուսումնասիրություն և բնագիր), Էջմիածին, 1952 սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 49:

³ Կ. Կոստանյան, Դավթ վարդապետ Ալավկայ որդի, «Ազգագրական հանդես», ԺԵ գիրք, Թիֆլիս, 1907, էջ 63:

⁴ Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Եր., 1984, էջ 41:

⁵ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1939, էջ 85:

Դավիթն իր մատյանում համակարգում է միջնադարի այն հիմնական կանոնները, որոնք վերաբերում էին քաղաքացիական, ամուսնական և ընտանեական, ինչպես նաև քրեաիրավական հարաբերությունների բնագավառներին: Նրա աշխատության շնորհիվ մենք ծանոթանում ենք միջնադարյան հայ կենցաղին, մարդկանց վարք ու բարքին, այդ շրջանում տարածված հիմնական հանցատեսակներին և պատժամիջոցներին: Առանձին կանոններ կան, որոնք վերաբերում են քրիստոնեական եկեղեցու արարողակարգերին և տոներին, ընդամին՝ Դավիթ օրենսդիրը մանրամասն անդրադառնում է հեթանոսական հավատքի պահպանված բազմաթիվ իրողությունների, մասնավորապես՝ հմայությունների և տարաբնույթ կախարդությունների: Նրա կանոնագիրքը հարուստ նյութ է ընձեռում՝ ծանոթանալու միջնադարյան հայ կյանքի ինչպես առաջընթացին ու ձեռքբերումներին, այնպես էլ վարքի վատթար դրսևորումներին, տարածված արատներին: Պետական մակարդակով Դավթի կանոնադրությունը ընդունված չի եղել, սակայն փաստ է, որ այն զգալի տարածում և կիրառում է ունեցել համայնքներում, վանքապատկան տարբեր շենքերում:

«Կանոնական արեւնադրութիւնը» կազմելիս Դավիթ Ալավկա Որդին օգտվել է տարբեր աղբյուրներից, առաջնայինը Աստվածաշունչ մատյանն էր, ապա՝ 5-11-րդ դար ընկած ժամանակահատվածում գործող հայ կանոնական և սովորութական իրավունքի մատյանները, մեր մատենագիրների՝ հատկապես փիլիսոփաների և դավանաբանների երկերը, ինչպես նաև բանահյուսական հարուստ նյութերը, որտեղ արտացոլված էր ժողովրդական արժեհամակարգը՝ հնագույն հավատալիքներով ու նախապաշարմունքներով:

Օրենսգրքի լեզուն, ինչպես իրավացիորեն նշել է Դավթի կրտսեր ժամանակակիցներից Վարդան Արևելցին, «դիրահաս» է: Այն միջակա դիրք է գրավում գրաբարի և միջին հայերենի միջև, որը թույլ է տալիս բացահայտել մի գրական լեզվից մյուսին անցնելու ընթացքը: Լեզվի այդպիսի համաձուլվածքը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեպետ Ալավկա Որդին ապրել և գործունեություն է ծավալել միջնադարում, սակայն ստացել է հիմնավոր հոգևոր կրթություն, արժանացել վարդապետի կոչման, իսկ ուսումը և գիտությունը զարգանում էին հոգևոր կենտրոններում, վանական դպրոցներում և համալսարաններում, որտեղ իշխում էր ոսկեդենիկ մայրենին՝ հին հայերենը: Այս մատյանը, ինչպես նշեցինք, լեզվաոճական կառույցներով և բովանդակությամբ եզակի էր իր տեսակի մեջ, սակայն հարկ է նշել, որ միջնադարյան հայոց մատենագրության այլ նշանավոր դեմքերը ևս իրենց երկերում հաճախ են կիրառել օրենքին և կրոնին վերաբերող բառաշերտերի միավորները: Ասվածի վառ ապացույցն են Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Իմաստասեր Մարկավագի, Մխիթար Գոշի, Սմբատ Գունդստաբլի և այլոց աշխատությունները, որոնց շնոր-

հիվ ամբողջացել և հղկվել է հայերենի իրավական և կրոնական հարուստ բառապաշարը:

Այժմ անդրադառնանք մեր ուսումնասիրության առարկա *օրենքի և կրոնի* իմաստային դաշտերի բառապաշարի ծագումնաբանությանը: Դավիթ օրենսդրի ապրած ժամանակաշրջանում օրենքը և կրոնը չէին տարանջատվում, դրանք իշխանության ընդհանուր համակարգի բաղկացուցիչներ էին: Հր. Աճառյանի բնորոշմամբ՝ «Կրոնի և կրոնական իշխանության հետ կապված էր օրենքը, հակառակ արդի հասկացողության, ուր օրենքը և դատաստանը աշխարհականացած՝ քաղաքական իշխանության ձեռքն են անցել, այս բանը ցույց են տալիս լատ. *lex* «օրենք» և *jus* «իրավունք» բառերը, որոնց համագործընկերները վերայական հնդկերենում և զանդկերենում կրոնական անձանոթ բառեր են»⁶:

Ուսումնասիրելով Ալավկա Ռդդու օրենսգրքում վկայված իրավական և կրոնական դաշտերի բառային միավորները՝ տեսնում ենք, որ արմատների զգալի մասը բնիկ է, իսկ դրանցով կազմված կառույցները կենսունակ են հայերենի հետագա շրջաններում: Մեր առանձնացրած բնիկ բառերը հետևյալն են՝ *աղանդ, աղալթք, աղտեղեալ, ամենակալ, այրեցող, անասնագէտ, անէծք, անիծանել, անիծեալ, անիծիչ, անիրաւ, անխոտելի, անմեղ/անմեղություն, անյոյս/անյոյսություն, անսուրբ, աստուածածնություն, աստուածամարտ, աստուածային, արատաւոր, արարիչ/արարչություն, արբեցող, արբեցություն, արուագէտ/արուագհտություն, բարի, գինըմպուք, գինըմպություն, գող/գողություն, երդմնահար, երդնուլ, երդումն, երէց, երկնային, երկնաւոր, գատիկ, իրաւ, իրաւապէս, խաչ, խաչահան, խաչահանու, խափանել, խոտելի, ծնորադրություն, ծնորածություն, ծննդություն, ծունդր/ծուննդր, կաշառք, կեանք, կրօն, կրօնաւոր, հաղորդ, հաղորդել, հայր, հեզ, հերձուածող, հոգի, մատաղ, մատաղամիս, մատնել, մատնեալ, մատնողք, մարդասէր, մեղաւոր, մեղուցեալ, մեղսաքաւիչ, մեղք, մեռեալ, մկրտել, մկրտություն, մոլեցուցանել, մոլորություն, մոլություն, յայտնություն, յանցանք, յանցաւորություն, յարբեցություն, յարություն, յոյս, նախանձ, շնալ, շնացող, շնություն, ողորմություն, ողջախոհություն, որկրամոլություն, ուրանալ, ուրացություն, չար, չարագործ, պիղծ, պիղծեալ, պղծեալ, պղծել, սէր, սուրբ, սպանանել/սպանել, սպանանող, սպանեալ, սպանող, սպանություն, սպառնալ, սպառնալիք, սրբել, սրբությունն, վերաքաւություն, տաւն, տէր, տէրունեան, քաւեալ, քէն, քինախնդիր, օծել, օծեալ:*

Քննությունը սկսենք վերնագրի մաս կազմող **կրօն** բառից, որից բաղադրված **կրօնաւոր** բառը ևս հանդիպում է բնագրում: *Կրօնը* բացատրվում է որպէս «կարգ, կանոն, վարք, օրէնք, սովորություն, վարդապետություն, հաւատք»⁷: Ըստ Հր. Աճառյանի՝ այն կազմված է *կիր* (կրել) արմատից՝ *-օն* մասնիկով: *Կիր* բառի ծագման վերաբերյալ Հր. Աճառ-

⁶ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., 2013, էջ 19:

⁷ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Եր., 1926, էջ 685:

յանը տարբեր լեզվաբանների մի շարք վարկածներ է թվարկում, սակայն հստակ եզրակացության չի հանգում: Մենք ավելի հակված ենք Գ. Ջահուկյանի առաջարկած տարբերակին, ըստ որի՝ այն բնիկ հնդեվրոպական բառ է՝ հնիւ. *g^wer- «ծանր» արմատից⁸:

Ինչպես կրոնական բովանդակություն ունեցող այլ գործերում, այստեղ ևս առկա է **առնել-արարել** բայի կատարյալի հիմքից (*արար*) կազմված բառերով արտահայտված հակադրություն՝ **արարիչ-արարած**. «Այլ հեթանոսք ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութիւն բնական, ճանաչել զԱրարիչն եւ զարարածս, այլ դարձան պաշտեցին զարարածս եւ ոչ զԱրարիչն, որ է արհնեալ յաւիտեանս»⁹:

Այս երկու բառերի արմատը Հր. Աճառյանը բխեցնում է **առնել** բայից, որն ունի հետևյալ նշանակությունները՝ «անել, գործել, կատարել, ստեղծել, վերածել, շինել»¹⁰: Կատարյալի հիմքը *արար*-ն է, հրամայական ձևը՝ *արա*, որոնք ցույց են տալիս, թե բուն արմատը *ար*-ն է, որից՝ կրկնությամբ *արար*:

Նշենք, որ *Արարիչ* առհասարակ ընդունված է կոչել Աստծուն: Դավիթ Ալավկա Որդու մատյանի լեզվաոճական մի շատ կարևոր առանձնահատկությունն այն է, որ այստեղ մեծ թվով հոմանիշներ են վկայված: Հոմանշային ամենամեծ շարքերից մեկը վերաբերում է հենց **Աստուած** բառին. շարքում առկա է նաև դարձվածքային միավոր՝ **Տեառն Բարայելի**: Բերենք շարքն ամբողջությամբ՝ *Աստուած, Արարիչ, Ամենակալ, Ամենակարող, Տէր, Տեառն Բարայելի, Հայր, Հէզ, Մարդասէր*: Այս շարքին կարելի է ավելացնել նաև **Յիսուս Քրիստոսը**, քանի որ հայ առաքելական եկեղեցու վարդապետը չէր կարող այլ աստծո նկատի ունենալ:

Հոմանշային շարքը կազմող բառերի մեջ գերակշռում են բնիկ ծագում ունեցողները՝ **Աստուած, Արարիչ, Ամենակալ, Տէր, Հայր, Հէզ և Մարդասէր**. մյուսներին կանդրադառնանք հաջորդիվ՝ ըստ ծագման աղբյուրի:

Աստուած բառի ստուգաբանական պատմությունը բավականին հարուստ է. *Աստ* արմատը սկզբնապես համարվում էր իրանյան azda-ի իմաստային զարգացումը հայերենում, սակայն Գ. Ջահուկյանի իմաստաբանական և ծագումնաբանական հետազոտությունն ապացուցում է, որ *աստուած* բառը բարդություն է, որի երկու արմատներն էլ հայկական են. *աստ*-ը ծագում է «ամբություն, ուժ, գորություն» արմատի *աստիւ* տիպի մի ձևից և *ած* արմատից, որը հին հայերենում ուներ «բերել» իմաստը, այս արմատը հետագայում ձեռք է բերել ածանցային կիրառություն: Գ. Ջահուկյանի վերականգնմամբ, -*ած* ածանցը հնում ունեցել է ներգործական արժեք, ինչպես գթած (գթացող) և ողորմած (ողոր-

⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 407:

⁹ Մատենագիրք Հայոց, ԺԶ հատոր, էջ 680:

* Այսուհետ բնագրային հղումները կտրվեն շարադրանքում. մեր սկզբնաղբյուրն է՝ Մատենագիրք հայոց, ԺԶ հատոր, էջ 627-726:

¹⁰ Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 261:

մացող) ձևերում, ուստի *աստուած*-ը կարող էր նշանակել հաստող, ստեղծող, ըստ էության՝ ուժ և գորություն բերող: Ուշագրավ է Վ. Համբարձումյանի վերականգնումը, որը դարձյալ բառի հնդեվրոպական ծագումն է հաստատում, բայց Վ. Համբարձումյանն այն համարում է հնդեվրոպական դիցարանի գերագույն աստուծո անվան հայկական տարբերակ, որն իմաստային ընդլայնմամբ հասարակ անուն է դարձել: Ըստ այդմ՝ **աստուած** բառի հիմքում *Տուած* դիցանունն է, որը հնդեվրոպական ծագում ունեցող գերագույն ուժի («լույսի», հետագայում՝ «աստծո») անվան հետ է կապված¹¹: Հավելենք, որ այս բառի ձևիմաստային կառույցը բացատրում է վաղնջահայերենի բառակազմական հիմնական օրինաչափությունները:

Անցնենք հոմանշային շարքի հաջորդ բառին: Հր. Աճառյանը **տէր** բառի համար տալիս է այս բացատրությունը՝ «տէր, մեծ, իշխան, գլխատր, յատկապէս նաև՝ Աստուած»¹²: *Տէր*-ը՝ աստծու նշանակությամբ, վկայված է նաև մյուս բառարաններում:

Ծագում է ***տի-այր** ձևից, ավելի հինը՝ ***տէայր**, որ կազմված է **տէ-** և **այր** «մարդ» բառերից: *Տի* ձևից ունենք նաև *տիկին*, *տիեզերք* բառերը, որոնք հուշում են, որ այն նշանակում է «մեծ», սակայն ծագումը անձանոթ է: Գ. Ջահուկյանը *տի-* ձևի համար տալիս է չորս ստուգաբանական բացատրություն, որոնցից ոչ մեկը չի համապատասխանում այս բառի նշանակությանը¹³:

Այր բառը Հր. Աճառյանի բառարանում տրված է երեք անգամ՝ հետևյալ նշանակություններով՝

1. «արու մարդ»,
2. «մարդ»,
3. «քարայր, մաղարա, աներակ տեղեր»:

Հետաքրքիր է, որ *տուն*, *յառնէ*, *արամբ* և մյուս հոլովական ձևերը Հր. Աճառյանը տալիս է «արու մարդ» նշանակությամբ, սակայն **Տէր** բառի դեպքում, որի սեռական հոլովը *տէտուն* է, նա հղում է տալիս *այր*, այսինքն՝ «մարդ» ընդհանուր գաղափարին:

Բնիկ բառ է նաև գրվածքում **տէր** բառից կազմված **տերունեան** ձևը, որը վկայված է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետ՝ ՆՀԲ) և «Հայերեն բացատրական բառարան»¹⁴ աղբյուրներում: Առաջինում բառի դիմաց հղում է տրված *Տէրունական* բառին: Մյուս բառարաններում բառը տրված է **տերունի** ձևով, ընդ որում՝ «Միջին հայերենի բառարան»-ում այն ունի միայն *կիրակի* նշանակությունը, Դավթի կանոնագրքում այս իմաստը վկայված չէ. **տերունեան** ձևն ունի *աստվածային*

¹¹ Առավել մանրամասն տե՛ս Ն. Գիլբարյան, Կրոնի և հավատալիքների իմաստային դաշտին պատկանող բառերը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի գրաբար բնագրում// Հայագիտության հարցեր, 2021, №1, Եր., էջ 209:

¹² Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 401:

¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 728:

¹⁴ Սո. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944-1945:

նշանակությունը. «Չի թէ առ հնովն եւ արինական այսպէս ունէր վասն անբան պատարագացն, եւ զամենեին առանց մատուցանել ի սեղանն, ապա այս սեղան, որ վերընկալ է **տէրունեան** մարմնոյն, ոչ կամի զարատաւորն մատուցանել յանճառ խորհուրդն» (էջ 691): Նշենք նաև, որ **տէրունեան**-ը **տէրունի** բառի հնագույն սեռական հոլովի ձևն է *եան* հոլովիչով: Այս *եան*-ը հիմնականում կիրառվում է հայկական ազգանուններ կազմելիս:

Վերադառնանք հումանշային շարքին. հաջորդը **Հայր** բառն է, որը առաջանում է հնիւ. ***pətér** ձևից (սեռ. հօր <հար< հնիւ. ***patrós**): Համատեքստում առաջին իսկ հայացքից ակնհայտ է, որ այն գործածված է *Աստված* նշանակությամբ, գրված է մեծատառ. «Քանզի Աստուած բարի է եւ ամենայն տուրք բարիք եւ պարգեւք կատարեալք ի բարերար **Հայրէն** իջեալ առ իւր արարածս» (էջ 679):

Շարքում վերջին երկու բառերը՝ *Հեզ*, *Մարդասէր*, կարծես միայն Աստծոն չվերաբերող ածականներ են, սակայն մեր բնագրում ածական համարվող այս բառերը ստացել են անձնանիշ գոյականի իմաստ՝ վերագրվելով Հիսուս Քրիստոսին. «Եւ եթէ խնդրէ ի նմանէ ծառայութեան պատիւ եւ փառս եւ նա ոչ կարէ հատուցանել, կամ պակասեցուցանէ ի պատուոյ նորա, կամ զընդդէմն գործէ եւ փոխանակ տուրս տալոյ, զրկէ եւ նա յիսացեալ հրապարակէ զխոստովանութիւնն, ոչ է աշակերտ **Հեզին** եւ **Մարդասիրին**, որ աղաթս առնէր ի վերայ խաչահանուացն» (էջ 703):

Հիսուս Քրիստոսի *Մարդասէր* անվանումը սկզբունքային նշանակություն ունի. մարդասիրությունը քրիստոնեական կրոնի գլխավոր արժեքանական հիմքն է, բառանունը հաստատուն տեղ է գտել բնիկ բառերի շարքում, քանի որ ն՝ **մարդ** (հնիւ. ***mr-tó**-ձևից), ն՝ **սէր** (բնիկ հնդեվրոպական՝ ***k'ēi-ro-**՝ ***k'ēi-** «պառկել» արմատից) բառերը հայերենին են անցել հնդեվրոպական նախալեզվից:

Հետաքրքիր է, որ Հիսուս Քրիստոսը ներկայացվել է որպես **զՈրդի Մարդոյ**, թեև քրիստոնեական միաբնակության ընկալմամբ ընդունված է Քրիստոսին համարել Աստծո որդի: 714-րդ էջում Դավիթը գրում է. «...վասն այնորիկ ի նոյն տաւնին մեծի առաջին մարտիրոսն Ստեփանոս, ի բանալ երկնից **զՈրդի Մարդոյ** տեսանէր ընդ աջմէ Աստուծոյ, ուստի եւ զորդեգրութիւնն ընկալաւ...»:

Ե՛վ *մարդ*, ն՝ *որդի* (հնդեվրոպական ***portuo-** ***per-** «ծնել» արմատից) բառերը բնիկ ծագման են: Հումանշային այս մեծ շարքի քննությունը ավարտենք «**Տեսոն Աստուծոյ Ամենակալի**» (էջ 697) եռաբաղադրիչ կապակցությամբ, որը, խտացնելով Աստծուն վերագրվող հիմնական որակները, վերածվում է անվանման կատարյալ տարբերակի:

Բնագրում ունենք **տէրունական տաւնք** բառակապակցությունը: Յուրաքանչյուր կրոն ունի իրեն բնորոշ տոները: Քրիստոնեությունը իր տոների որոշ մասը ժառանգել է հեթանոսությունից՝ դրանց տալով քրիստոնեական նշանակություն: **Տաւն**-ը բնիկ հայ բառ է հնիւ. ***dapni-**

ձևից, որ նշանակում էր «գոհ»: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ բառը կարող է *տալ* և *տուրք* բառերի արմատը լինել¹⁵: Դավիթ Ալավկա Որդին անդրադառնում է քրիստոնեական տոների մեծ մասին: Դրանցից բնիկ են **յարութեան** (հնդեվրոպական ***ar-** «հարմարեցնել» արմատից) տոնը, որը այլ կերպ կոչվում է **գատիկ**: Հր. Աճառյանը *գատիկ* բառը բացատրում է որպես «զենումն. գոհ»: Նա բերում է բառի ծագման վերաբերյալ մի շարք վարկածներ, որոնցից մենք առավել հակված ենք հետևյալին. «Տերվ. Նախալ. 80 գանել, զենուլ, պրս. zadan, պրս. jan, սանս. han ձևերի հետ՝ հնիս. gha, ghan «զարնել, վիրաւորել» արմատից. ըստ այսմ գատիկ բուն նշանակում է «զենումն»¹⁶:

Տոնանունների մեջ բնիկ են նաև **յայտնութիւն**-ը և **խաչ**-ը: *Յայտնութիւն* բառի արմատի (*յայտ*) ծագման վերաբերյալ կասկածներ չկան, այն ընդունված է համարել բնիկ հնդեվրոպական բառ՝ ***ai-d-**՝ ***ai-** «այրել, լուսավորել» արմատից՝ զանազան աճականներով¹⁷: Ալավկա Որդին տոների մասին խոսում է հիմնականում **ԶԹ**, **Ղ** գլուխներում:

Քրիստոնեական գլխավոր խորհրդանիշ **խաչը** ևս պատկանում է բնիկ բառերի շարքին (հնիս. ***khet-** «փայտ» արմատից)¹⁸: Իսկ խաչի՝ քրիստոնեական խորհրդանիշ դառնալը Քրիստոսի խաչելության հետևանքն է, բայց նշենք, որ խաչերի տարբեր տեսակները դեռևս վաղնջական հնդեվրոպական ժամանակներում պաշտամունքի խորհրդանիշ են եղել: Տոների ցանկում Ալավկա Որդին խոսում է նաև **խաչի** մասին: Տոնը այժմ հայտնի է *խաչվերաց* անվամբ, այս ձևը բնագրում վկայված չէ: Դավիթն իր շարադրանքում *խաչ* բառը ոչ միայն խորհրդանիշ, առարկա (խաչափայտ), այլև տոն իմաստով է գործածել. «*Բայց յարդազս չճաշակելոյ ի մտոյ յայս Գ (3) տաւնս, այս է՝ ճրագարուցին եւ վարդավառին եւ խաչին, որ ոչ հաղորդիմք ի մտոյ, բայց ի վաղին, որ է յայտնութեան աւր, եւ յարութեան եւ վարդավառին*» (էջ 695):

«...Քրիստոս զմեզ ազատեաց ի կապանաց մահու եւ մեղաց եւ չար-չարողացն իւր ի վերայ **խաչին** առնէր...» (էջ 694):

«*Իսկ եթէ զերդումնն ոչ պարզաբար ի **խաչ** եւ յեկեղեցի, բանիւ կամ ձեռն դնելով, այլ...*» (որպես քրիստոնեության խորհրդանիշ) (էջ 696):

Այս բառից ունենք **խաչահանունք**, **խաչահանունս** և **խաչահանուաց** հոգնակի ուղիղ և թեք հոլովածները: Առաջին երկու բառերի դեպքում հոգնակի վերջավորության ձևը հուշում է, որ եզակի ուղիղ ձևը *խաչահանն* է, իսկ երրորդ բառի դեպքում *խաչահանու*-ն: Փաստորեն երկու ձևերն էլ հավասարաչափ գործածություն են ունեցել: Բառերի երկրորդ արմատի (*հան*) ծագումնաբանության վերաբերյալ առավել ընդունված է բնիկ տարբերակը:

Արդեն նշեցինք, որ *կրոնի* և *օրենքի* իմաստային դաշտերը միջնա-

¹⁵ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, էջ 442:

¹⁶ Նույն տեղում, էջ 82:

¹⁷ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 547:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 317:

դարում չունեին հստակ սահմանագիծ: Դավիթ օրենսդիրն իր մատյանում մանրամասն անդրադարձել է մարդկային մեղքերին և առաքինություններին: Նման բառերի դեպքում դժվար է որոշել, թե իմաստային որ դաշտում դրանք կարող ենք ընդգրկել, քանի որ մեղքերը և հանցանքները, օրինակ, հավասարապես անընդունելի և պատժելի են թե՛ եկեղեցու կողմից, թե՛ դատարանի: Նման բառեր պարունակող իմաստաբանական ենթախմբերը պայմանականորեն կարելի է անվանել **մեղք և մեղսակրություն** եզրույթներով: Այս խմբերի մեջ մտնող բնիկ բառերից Դավթի մատյանում վկայված են *այրեցող, անասնագետ, անէծք, անիծանել, անիծեալ, անիծիչ, արբեցող, արբեցություն, արուագետ, արուագիտություն, գինըմպուք, գինըմպություն, գող, գողություն, երդմնահարք, խափանել, մատնեալ, մատնել, մատնողք, մեղաւոր, մեղուցեալ, մեղսաքաւիչ, մեղք, մոլեցուցանել, մոլորություն, մոլություն, յանցանք, յանցաւորություն, յարբեցություն, նախանձ, շնալ, շնացող, շնություն, որկրամոլություն, ուրանալ, ուրացություն, չար, չարագործ, պիղծ, պիղծեալ/պղծեալ, պղծել, սպանանել/սպանել, սպանանող, սպանեալ, սպանողք, սպանություն, սպառնալ, սպառնալիք, քէն, քինախնդիր* հիմնաբառերը: Ստորև անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Բնիկ բառերի շարքում *մեղք* (հնիւ. **mel-** «սխալիլ, խաբել» արմատից) և *յանցանք* հոմանշային գույգը լայն կիրառություն ունի Դավթի օրենսգրքում: Դրան զուգահեռ ունենք նաև *մեղաւոր* և *մեղական* հոմանշային գույգը: Այդ արմատներից կազմված մյուս բառերը թվարկել ենք վերևում:

Որկրամոլությունը Աստվածաշնչում յոթ մահացու մեղքերից մեկն է համարվում. այս բառի երկու արմատները հայերենին են անցել հնդեվրոպական նախալեզվից՝ *որկոր* (հնիւ. ***g^oor-** **g^oor-** կրկնականից. հնիւ. ***ger-** արմատի զարգացումը տրված է կեր և կոկորդ բառերով) և *մոլ* (հնիւ. ***mol-** արմատից): Մյուս վեց մահացու մեղքերից մեկը նշանակող բառը՝ *ագահությունը* խառնանդամ է. այն կքննենք ավելի ուշ: *Նախանձ* և *ծուլություն* բառերի արմատների ծագումը անհայտ է, թեև Գ. Ջահուկյանը *նախանձ* բառի դեպքում հնարավոր է համարում կապը *խանդ* բառի հետ, որը բնիկ ծագում ունի¹⁹, իսկ մնացյալը՝ *բարկություն, բղջախոտություն, հպարտություն*, բնագրում վկայված չեն: *Բղջախոտութեանը* հակառակ՝ վկայված է **ողջախոտություն** բառը, որն արդեն քրիստոնեական յոթ առաքինություններից մեկն է: Այն կազմված է *ողջ* և *խոտ* արմատներից: Առաջինը բնիկ հայ. բառ է՝ կազմված՝ **ջ** մասնիկով պարզական ***ոդ** արմատից, որ ***ոյդ** ձևի միջնորդությամբ գալիս է հնիւ. ***olyo-** ձևից²⁰: Երկրորդ արմատի վերաբերյալ կան տարբեր վարկածներ. Գ. Ջահուկյանը նշում է, որ այն հավանաբար փոխառություն է իրանական լեզուներից, սակայն Հր. Աճառյանը բերում է Հ. Պեղերսենի

¹⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 560:

²⁰ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 558:

վարկածը, ըստ որի՝ բառը գուգորդվում է հայերեն **խրատ** բառի հետ և բխեցվում հնիս. շրջյալ ***qhortu** արմատից²¹: Մենք հակված ենք այս ստուգաբանությանը, այդ իսկ պատճառով *ողջախոսությունը* ընդգրկում ենք բնիկ բառերի շարքում: Քրիստոնեական յոթ առաքինություններից բնագրում վկայված են նաև **սէրը**, **յոյսը** և **հաւատը**, որոնցից բնիկ բառերի շարքը համալրում են միայն առաջին երկուսը:

Յոյս արմատը վկայված է *անյուս* և *անյուսություն* բառերի կազմում. Դավիթ Ալավկա Որդին **ԼԷ (37)** գլուխը վերնագրել է «Վասն **անյուսից բռնատրաց** որ գայցեն, եւ ես առ հարկի շնորհուկս արարի»: Ընդգծված բառակապակցությունը թույլ է տալիս կարծել, որ *յոյս* բառը ժխտական ածանցով ձեռք է բերել սաստկական նշանակություն՝ խորացնելով *բռնավոր* բառի խիստ բացասական իմաստը: Բացի այդ՝ 713-րդ էջում հանդիպում ենք հետևյալ մտքին. «*Ապա թէ ոչ, հեթանոսական անյուսութեան կցորդ է, ի սուրբ խորհրդոյն մի՛ գատցի*». սա թույլ է տալիս ենթադրել, որ Դավիթը մարդու մեջ հույսի բացակայությունը համարում է հեթանոսության բացասական ազդեցության հետևանք:

Հ. Պեղերսենը կարծում է, որ բառի արմատը *niu-*ն է՝ *niu-անիլ* բառից: Գ. Ջահուկյանը այն բխեցնում է հնդեվրոպական ***peu-k-**, ***peu-** «հուսալ» արմատից²²: Մենք վստահելի ենք համարում հայ լեզվաբանի վերականգնումը:

Անդրադառնանք **անէծք** բառին, որը բնիկ հնդեվրոպական ***oneid-s-** ***(o)neid** «նախատել, հանդիմանել» արմատից է²³: **Անէծք**-ը բառային գործողության անվանումն է, սակայն բոլոր ժամանակներում, հատկապես միջնադարում այն ծանրագույն պատիժ էր համարվում: Բերենք համապատասխան բնագրային օրինակ. «*Իսկ էթէ սովորութեամբ անհոգացեալ ընդ անիծաւքն՝ որոշեցցի ի սուրբ խորհրդոյն եւ այլ մի՛ հաղորդեցցի*»: Այս գործողությունը բացասական էներգիայի ուղղորդման ծիսական հնագույն դրսևորում է. նշենք, որ Ալավկա Որդին գործածել է **անէծք**-ը և նրա գործիականի ձևը՝ **անիծիւք**-ը, որպես դատավճիռ. «...որ յԱստուծոյ անարգեաց, այնպիսին ընդ **անիծիւք է**» (էջ 690): Ինչպես ակնհայտ է բնագրային մեջբերումներից, Դավթի լեզվում առկա են միջինհայերենյան հոլովական գուգաձևությունները, որոնք գրաբարի հոլովման համակարգի կտրուկ փոփոխման ապացույցն են:

Ինչպես **անէծք** և **ծունդր** բառերի օրինակով ենք տեսնում, միջին հայերենին բնորոշ անկանոնությունները միայն գործիական հոլովի դեպքում չէ, որ արտահայտված են, այլ նաև սեռական հոլովի կազմության տարբերակներում: Բնութագրական է **հոգի** բառի հարացույցը: Բնագրում բառը սեռական հոլովով հանդիպում է երկու ձևով՝ **հոգոյն** և **հոգոյն**: Գրաբարում օրինաչափ և կիրառելի էր երկրորդ տարբերակը,

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 409:

²² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 554:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 56:

որը **ի**-ով վերջացող բազմավանկ բառերի **ի+ո=ւոյ** հնչյունափոխության հետևանք էր, ինչպես **գինի>գինոյ, եկեղեցի>եկեղեցոյ** ն: Միջին հայերենում բառավերջի **ի**-ն արդեն չէր հնչյունափոխվում, այլ ընկնում էր՝ **գինի>գինոյ, եկեղեցի>եկեղեցոյ**: Բերենք բնագրային համապատասխան օրինակներ. «...նոյնպէս ընտրեաց զուտելի եւ զանուտելի կերակուրն՝ նշանակ տուեալ նմա իմաստութեան **հոգւոյն**, զի ետես զազանս շաղաղակերս թէ անուտելի են», «Այլ կերակրեա եւ որ ընդ թեզ են ձեռն տուր եւ աննախանձաբար սփռել ի նոսա զշնորհս **Հոգոյն Սրբոյ**...» (էջ 693):

Այս բառի հոլովման գրաբարյան և միջինհայերենյան ձևերի մրցակցությունն ակնհայտ է ոչ միայն սեռական, այլև գործիական հոլովների պարագայում. «Այլ կոչեցեալքն ի քահանայութիւն ամենեւին սուրբ լիցին **հոգով** եւ մարմնով (էջ 691): «Նա մկրտե եւ լուսավորե **հոգւովն սրբով**» (էջ 711):

Եկեղեցական-կրոնական արարողություններն ունեն հստակ կարգ: Սովորաբար ընդունված է աղոթել, ապաշխարել ծնկած, կամ ինչպես բնորոշում է Ալավկա Ռոդին՝ *ծնորի/ծնորա*: Հետաքրքիր է, որ այս երկու ձևերը նա գործածել է իրար հաջորդող նախադասություններում: Մա նշանակում է, որ երկուսն էլ հավասարաթեք տարածված ձևեր են եղել ժողովրդական լեզվում. «Ապա թէ կերեալ իցեն, քահանայն հանդերձ ընտանաւք **Ը (8)** աւր արտաքոյ կացցէ ի սուրբ խորհրդոյն կարդածութեամբ, իսկ այլ ժողովրդականք հինգ աւր, յաւուր **Ճ (100) ծնորի** ապաշխարեցեն»: **9** «Բսկ եթէ որ գիտաց եւ անփոյտ արար աներկէրութեամբ, **Խ (40)** աւր պահեսցէ **Ճ (100) ծնորա**» (էջ 681):

Հատկանշական է նաև հետևյալը. *ծնորի/ծնորա* ձևերից ենթադրվում է, որ բառի ուղիղ ձևը *ծունոր*-ն է, սակայն գրաբարի բառարաններում վկայված են միայն *ծունկ* և *ծունր* ձևերը: Իսկ «Միջին հայերենի բառարան»-ում *ծունր ածել* և *ծունր դնել* հարադրությունների կողքին արդեն առկա են *ծունոր ածել*, *ծունոր դնել* ձևերը²⁴: Փաստորեն *ծունոր*-ը միջինհայերենյան ձև է. Գ. Ջահուկյանն իր ստուգաբանական բառարանում *ծունր* բառի կողքին՝ փակագծում, նշում է. «ուշ՝ *ծունոր*»²⁵: Այսինքն՝ առկա է **ն**-ից հետո **դ** հնչյունի հավելում համաբանությամբ՝ *մանր/մանոր, ծանր/ծանոր*:

Այս արմատից «Կանոնական օրենսդրութեան» մեջ ունենք երեք նորակազմություն, որոնք նույնպես բնիկ են: Խոսքը *ծնորածութիւն*, *ծնորադրութիւն* և *ծննորութիւն* բառերի մասին է: ՆՃԲ-ում վկայված է *ծնրադրութիւն* ձևը, Ստ. Մալխասյանցի և Էդ. Աղայանի բառարաններում համապատասխանաբար՝ *ծնրադրութիւն / ծունրադրութիւն* և *ծնրադրություն / ծունրադրություն* տարբերակները: Այնպես որ *ծնորադրութիւնը* կարող ենք համարել նորակազմություն:

Ծնորածութիւն-ը կազմված է **ծունր/ծունոր** հնդեվրոպական

²⁴ Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, Եր., 1987, էջ 350:

²⁵ **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 368:

*g'onu-r- *g'enu- հիմքից և ած՝ հնիս. ag- արմատից, իսկ *ծնդրադրությունը՝ ծունր/ծունդր* և *դր/դիր* (հնդեվրոպական *dhē-n- *dhē- «դնել» նախաձևն է) բաղադրիչներից, որոնք ունեն բնիկ ծագում:

Հովովական գուգաձևություններով աչքի է ընկնում նաև **կարգ** բառը, որի ծագումը անհայտ է: Բերենք բնագրային օրինակներ. «*Ապա թէ ի բաշխելն ծանիցի կատարեսցէ գպատարագն եւ ինքն մի արտաքոյ կացցէ սրբութեան անխափան նովին կարգով:*»

Ապա թէ գիտութեամբ մատոյց, ի կարգէն լուծցի եւ ապաշխարեսցէ այնու կարգաւ, որպէս կանոն հրամայեն» (Էջ 688):

Կրոնական պատկերացումները, նախապաշարմունքները և օրենքները, որպէս կանոն, նպատակ ունեն մարդկանց ոչ միայն տարանջատելու, այլև միավորելու: Քրիստոնեությունն իր պատվիրանների և բարոյահոգեբանական արժեքների համակարգով եկավ փոխարինելու հեթանոսական բազմաստվածությանը, այս իսկ պատճառով կրոնի և օրենքի իմաստային դաշտում բնիկ բառերի հետ մեկտեղ ունենք համագործածական փոխառություններ: Քննենք Դավիթ օրենսդրի կիրառած փոխառյալ կազմությունները:

Ա. Իրանական փոխառություններ.

*ախտ, անաւրէն, անհաւատ, անպարտ, անվնաս, աշակերտ, աշխարհականաւրէն, աշխարհական, աւագան, աւետարան, արէնք, գրաւ, դատ, դատաստան, դէւ, դժոխք, դիւական, դրախտ, զենում, ժամ, ժամանոց, խոստովանական, կախարդ, կոյս, *հաւատ, *հաւատացեալ, հմայք, հրէշտակ, հրէշտակական, մահ, մահապարտ, մարգարէ, մարգարէական, մեհեան, նաւակատիք, նզովք, նշխար, ուխտ, պահպանական, պահք, պատարագ, պատիժ, պատուիրան, պարտական, սանդարամետական, սեղան, վարդապետ, վարդապետական, վնաս, տաճար, փառք:*

Բ. Հունական փոխառություններ.

բեւ, դիւթ, եպիսկոպոս, կանոն, մարտիրոս, պենդեկոստէ, սնդիկնոս, Քրիստոս:

Գ. Ասորական փոխառություններ.

արեղայ, Բելիար, փրկանք, սերոբէ, սատանայ, հեթանոս, մծղնայ, քարոզ, քահանայ:

Դ. Ասուրական կաղական փոխառություններ.

անկնունք, կնիք, կնունք:

Նախորդիվ արդէն անդրադարձել ենք քրիստոնեական առաքիչություններից երեքին՝ *յոյս, սէր, ողջախոհություն*: Առաքինություններից մեկը՝ *հաւատը*, իրանական ծագում ունի, թէև լեզվաբանները միանգամից չեն եկել այս եզրահանգման: Սերովբէ Տերվիշյանը հղում է տալիս *հաւան* բառին, իսկ Ղևոնդ Ալիշանը ենթադրում էր, որ բառը կարող է ծագած լինել *սկիզբ* նշանակող *հաւ* արմատից²⁶:

²⁶ Տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնները, Եր., 2021, էջ 17:

Գևորգ Ջահուկյանը *հաւատ* բառը նախապես դիտարկել է որպես բնիկ հնդեվրոպական ***hau- *au-** «զգալ, հասկանալ» արմատից կազմված, սակայն հետագայում հանգել բառի իրանական աղբյուրից ծագման վարկածին՝ ***fravat**: Մենք վերապահումով նշել ենք որպես իրանյան ծագման բառ, սակայն առավել հավանական ենք համարում բնիկ ծագումը՝ ելնելով ն՝ հնչյունական կազմից, ն՝ իմաստաբանական բաղադրիչից:

Բնագրում բազմիցս հանդիպում են պաշտամունքավայրեր նշանակող բառեր, ինչպիսիք են՝ *տաճար, մեհեան, եկեղեցի*: Առաջին երկուսը իրանյան փոխառություններ են: *Տաճարը* ծագել է հին պարսկերեն **tačara** ձևից, որը նախապես ունեցել է «պալատ, ապարանք», ինչպես նաև «ձմեռանոց, շտեմարան» իմաստները: Բառը հայերենում բազմիմաստ է. բերենք բառի բացատրությունները Մտ. Մալխասյանցի բառարանից՝

1. Ապարանք, շքեղ բնակարան (թագաւորների, իշխանների):
2. Տան մեջ զարդարուն սենեակ ճաշկերոյթների համար, սեղանատուն:
3. (Կրօն.) Տուն աստծու, եկեղեցի:
4. Յատկապէս՝ Սողոմոնի շինած տաճարը Երուսաղէմում:
5. (Կրօն.) Հեթանոսական աստուածների տուն, կոստուն:
6. (Գուցէ կրակի տուն՝ ատրուշանի նշանակութիւնից մնացած) թոնիր:
7. Վանը, հիւրանոց. անկելանոց: Հարուստ եւ առատաբաշխ տուն:
8. Մեղան, կուշունք, խրախճան:
9. Նման. (կրօն.) Մարմինը՝ իբրեւ բնակարան Հոգու:
10. (կրօն.) Մարիամ Աստուածածինը, որ իր արգանդում կրեց Քրիստոսին:

Քրիստոսին:

Այսպիսի բազմիմաստ բառերի նշանակությունը հստակ որոշելու համար անհրաժեշտ է դրանք ճշտել կիրառության մեջ՝ համատեքստում: Մեր բնագրում այն հոմանիշ է *եկեղեցու-ն*: Ընդհանրապես, Դավթի գրչին բնորոշ են կրկնաբանություններից խուսափելը և նույն բառի փոխարեն նրա հոմանիշների կիրառությունը: Ասվածի ապացույցն է հետևյալ նախադասությունը. «*Այլազգին թէ յեկեղեցի մտանիցէ առանց բռնութեան, ջուր ցանեալ աւել ածցեն ուր հասեալ իցէ ոտն կամ ձեռն նորա եւ ի պղծեալ տաճարին մարգարէական եւ առաքելական եւ աւետարան կարդասցեն եւ աղաւթք զկնի*» (էջ 685):

Ի տարբերություն **տաճար** և **եկեղեցի** բառերի, որոնք գործածված էին բացառապես քրիստոնեական պաշտամունքավայրի նշանակությամբ **մեհեան** բառը հեթանոսական շրջանի պաշտամունքավայր է նշանակում: **Մեհեան** բառը ևս իրանյան փոխառություն է, սկզբնապես նշանակել է Միհր աստծո պաշտամունքին նվիրված տաճար, ատրուշան, կրակատուն, ապա իմաստի ընդլայնմամբ՝ հեթանոսների կրոնական պաշտամունքի աղոթավայր, որը կարող է ձուլված լինել տարբեր աստվածների կամ կուռքերի: Նշենք, որ բառը ծագել է հենց Միհրի անունից՝ **mehyān** (<***mihra- kān**) «Միհրի, միհրական»²⁷: Բնագրում *մե-*

²⁷ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 521:

հեան բառին զուգահեռ՝ տեսնում ենք *կռոց տուն* բառակապակցությունը, որը *մեհեան*-ի հոմանիշն է. «... էթէ ի *մեհեանն* ղիւաց եւ ի *տուն կռոց* մտանեն եւ ի գոհից անտի ուտիցեն» (էջ 688):

Կուռք բառի ծագումը հստակ չէ. Գ. Ջահուկյանը ծագումը բխեցնում է ուրարտերենից կամ ենթաշերտային մեկ այլ լեզվից: Մեր ընկալմամբ՝ այն հայերեն *կուռ*՝ *կռել* բառարմատ է՝ -ք հոգնակերտով:

Կրոնական արարողությունների ժամանակ օգտագործվող իրեր, առարկաներ, նյութեր նշանակող բառերը ևս շատ են բնագրում. **ժամանոց** (էջ 685), **իւղ** (սրբութեան) (էջ 685), **նշխար** (էջ 688) ևն:

Նշխար (պիլ. **nišxvar* ձևից) բառը կանոնագրքում միջինհայերենյան հոլովական բազմաձևությամբ է վկայված: ՆՀԲ-ում նշված է, որ բառը պատկանում է *ի-ա* խառն վերջադրական հոլովմանը: Սակայն բնագրում ունենք նաև *n* հոլովմամբ ձևեր՝ *ի նշխարոյն, նշխարով* ևն: Այսպես՝

«Իսկ ի դնել սպասուցն արածեացի մուկն ի *նշխարոյն* եւ *n*՝ *գիտացեալ քահանայն...*»:

«Եթէ մկնանկ գինով կամ *նշխարով* յանգէտս *nք* պատարագ մատուցանէ...»:

«Այլ թէ երկուարեայ *նշխարաւ* *nք* մատոյց յանգէտս , Գ (3) շաբաթ արտաքոյ կացցէ նովին կարգան» (էջ 688):

Բնագրում կիրառված իրանյան ծագում ունեցող բառերը կազմում են հականշային հետաքրքիր զույգեր: Քննությունը սկսենք **հրեշտակ** (պիլ. **frestak* բառից) – **դել** (պիլ. **dēv* բառից) զույգից: Առհասարակ բոլոր կրոններին է բնորոշ բարի և չար ոգիների տարբերակումը: Բնագրում էլ այս երկուսի հակադրությունը ակնհայտ է: Այս արմատներից կազմված բառերը (այս դեպքում՝ *հրեշտակական* և *դիւական*) գործածված են նույն նախադասությունների մեջ՝ որպես հակադիր երևույթների բնութագրիչներ. «... եւ փոխանակ Քրիստոսի եւ *հր[եշտակաց ղիւաց լինի բնակութիւն...*» (էջ 687): «Այլ փոխանակ *դիւական* խաղուցն *գհր[եշտակական* գերգս երգել ...» (էջ 688):

Հրեշտակ բառից բացի՝ բնագրում հանդիպել ենք նաև *սերոբէ* բառին, որը նշանակում է «առաջին կամ երկրորդ կարգի հրեշտակ»: Գ. Ջահուկյանի և Հր. Աճառյանի բառարաններում բառը տրված է **Սրո(վ)բէ** ձևով, թեև Հր. Աճառյանը նշում է, որ նոր գրականում միայն *սերովբէ* տարբերակն է ընդունված, որը նաև հատուկ անուն է²⁸: Այնուամենայնիվ, երկու լեզվաբաններն էլ պաշտպանում են բառի՝ ասորական աղբյուրներից փոխառված լինելու վարկածը:

Հաջորդ տարարմատ հականշային զույգը **դժոխք-դրախտ** է: Բնագրում վկայված է *դժոխք* բառի հոմանիշ *գեհեն* բառը, որը երբայական ծագում ունի: *Դժոխք* բառը ծագում է իրանյան **dušaxwa* ձևից, իսկ *դրախտի* համար որպես համեմատական նշվում են միջին պարսկե-

²⁸ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 284:

րեն. **draxt**, և այ. **diraxt** «ծառ» ձևերը: Վերջին բացատրությունը լավագույնս է ցույց տալիս դրախտի՝ որպես վայրի և կենաց ծառի կապը:

Դժոխքի մասին խոսելուց հետո չենք կարող չանդրադառնալ նաև *սանդարամետական(ք)* բառին: **Սանդարամետ** բառը հիմնականում երկու բացատրություն ունի՝

1. Երկրի խորքը, ստորերկրյա վիհ՝ անդունդ,
2. (կրոնական) Դժոխք:

Իսկ *սանդարամետական* բառը՝ երեք՝

1. ած. Սանդարամետում եղող՝ ապրող, դժոխային,
2. Մեռած ու թաղվածները,
3. գ. Դժոխքի ոգի²⁹:

Բնագրում բառը գործածված է որպես գոյական՝ *դժոխքի ոգի* իմաստով. «*Եւ ի սանդարամետականաց իսկ վկայեալ, այն՝ որ գտիչք եւ արիչք են չարի եւ բարեացն սրբութեան խափանիչք*» (էջ 719):

Ինչ վերաբերում է համարմատ հականիշներին, ապա բնագրում որպես դատավճիռ այս կամ այն երևույթի համար շատ են գործածվում **վնաս է - անվնաս է** կառույցները: Ըստ Հր. Աճառյանի՝ *վնաս* բառը ծագում է պիլ. **vinas* «մեղք, յանցանք, ոճիր, պակասություն» ձևից³⁰: Սակայն Գ. Ջահուկյանը այն համարում է փոխառություն միջին պարսկերենից³¹: Որպես դատավճիռ՝ բնագրում մեծ կիրառություն ունեն նաև հետևյալ ձևերը՝ *անպարտ է* (էջ 696), *անպարտական են* (էջ 686), *չէ պարտ* (էջ 686), *արեան պարտական են* (էջ 702), *մահապարտ է* (էջ 695), *ընդ խաչահանունս նդիցին* (էջ 703), *նզովեալ եղիցին* (էջ 686) և այլ համանման կայուն կապակցությունները:

Իրանյան փոխառություններում կան բառեր, որոնք գալիս են լրացնելու բնիկ բառերով կազմված հոմանշային շարքերը. առաջինը խոսենք կրոնական պաշտոնյաների (պաշտաւնեայք) մասին: *Կրօնաւոր* բնիկ ընդհանրական բառի ենթախմբում առկա են տարբեր ծագման մի շարք բառեր: Բնիկ է դրանցից մեկը՝ *երեց*-ը: Իրանական ծագում ունի *վարդապետ* բառը, իսկ ասորական փոխառություններ են *արեղայ* և *քահանայ* բառերը: Հունական փոխառություններից վկայված է *եպիսկոպոս*-ը: Բացի *կրօնաւոր*-ից՝ կա ևս մեկ ընդհանրական անվանում՝ *եկեղեցական*-ը, որը կքննենք հիբրիդ բառերի շարքում:

Մեր քննած բառերից շատերը բազմիմաստ են և միաժամանակ պատկանում են մի քանի իմաստային խմբերի: Բնագրում նույնպես երևում է դրանց բազմարժեքությունը: Վերցնենք **ժամ** բառը. «...թէ **ի ժամ** գիշերոյն իցէ, նոյն արինակ կատարել զկարգն...» (էջ 685):

«Ապա թէ **ի ժամ** պատարագին մտցէ, խափանեն» (էջ 685):

Այս նախադասություններում բառը գործածված է ժամանակի իմաստով, սակայն նույն էջում մենք հանդիպում ենք նաև հետևյալ նա-

²⁹ Տե՛ս **Մտ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, էջ 181:

³⁰ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, էջ 347:

³¹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 713:

խաղասությանը. «Թէ յետ **ժամուն** մտանիցեն, նոյնպէս արասցեն». այս դեպքում բառը արտահայտում է *պատարագի, ժամերգության* իմաստ: Ինչպէս արդէն տեսանք, բնագրում կա նաև *պատարագ* բառը, որի հետ *ժամ*-ը կազմում է հոմանշային գույգ:

Մենք վերևում նշել էինք, որ իմաստային սահմանազատում չկա բնագրում վկայված *օրենք, կրոն* իմաստային դաշտերի բառերի միջև: Մակայն հարկ ենք համարում շեշտել, որ արդի արևելահայերենում արդէն սահմաններ կան դրանց միջև, քանի որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունները հստակ սահմանազատվում են իրարից: Ժամանակակից պետության կազմում դատաիրավական համակարգը իշխանության անկախ թևերից մեկն է, որն ուղղակի ենթակա չէ օրենսդիր և գործադիր իշխանություններին, իսկ եկեղեցին պետության բաղկացուցիչ չէ համաշխարհայնացման արդի աշխարհում, թեև պահպանում է իր գործուն ազդեցությունը: Չուտ օրենքի իմաստային դաշտին պատկանող մեր առանձնացրած բառերը մեծ մասամբ իրանյան ծագում ունեն և առավել հաճախ՝ միջին պարսկերենից են անցել հայերենին. *աւրէնք, դատ, դատաստան, դատապարտել, պատիժ* ևն: Քննենք **աւրէնք** բառը: Արմատն է *աւրէն*, որը փոխառություն է միջին պարսկերենից (**awdēn**): Միջին պարսկերենից է փոխառված նաև **դատ** բառը (**dāt**):

Բնագրում շատ են մեջբերումները Աստվածաշնչից, հիմնականում՝ Նոր կտակարանից: **Չ** գլխում, որը քահանաներին անարգելու մասին է («Վասն այնոցիկ որ զքահանայսն անարգեն»), կա մի հատված, որը մեջբերում է Ղուկաս ավետարանիչից. «*Որպէս ասաց Տէր մեր աշակերտացն. «Որ ձեզ անարգէ, զիս անարգէ»*»: Քրիստոնեությունը տարածում էին առաքյալները, որոնք Քրիստոսի աշակերտներն էին: Բերված նախադասության մեջ *աշակերտ* բառը հավասարաբժեք է *առաքյալ* բառին. երկու բառերն էլ վկայված են բնագրում: *Աշակերտ*-ը իրանական փոխառություն է (***ašākert**), իսկ *առաքեալ* բառի դեպքում քննությունը միանշանակ չէ. բառի արմատ ընդունված է համարել *աք*-ը (ոտք), որը ենթադրաբար կովկասյան փոխառություն է. *աքել* «ուղարկել» բառը կենդանի է մինչև այսօր Չեյթունի բարբառում: Բերենք բնագրային օրինակը. «*Իսկ հայր հարսին՝ **զառաքելոց** եւ **զմարգարէից** եւ **ամենայն բազմութիւն հրեշտակաց սրբոց***» (էջ 687):

Քրիստոնեության յոթ խորհուրդներից մեկը **մկրտությունն** է, որի բառանունը ընդգրկել ենք բնիկ բառերի շարքում: Այն ունի նաև այլ անվանում՝ *կնունք*, որը *կնիք* բառի հետ փոխառված է ասուրաակկադական աղբյուրներից: Գ. Չահուկյանը *կնունք*-ը նոր ձև է համարում, իսկ Հր. Աճառյանի բառարանում նշվում է, որ այդ երկու ձևերն էլ ասուրական աղբյուրներում վկայված էին և երկու տարբերակով էլ անցել են հայերենին³²:

Մկրտության, կնունքի թեման ամբողջացնելու համար պետք է անդրադառնանք **սնդիկնոս** (հուն. *sín tekno* համաձնունդ, կաթնեղբայր)

³² Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, էջ 608:

բառին, որը հունական փոխառություն է, նշանակում է՝ «Մկրտությունը *աւագանով որդիացած, կնքահայր եւ իւր սանր*»³³: ՆՀԲ-ում բառը տրված է *սինտեկնոս* և *սնդեկնոս* ձևերով, Ստ. Մալխասյանցն իր բառարանում՝ *սնդիկնոս* բառնողվածում հղում է տալիս *սինտեկնոս* տարբերակին, այսինքն՝ առավել գործածական է եղել հենց վերջին ձևը: Էդ. Աղայանի բառարանում այն արդեն վկայված չէ, իսկ միջին հայերենի բառարանում տրված է հենց *սնդիկնոս* ձևով, որը թույլ է տալիս ենթադրելու, որ այն հենց միջինհայերենյան ձև է: Դավիթ Ալավկա Որդին ԻԲ կանոնում անդրադառնում է այս թեմային և արգելում բոլոր կրոնավորներին, բարեկամներին և սիրելիներին որդեգիր լինել մոր համար և կնքահայր մանկան համար:

Բնիկ բառերի ենթազլխում հանգամանորեն քննեցինք *Սասունած* բառի հունանշային շարքը: Այս ենթազլխում կանդրադառնանք դրա հակառակի՝ *սասունայ* բառին: Այն ասորական փոխառություն է՝ *sātānā*, իսկ երբայերենում (*sātān*) նշանակում է «հակառակորդ, սատանա». «*Վասն որոյ երկպառակն նման է սասունայի եւ կցորդ ամենայն չարացն նորա, որ եւ ընդ նմին ժառանգեցէ զիստասացեալ պատիժն նորա սասունայ*» (էջ 708):

Սասունայի հումանիշներից բնագրում հանդիպում ենք **Բելիար** բառին, որը համատեքստում հիշատակվում է Քրիստոսի հետ հակադրության մեջ, այդ հակառակների գույզին ուղիղ համեմատական է *հաւատացեալ-անհաւատ* հակադրությանը. «*Ձի զինչ բաժին է հաւատացելոյն ընդ անհաւատին եւ կամ Քրիստոսի ընդ Բելիարայ*» (էջ 687):

Չր. Աճառյանը նշում է, որ *բելիար* բառը եբրայերեն **bēli-ya'al** բառն է, որ կազմված է **bēli** «ոչ, ան-» եւ **ya'al** «օգուտ» բառերից. ուստի բուն նշանակում է «անպետք, անօգուտ, անպիտան», հետո նաև՝ «չար, վատ, ապականօղ» և վերագրվում է սատանային: Մակայն պարզ չէ, թե որ լեզվից է անցել հայերենին: Գ. Չախուկյանը երկու վարկած է առաջ քաշում. բառը ծագել է հունարեն. **peiap** (*Beio*) կամ ասոր. **beliār** (*belial*) բառերից³⁴:

Քննելով *օրենքի* և *կրոնի* իմաստային դաշտերի փոխառյալ բառերը՝ համոզվում ենք, որ թվով և կենսունակությամբ աչքի են ընկնում միայն իրանական ծագման բառերը: Իրանականին հաջորդում են հունական փոխառությունները, որոնք թեև շատ չեն, սակայն էական, հիմնական եզրույթներ են: Առավել սակավ են ասորական և ասորաակկադական փոխառությունները: Արձանագրենք, որ այդ բառերի շարքերում կան մեծ թվով հականշային գույզեր, բազմիմաստ բառեր, որոնք, կախված համատեքստից, կարող են իմաստային տարարժեքություն ունենալ: Պատմական զարգացման ընթացքում այս բառային միավորները իմաստաբանական փոփոխությունների գրեթե չեն ենթարկվել:

Բնագրում վկայված են մեր իմաստային դաշտերին պատկանող շատ բառեր, որոնք չենք կարող ընդգրկել ո չ բնիկ և ո չ ինչ-որ այլ լեզ-

³³ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, էջ 215:

³⁴ Տե՛ս Գ. Չախուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 124:

վից փոխառյալ բառերի շարքում, քանի որ այդ բառերը կազմող բաղադրիչները տարբեր ծագում ունեն: Դրանք այսպես կոչված **խառնանդամ** կամ **հիբրիդ** բառերն են: Հիբրիդային բառերի պարագայում դիտարկել ենք երկու դեպք

1. բարդ բառերի արմատների ծագման անմիօրինակություն,
2. ածանցավոր և բարդածանցավոր բառերի բաղադրիչների ծագման անմիօրինակություն:

Քանի որ առանձնացրած հիբրիդային բառերի թիվը զգալի է, մենք բոլորին չենք անդրադառնա: Կներկայացնենք բնութագրական և հաճախադեպ երկանդամ կազմությունները հետևյալ կաղապարներով.

1. Բնիկ ծագման արմատ+իրանական ծագման արմատ.

Արուևադրոշմ, աստուածաբնակ, աստուածահրաման, աստուածավաճառ:

2. Բնիկ ծագման արմատ+իրանական ածանց.

Աւետարան, բարոյական, սրբազան:

3. Իրանական ծագման արմատ+հնդեվրոպական ածանց.

Ազահություն, ապականություն, ապաշխարել, ապաշխարեալ, ապաշխարող, ապաշխարություն, ալրինաւոր, ալրինել, ալրինություն, ժամանոց, ժառանգաւոր, խոստովանել, խոստովանություն, կախարդություն, կուսություն, հմայություն, նզովեալ, պահանջել, պաշտել, պատրեալ, պատրող:

4. Իրանական ծագման արմատ+ բնիկ արմատ.

Ախտամոլ, դիւակոչ, դիւահար, ժամհար, պատուիրանազանց.

5. Հունական ծագման արմատ+ բնիկ ծագման արմատ.

Նեոնազործ, կանոնագիծ, կանոնեալ:

6. Հունական ծագման արմատ+բնիկ ծագման ածանց.

Եկեղեցի:

7. Հունական ծագման արմատ+իրանական ծագման ածանց.

Քրիստոսական:

8. Ասուրական ծագման արմատ+ բնիկ ծագման արմատ.

Կնքահայր:

9. Ասուրական ծագման արմատ+ բնիկ ծագման ածանց.

Կնքել:

10. Ասորական ծագման արմատ+բնիկ ածանց.

Արեղայություն, հեթանոսաբար, փրկական, քահանայություն, քարոզել:

11. Ասորական ծագման արմատ+իրանական ծագման արմատ.

Սատանայախաւս, քահանայապետ:

12. Ասորական ծագման արմատ+իրանական ծագման ածանց.

Քահանայական, հեթանոսական:

13. Եբրայական ծագում ունեցող արմատ+իրանական ծագում ունեցող ածանց.

Սողոմական:

14. Եբրայական ծագում ունեցող արմատ+բնիկ ծագում ունեցող ածանց.

Սողոմոնային, սողոմայեցի:

15. Որևէ անհայտ ծագման բաղադրիչ պարունակող բառեր.

Խորհրդական - բնիկ ծագման արմատ+անհայտ ծագման ածանց+իրանական ծագման ածանց,

Կարգալուծություն - անհայտ ծագման արմատ+բնիկ ծագման արմատ+բնիկ ծագման ածանց,

Նարատաներկություն - անհայտ ծագման արմատ+իրանական ծագման արմատ+բնիկ ծագման ածանց,

Աւագանածոց - իրանական ծագման արմատ+անհայտ ծագման արմատ:

Պաշտամունքավայրերի անվանումներից *եկեղեցի* բառը խառնանդամ է: Հր. Աճառյանը պարզաբանել է. «Հայերէնի մէջ –**եցի** վերջավորութիւնը հայկական յարմարեցում է և ո՛չ թէ յունարէնի հարազատ տառադարձութիւն»³⁵: Բերենք բնութագրական օրինակ. «*Այլ թէ ոք իշացաւ յեկեղեցոջն, թէ ակամայ՝ Ը (8) աւր արտաքոյ, ապա թէ կամաւ անհոգացեալ ամ մի*» (էջ 689) :

Տրամաբանական շղթայում մենք ներկայացրինք ամենատարածված կադապարները երկբաղադրիչ բառերի դեպքում: Սակայն սրանք բավական չեն մեր ուսումնասիրած դաշտի բոլոր բառերը բնութագրելու համար: Քիչ չեն նաև բազմաբաղադրիչ բառերը, որոնցից մի քանիսին միայն կանդրադառնանք: Նախ նշենք բազմաբաղադրիչ խառնանդամ բառերից ամենակիրառականները *ամենակարող, աստուածատեսակազոյն, արիւնադրել, բռնադատել, դատապարտութիւն, կանոնագիրք, կնքահայրութիւն* ևն:

Քննությունը սկսենք *ամենակարող* բառից. առաջին բաղադրիչը՝ *ամեն*, հնագույն արմատական ձև է: Այս արմատի հետ կապված կա հնչյունական մի առանձնահատկություն. հայտնի է, որ առանձին գործածության դեպքում (թեև շատ քիչ վկայություններ կան) արմատը գրվում է **է** տառով, թե՛ Հր. Աճառյանի, թե՛ Գ. Ջահուկյանի բառարաններում հենց այդ գրությամբ է տրված, զուգահեռաբար նշվում է, թե՛ Ոսկեդարում չկար *ամէն* բառը, այլ միայն *ամենայն*: Սակայն, ինչպես արձանագրում է Հր. Աճառյանը. «Այս բոլորը չեն խանգարիլ սակայն ընդունելու թէ բառիս արմատն է **ամէն**, որ յետնաբար սովորական գործածություն է ստացել... Սրա էլ հիմնական ձևն է **ամէն**. Բայց որովհետև հայերէնի օրենքներով վերջնաձայն **ն**-ից առաջ գտնուած **ե** դառնում է **է**. ուստի և **ամէն** դարձել է **ամէն**: Ուր որ է մտնում է բառի մէջ, այնտեղ **ե** ձայնը նորից երևան է գալիս. այսպէս հոլովման ժամանակ սեռ. **ամենի, ամենից** և ածանցման մէջ...»³⁶: Հենց այս վերջին դեպքն էլ բացատրում է բառի գրությունը նաև Դավիթ Ալավկա Որդու գրքում:

Նշենք նաև, որ Գ. Ջահուկյանը բառը համարում է ծագած հնդեվ-

³⁵ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, էջ 717-718:

³⁶ Նույն տեղում, էջ 153:

րոպական *s**bm**o- ***sem**- «մեկ, միասին, հետ» արմատից՝ **-էն** ածանցով, սակայն մենք, հիմք ընդունելով Հր. Աճառյանի հիմնավորումները, *աւեն* բաղադրիչը ընդունում ենք որպես պարզական արմատ և *ամենակարող* բառի համար տալիս ենք հետևյալ կաղապարը՝ **բնիկ ծագման արմատ+իրանական ծագման արմատ+ բնիկ ծագման ածանց**:

Անցնենք երկրորդ արմատին՝ **կար**, որը, ինչպես արդեն իսկ հուշում է մեր առաջարկած կաղապարը, իրանական ծագում ունի: Հր. Աճառյանը այս արմատի մայր ձևը կորուսյալ է համարում, իսկ Գ. Ջահուկյանը որպես համեմատություն բերում է պարթևական (***kari** «ակտիվություն») և միջին պարսկական (***kar** «ուժ ունենալ, ի վիճակի լինել, կարողանալ») ձևերը³⁷:

Անդրադառնանք նաև դերբայական *-ող* ածանցին: Որոշ լեզվաբաններ այն համարում են դերբայական վերջավորություն և ոչ թե ածանց: Գ. Ջահուկյանը *աւող/ող* ձևը դիտարկում է որպես դերբայական ածանց, որը ծագում է հ.-ե. ***-tel-** ածանցի թեմատիկ ***-tlo-** ձևից³⁸:

Բնիկ բառերը քննելիս՝ մենք անդրադարձանք յոթ մահացու մեղքերին: Դրանցից մեկը՝ *ագահությունը*, խառնանդամ ծագման բառ է, քանի որ արմատը՝ *ագահ*, փոխառություն է իրանական աղբյուրներից (թեև նախաձևը որոշ չէ), իսկ ածանցը՝ *-ություն*, հնդեվրոպական ծագում ունի:

Խառնանդամ բառերի մեջ տեղ է գտել մի շատ հետաքրքիր բառ ևս՝ **նեռնագործ**: Առաջին արմատի (*նեռն*) հոմանիշները քննել ենք փոխառյալ բառերի մեջ՝ *սասանայ*, *Բելիար*: **Նեռն**-ը հունական փոխառություն է. և՛ Հր. Աճառյանը, և՛ Գ. Ջահուկյանը այն համարում են **Նեռոն** կայսեր անունից ծագած: Նեռի կամ դերաքրիստոսի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ղևոնդ Ալիշանը, որն այլ ստուգաբանություն է առաջարկել. «Սա ոչ թե դև է, այլ դիվաշունչ մի անձ, որ պիտի գա նախքան աշխարհի վախճանը՝ խաբելու մարդկանց և իրեն ներկայացնելու իբրև Քրիստոս, ինչպես արդեն եկել են այդպիսի խաբեբա Նեռեր՝ Հովհաննես Ավետարանիչի ասածի համաձայն, որի գրքում է միայն հիշվում սա, և ոմանք անվան մերձավորությունից կարծեցին, թե՛ Նեռոն կայսրն է: Բայց Նեռի խնդիրը այս իմաստով մեր գործին չի վերաբերում, այլ այն ենթադրությամբ միայն, թե հին ժամանակներում՝ հայերիս մեջ ճանաչված պիտի լինի այդ անունը կրող մի չար ոգի, և մեր թարգմանիչները այդ անունով են կոչել դերաքրիստոսին, ինչպես կոչել են նրան այլ ազգերն ու լեզուները, որ մերի նման անուն չունեն: Չար ոգու նշանակությունը գուշակվում է նաև միջին դարերի մի վարդապետի՝ չարագործ մարդկանց մասին նեռնագործ ասելուց»³⁹: Ինչպես տեսնում ենք, Ղևոնդ Ալիշանը հակված է այս անվան


³⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 390:

³⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 801:

³⁹ Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնները, էջ 155:

բնիկ ծագման վարկածին՝ ի հակադրություն Հր. Աճառյանի և Գ. Ջահուկյանի:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ հիբրիդային կազմությունները մեր քննած իմաստային դաշտում բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն: Երկբաղադրիչ կազմությունների դեպքում ամենակենսունակ **իրանական ծագման արմատ+բնիկ ծագման ածանց** կաղապարն է: Հավարտ որպես ամփոփում ներկայացնենք *օրենքի և կրոնի* իմաստային դաշտերի եզրույթների ծագումնաբանական քննության վիճակագրությունը՝ տրամագրի տեսքով:



НАРИНЕ ДИЛБАРЯН – *Словасемантических полей права и религии в труде Давида Сына Алавка «Канонический кодекс».* – В армянской литературе XI-XII веков особое место занимает составленная преподобным Давидом Сыном Алавак книга законов «Канонический кодекс». Этот важнейший труд, относящийся к правовой мысли и законодательству в средневековой литературе практически не изучен с лингвистической точки зрения. Рассматривая лексические единицы семантических полей права и религии в «Каноническом кодексе» Давида Вардапета, мы видим, что большинство корней и суффиксов, которые формируют термины и понятия с семантическим значением права и религии, имеют индоевропейское происхождение, они продуктивны и сейчас в современном восточноармянском языке. При составлении «Канонического кодекса» Давид Сын Алавка использовал ряд источников - в основном Библию, труды армянских летописцев, философов и священнослужителей, также фольклорные материалы, в которых ярко выражена национальная система нравственных ценностей, древние верования и предрассудки.

Язык Кодекса, как справедливо заметил Вардан Аревелци, один из младших современников Давида-законодателя, «легко доступный». Он занимает промежу-

точное положение между классическим армянским и среднеармянским, что позволяет выявить процесс перехода от одного литературного языка к другому. Такой характер языка обусловлен тем, что, хотя Давид жил и творил в средние века, он получил высшее духовное образование, был священнослужителем, удостоен звания учителя-вардапет, а языком обучения и науки был древнеармянский язык.

Семантические поля религии и права не имели в средние века четкой границы. Давид-законодатель в своей книге подробно говорит о человеческих грехах и добродетелях. В случае анализа таких слов трудно определить, в какое семантическое поле можно их включить, ведь, например, грехи и преступления одинаково недопустимы и наказуемы как церковью, так и судом. Семантическую подгруппу, содержащую такие понятия, условно можно назвать «грех и согрешения». В данном исследовании были рассмотрены основные единицы семантического поля религии и права по их этимологии, выделены индоевропейские единицы, которые составляют ядро лексики, затем заимствования и гибридные образования. 46 % единиц, исследованных в этих двух семантических полях, являются исконными словами, 25 % - гибридными (с сочетаниями индоевропейского корня или суффикса и заимствованного корня или суффикса), 20 % - иранскими, по 4 % - греческими и сирийскими и 1% аккадского происхождения. Составленный Давидом Сыном Алавка, показывает, что армянский язык в средние века уже имел богатую и многоплановую юридическую и религиозную лексику.

Ключевые слова: *Давид Сын Алавка, «Канонический кодекс», лексика, семантические поля права и религии, этимология, индоевропейские корни, заимствования, гибридные образования*

NARINE DILBARYAN – *The Words of the Semantic Fields of Law and Religion in the Work of David Son of Alavk "Canonical Code"*. – In the Armenian literature of the XI-XII centuries, the book of laws "Canonical Code" compiled by the Monk David Son of Alavka occupies a special place. This most important work relating to legal thought and legislation in medieval literature is practically not studied from a linguistic point of view. Studying the lexical units of the semantic fields of law and religion in the "Canonical Code" by David Vardapet, we see that most of the roots and suffixes that form terms and concepts with the semantic meaning of law and religion are of Indo-European origin, they are productive even now in modern Eastern Armenian language. When compiling the "Canonical Code", David Son of Alavk used a number of sources - mainly the Bible, the works of Armenian chroniclers, philosophers and clergyman, as well as folklore materials, in which the national system of moral values, ancient beliefs and prejudices are clearly expressed.

The language of the Code, as Vardan Areveltsi, one of David's younger contemporaries, rightly noted, is "easily accessible." It occupies an intermediate position between Classical Armenian and Middle Armenian, which makes it possible to identify the process of transition from one literary language to another. This character of the language is due to the fact that, although David lived and worked in the Middle Ages, he received a high spiritual education, was a clergyman, was awarded the title of teacher-varđapet, and the language of education and science was the Ancient Armenian language.

The semantic fields of religion and law did not have clear borders in the Middle Ages. David the legislator in his book mentioned in detail about human sins and virtues. In the case of analyzing such words, it is difficult to determine in which semantic field they can be included, because, for example, sins and crimes are equally unacceptable

and punishable by both the church and the court. The semantic subgroup containing such concepts can be conditionally called "sin and crime". In this study, the main units of the semantic field of religion and law were considered by their etymology, the Indo-European units that form the core of the vocabulary were identified, then borrowings and hybrid formations. 46% of the units studied in these two semantic fields are native words, 25% are hybrids (with combinations of an Indo-European root or suffix and a borrowed root or suffix), 20% are Iranian, 4% are Greek and Syriac, and 1% are Akkadian.

The code, compiled by David Son of Alavk, shows that the Armenian language in the Middle Ages already had a rich and multifaceted legal and religious vocabulary.

Key words: *David Son of Alavk, "Canonical Code", vocabulary, semantic fields of law and religion, etymology, Indo-European roots, borrowings, hybrid formations*

ՏԱՐԱԾԱՄԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ
ԳՐԱԲԱՐՈՒՄ

ԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

Գրաբարի եզրույթային համակարգը բազմաշերտ է. յուրաքանչյուր ենթաշերտ ունի իր ուրույն առանձնահատկությունները ինչպես բառագիտական, այնպես էլ ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Արդի արևելահայերենի եզրույթային համակարգի սկզբնաղբյուրը հին հայերենն է: Ըստ այդմ՝ կարևորվում է գրաբարի բառ-եզրույթների և եզրույթների թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա քննությունը: Գրաբարով մատենագրությունը հարուստ փաստական նյութ է ընձեռում նրանց իմաստաստուգաբանական ուսումնասիրության համար:

Եզրույթային համակարգի յուրաքանչյուր շերտ՝ իր ենթաշերտերով, կարևորվում է ներքին համակարգվածությամբ: Նրանց գործառական հաճախականությունը տարբեր է՝ պայմանավորված երկի նպատակաուղղվածությամբ և բովանդակությամբ:

nature of the meaning is sometimes explicitly and sometimes implicitly present in the works that more or less refer to the use of the word. Perhaps Eduard Aghayan is one of the few Armenian linguists who paid attention to the subjective meaning of the word from a semantic perspective and underlined the cases when the word meaning denoting an objective concept acquires subjective meaning and subjective semantic coloring. Accordingly, this article aims first to examine the understanding of subjective meaning in linguistics, then to describe V. Von Humboldt's, Charles Bali's, and Emile Benveniste's approaches to the problem, the relations between subjective and objective meaning, subjectivity and intersubjectivity from the point of view of cognitive linguistics (Langacker, Nuyts), and last but not least to present Eduard Aghayan's views on the manifestation of the subjective meaning of the word, which was reflected in his works of different years.

Key words: *semantic contrast, subjective and objective opposition, intersubjectivity, communication and speech, Eduard Aghayan*

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԵՎ Վ. ՌԱՍՊՈՒՏԻՆԻ
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱՌԱԿ ՀԵՌԱՆԿԱՐԻ
ՄԿԶԲՈՒՆՔԻ ԴԻՏԱՆԿՅՈՒՆՆԵՑ

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մեղիադաշտում տեղեկատվական սահմանների ընդլայնման, սոցիալական մեղիայի, սոցցանցերի ակտիվության միտումները, դրանցում կիրառվող նոր գործիքների բազմազանությունը հրապարակախոսության վերաիմաստավորման պահանջ են դնում մերօրյա մեղիափետագոտողների առջև: Սկսել են ի հայտ գալ նոր ժանրատեսակներ, որոնց մի մասը, հրապարակախոսական տարրեր պարունակելով հանդերձ, լսարանին փորձում է նորովի ներկայացնել մարդկային կյանքի պատմությունները, տեղեկատվական հասարակության մեջ ապրող մարդու հոգևոր ու գաղափարական հետաքրքրությունները և այլն: Այս համատեքստում հատկապես կարևորվում է նախորդ տասնամյակների գրական հեղինակությունների հրապարակախոսական երկերի ուսումնասիրությունը: Նրանց ստեղծած արժեքների հանդեպ մնայուն հետաքրքրությունը կնպաստի հաղթահարելու անցյալ-ներկա մշակութային անջրպետը, վերարժևորելու այն լավագույնը, ինչ ստեղծվել է ավագ սերնդի ներկայացուցիչների ջանքերով: Այս իրողությունն արդեն իսկ պայմանավորում է հողվածի արդիականությունը:

Քննության նյութը Հրանտ Մաթևոսյանի և Վալենտին Ռասպուտինի հրապարակախոսական երկերն են, որոնք վերջին տասնամյակներին մշտապես եղել են հետազոտողների տեսադաշտում¹, և որոնց համեմատական վերլուծության համար հիմք է ընդունվել գեղանկարչության մեջ հաճախ շրջանառվող հակառակ հեռանկարի սկզբունքը:

Նմանատիպ մի փորձ արդեն արվել է տարիներ առաջ՝ իբրև ուսումնասիրության օբյեկտ ընտրելով հայ և ռուս արձակագիրներ Մուշեղ Գալշոյանի և Վիկտոր Աստաֆևի էսսեները²: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա մեր հարցադրումը հետևյալն է. հնարավոր է արդյոք հակառակ հեռանկարի համատեքստում դիտարկել ոչ միայն գեղանկարչական, այլև հրապարակախոս-

¹ Տե՛ս Վ. Գրիգորյան, Հրանտ Մաթևոսյան. ստեղծագործությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2013, Դ. Համբարձումյան, Հրանտ Մաթևոսյանի ֆենոմենը. cultural.am/hy/norutyunner/hodvacner/2285-hrant-matevosyani-fenomeny, «Восторгался вслух и громко: Татьяна Толстая о впечатлении Иосифа Бродского от знакомства с Грантом Матевосьяном», armmuseum.ru/news-blog/ipsif-brodsky-and-hrant-matevosyan-lisbon-1988, Каминский П. П. «Время и время тревог». Публицистика Валентина Распутина, М., «Флинта», 2012, Thompson M. Nature and Spirituality in Valentin Rasputin's Non-fiction, Oxford University Press, Oxford, 2015 և այլը:

² Տե՛ս «Հակառակ հեռանկարի սկզբունքը ժամանակակից էսսեներում (Մ. Գալշոյան և Վ. Աստաֆև) // Դ. Պետրոսյան, Պատում, մեղիափետ, հակառակ հեռանկար», Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 45-57:

սական ժանրի ստեղծագործությունները: Այս անգամ քննության են ենթարկվել Հ. Մաթևոսյանի և Վ. Ռասպուտինի հրապարակախոսական գործերը, որոնք ի հայտ են բերել այս ժանրում հակառակ հեռանկարին առնչվող ուշագրավ մի շարք առանձնահատկություններ: Հայ և ռուս գրողների հրապարակախոսությունը տեսական այս դիտանկյուններից մինչ այժմ չի ներկայացվել: Շարադրանքի ընթացքում հոդվածի մեթոդաբանության հիմքում առաջնային են եղել համեմատության, վերլուծության և համադրական մեթոդները:

Բանալի բառեր - *հակառակ հեռանկարի սկզբունք, հրապարակախոսություն, Հրանտ Մաթևոսյան, Վալենտին Ռասպուտին, Պավել Ֆլորենսկի, սրբապատկերային գործառնություններ, հեղինակ և լսարան*

Հրանտ Մաթևոսյանն ու Վալենտին Ռասպուտինը իրենց լավագույն գեղարվեստական ստեղծագործությունները հրապարակել են խորհրդային տարիներին, իսկ հետխորհրդային շրջանում աչքի են ընկել իրենց բազմաթիվ հրապարակախոսական երկերով: Երկուսն էլ տարիներ շարունակ հանդես են եկել մամուլում, և նրանց հեղինակավոր խոսքը հաճախ դարձել է հանրության լայն շերտերի քննարկման առարկա: Այս հեղինակների գրականության և հրապարակախոսության առանցքում են հայրենիքը, ազգային ու համամարդկային հանդեպ առանձնակի ուշադրությունը, անհատի գոյութենական խնդիրները և այլն:

Հակառակ հեռանկարը՝ որպես գեղանկարչության մեջ հայտնի տեսական դրույթ, 20-րդ դարասկզբին գիտական շրջանառության մեջ է դրվել Պավել Ֆլորենսկու և մի շարք այլ տեսաբանների աշխատություններում³: Այն գործնական կիրառություն ուներ դեռևս բյուզանդական և հին ռուսական գեղանկարչության մեջ, մասնավորապես սրբապատկերային արվեստում: Տեսաբաններն այն բնութագրելիս առանձնապես ուշադրություն են դարձնում հետևյալ իրողության վրա. «Հակառակ հեռանկարում արտացոլվելիս առարկաներն ընդարձակվում են դիտողից հեռացնելու դեպքում, ասես զծերի կենտրոնը գտնվում է ոչ թե հորիզոնի վրա, այլ հենց դիտողի ներսում: Հակառակ հեռանկարը կազմավորում է ամբողջական սիմվոլիկ տարածություն, որ կողմնորոշված է դեպի դիտողը և ենթադրում է նրա հոգևոր կապը խորհրդանշական պատկերների աշխարհի հետ: Հետևաբար հակառակ հեռանկարը պատասխանում է վերզգայական սրբազան բովանդակության տեսանելի, բայց նյութական որոշակի ձևից զուրկ մարմնավորման խնդրին»⁴:

Այժմ անդրադառնանք հիշյալ սկզբունքի կոնրետ դրսևորումներին:

³ Стéу **Флоренский П. А.** Обратная перспектива, Сочинения в 4-х тт. - Т.3(1), М., «Мысль», 1999, էջ 46-98, **Флоренский П. А.** Иконостас. Избранные труды по искусству. СПб., «Мифрил-Русская книга», 1993, էջ 1-175, **Штелер Т.** Обратная перспектива: Павел Флоренский и Морис Мерло-Понти о пространстве и линейной перспективе в искусстве Ренессанса. «Историко-философский ежегодник - 2006» / Ин-т философии РАН. М., «Наука», 2006, էջ 320-329, **Раушенбах Б. В.** Пространственные построения в живописи. Очерк основных методов. М., «Наука», 1980, էջ 94-139:

⁴ Перспектива. <http://ru.wikipedia.org/wiki>

1. Հեղինակի սրբապատկերային մի քանի գործառույթներ

2. Մաթևոսյանի և Վ. Ռասպուտինի ստեղծագործությունների համեմատական քննությունը հուշում է մեզ հստակեցնելու որոշ դրույթներ: Դրանք են՝

ա) ազգային և համամարդկային մշակույթներին առնչվող նրանց ստեղծագործական մտորումները,

բ) հակառակ հեռանկարի սկզբունքը՝ որպես արտաքին աշխարհը ներքին տեսողությամբ ընկալելու մեխանիզմ,

գ) տարածաժամանակային վեկտորները և հեղինակների հայացքների բազմակենտրոնությունը:

Մաթևոսյանի հրապարակախոսությունից առանձնացրել ենք «Ես ես եմ» և «Կատարելություն»⁵, իսկ Ռասպուտինից՝ «Իմ և քո Միբիրը», «Բացեք ռուս մարդուն ռուսական լույսը» էսսե-ակնարկները⁶: Անհրաժեշտության դեպքում հղում ենք կատարել նաև նրանց մի քանի այլ գործերի:

Նյութի տարածական ընկալման առումով Մաթևոսյանի տեսադաշտում Հայաստանն է, Խորհրդային Միությունը և Արևմուտքը, Ռասպուտինի դիտակետում՝ Միբիրը, Ռուսաստանը և կրկին Արևմուտքը:

Ժամանակի մարմնավորման առումով նրանք սևեռված են իրենց երկրի ու ժողովրդի ժամանակային երեք հատվածների (ներկա, անցյալ, ապագա) տեսապատկերի վրա:

Տարածության ընկալումը երկու գրողների դեպքում էլ սեփական ինքնության հաստատման առաջնային խնդիր է լուծում: Նրանց ինքնադրսևորման, գրող-հրապարակախոս ինքնակայացման և հակառակ հեռանկարին բնորոշ խորհրդանշական պատկերների խոշորացման ինվերսիան բացվում է ժամանակի չափումներում: Ուստի հենց այս հարթության մեջ է ակտիվանում հակառակ հեռանկարի հաջորդ վեկտորը՝ երկու գրողների հայացքների բազմակենտրոնությունը, որին էլ կցանկանայինք անդրադառնալ:

Հակառակ հեռանկարին բնորոշ հայացքի բազմակենտրոնության սկզբունքի ջատագովները և առաջին հերթին Պավել Ֆլորենսկին գտնում էին, որ նկարիչը ոչ միայն տեսողական ընկալմամբ, այլև հոգևոր հայացքի տարբեր կետերից է ներկայացնում աշխարհը, իրերն ու երևույթները, ինչն էլ հանգեցնում է այդ հայացքի բազմակենտրոն ուղղվածության⁷: Նման ընկալումը փոխանցվում է նկարը դիտողին:

Այս մոտեցումը կիրառում են նաև Հ. Մաթևոսյանն ու Վ. Ռասպու-

⁵ Տե՛ս **Հր. Մաթևոսյան**, Սպիտակ թղթի առջև, Եր., «Հայագիտակ» հրատ., 2004, էջ 51-60, 81-85:

⁶ Տե՛ս **Распутин В.** Время Достоевского, «Завтра», газета, 2007, № 11. Откройте русскому человеку русский свет, «День литературы», газета, 2001, № 063:

⁷ Տե՛ս **Ростова Н. Н.** Человек обратной перспективы как философско-антропологический тип (исследование феномена юродства), «Вестник ТГПУ. 2007. Выпуск 11(74). Серия: Гуманитарные науки (философия)», с. 105-111, Սրբապատկերներում հակառակ հեռանկարի սկզբունքի կիրառման մասին տե՛ս նաև **Флоренский П. А.** Иконостаc, էջ 1-175:

տինը: Հիշյալ էսսեներում նրանք հաճախ են փոխում իրենց և պատկերվող օբյեկտների դիրքերը: Եվ երբ կենտրոնանում են այս կամ այն պատկերի վրա, ապա դրանք ընթերցողի մտապատկերում մեծանում են խոշոր պլանով:

Այս գրողներից յուրաքանչյուրն ունի մատուցման իր կերպը: Մաթևոսյանը, օրինակ, իր «Ես ես եմ» էսսեն սկսում է հայկական էպոսի ճյուղերից մեկով (Փոքր Մեծի ճյուղ), երբեմն «կանգ առնում» միջնադարում, ապա հայտնվում 21-րդ դարասկզբի հորձանուտում, քիչ հետո հիշում խորհրդային տարիները և հատկապես խրուշչովյան ձնհալը ու հասնում 21-րդ դարասկզբ⁸: Մաթևոսյանի մոտ տարածությունը բացահայտվում է հոգևոր ժամանակի համատեքստում: Ահա թե ինչու նրա այս էսսեներում հայ ժողովրդի անցած **ճանապարհը** իմաստավորվում է **ժամանակի** տարբեր հատվածների ուղեկցությամբ, և ասելիքը խտանում է երկուսի համադրության մեջ. «Քո մշակութային գագաթները, խոշոր իրողությունները հարադրելով՝ Թումանյան, Կոմիտաս, Մարյան, Խաչատրյան, Չարենց, Սարոյան, Ալան Հովհաննես... վստահանում ես ասել, թե իմոնք այլ կոչում ու այլ ուղղվածություն ունեն...[...]Որպես կործանված հայրենիքի գավակներ, նրանք գրականության, մշակույթի մեջ ստեղծում են այն, ինչ որ պետք է իրականության մեջ լիներ»⁹:

Ռասպուտինի մոտ առանձնակի կարևորություն է ստանում տեղայնացվող տարածությունը և մասնավորապես Սիբիրը՝ որպես ճնշվալայր և ռուսական տերության կարևորագույն երկրամաս: Դրա բնորոշ արտահայտություններից է «Իմ և քո Սիբիրը», որ «Սիբիր, Սիբիր» ժողովածուի ծրագրային էսսեններից է: Ռուս գրողն այստեղ ներկայացնում է լուրջ հիմնախնդիրներ, որոնք գոյաբանական սպառնալիքի են վերածվել ոչ միայն Սիբիրի, այլև մարդկության համար, քանի որ բնության դեմ քաղաքակրթական նոր մարտահրավերները առաջին պլան են մղել այս տարածքի տիրոջ խնդիրը. «Մեր հողը, անգամ իրեն հասցված դաժան վերքերից և անցյալում ու ներկայում բազմաթիվ կորուստներից հետո դեռ մեծ է և շռայլ...[...]Կարգուկանոն է պետք նրան... և **Տեք** (ընդգծ. մերն է – Դ. Պ.)՝ հովանավոր ու պաշտպան, խելացի շինարար, հոգատար բժշկող...»¹⁰: Հենց այս առանցքային գաղափարն էլ հակառակ հեռանկարին բնորոշ ինվերսիայով մղում է հեղինակին սրբապատկերային ներգործության ուժ հաղորդելու իր ասելիքին: Ընթերցողի մեջ նա **խոշորացնում է Սիբիրի պատկերը** հատկապես նրա պատմական առաքելության դիտանկյունից: Եվ հողվածներից մեկում չի վարանում նշել. «Սիբիրն ավելի շատ Ռուսաստան է, քան Ռուսաստանը...»¹¹:

⁸ Տե՛ս **Հր. Մաթևոսյան**, նշվ. գիրքը, էջ 51-60:

⁹ Նույն տեղում, էջ 56:

¹⁰ **Распутин В.** Моя и твоя Сибирь <https://litresp.ru/chitat/ru/%D0%A0/rasputin-valentin/sibirj-sibirj/11>

¹¹ **Плеханова И. И.** Книга «Сибирь, Сибирь...» В. Распутина как лирико-философско-публицистический трактат, «Вестник Томского государственного университета. Филология», 2016, №3 (41), с. 130.

Մաթևոսյանի և Ռասպուտինի՝ մեր առանձնացրած հաջորդ երկու էսսեներում հեղինակների կենտրոնացումն **ուղղված է կոնկրետ անհատներին**: Մասնավորապես Հովհաննես Թումանյանին նվիրված էսսեում («Կատարելություն») Մաթևոսյանի վրձնահարվածներն արված են անսովոր տարերքով: Դրանք նոր գույներ են, որոնք թաքմացնում են թումանյանական մեր ընկալումները: Հայ ամենաժողովրդական գրողը Մաթևոսյանի հրապարակախոսական կտավի վրա հառնում է սրբապատկերի ուժով, որի կատարած գործի մեծությունը ծավալվում ու խոշորանում է ընթերցողի հոգևոր հեռանկարում. «Թումանյանից առաջ մենք ամեն ինչ ունեինք և ոչինչ չունեինք, ինչպես որ աստվածային Բանից առաջ ամեն ինչ կար և ոչինչ չկար: Մենք հող ու հայրենիք, բարեկամ ու թշնամի, ջանք ու տառապանք, խի՛նդ ու ծիծաղ և անգամ հազարամյա մշակույթ ունեինք... որի վերընթացն իզուր էր լինելու, եթե չպսակվեր իրենով՝ Արարատով: Մաքուր վաղորդայնի պես... Թումանյանը ցողվեց այդ ամենի վրա, փովեց, սփռվեց, բացեց, բացահայտեց այդ ամենն ու իրեն այդ ամբողջի մեջ և հավաքեց այդ ամբողջը իրենով ու իր շուրջ»¹²:

Ռասպուտինի էսսեներում նման սրբազնացման արժանանում է Ֆ. Դոստոևսկին: Եթե Մաթևոսյանը Թումանյանի մեջ հիմնականում ազգի հավաքական իմաստության ուժն էր մեծարում, և այդ կենտրոնացումի մեջ է Թումանյան սրբապատկերի հմայքը, ապա Ռասպուտինը Դոստոևսկու պատկերը ձուլում է նրա գործունեության առանձին դետալներով: Մի դեպքում նա բացահայտվում է որպես ռուս գրականության «դուխովնիկ», մյուս դեպքում՝ իր գրականությամբ ժողովրդի հավատը բյուրեղացնող առաջամարտիկ, երրորդ դեպքում՝ ռուս մարդու կերպարի հոգևոր վերափոխման քարոզիչ և այլն¹³: Այս դետալային վերլուծությունները հանգում են կարևոր մի ընդհանրացման, որը, իբրև կոչ, Դոստոևսկու խոսքերով Ռասպուտինը հղում է ռուս և միջազգային հանրությանը. «Բացեք ռուս մարդու համար ռուսական «լույսը», հնարավորություն տվեք նրան որոնելու այդ ոսկին, այդ գանձը, որ թաքցված է նրանից և պահված հողի մեջ: Ցույց տվեք նրան ապագայում ողջ մարդկության վերաթաքմացումն ու նրա հարությունը գուցե թե միայն ռուսական մտքով, ռուսական Աստծով ու Քրիստոսով և կտեսնեք, թե ինչպիսի հզոր ու արդարամիտ, իմաստուն և նուրբ հսկա կաճի զարմացած աշխարհի առաջ, զարմացած ու երկյուղած, որովհետև նրանք մեզնից սպասում են միայն սուր, սուր և բռնություն, որովհետև մեզ չեն պատկերացնում, իրենց կարծիքով, առանց բարբարոսության»¹⁴:

Մեր ընտրած հրապարակախոսական երկերում Մաթևոսյանի և Ռասպուտինի էսսե-կտավները բացահայտում են մի քանի ուշագրավ իրողություն: Նախ՝ անցյալի ու ներկայի ֆոնին նրանք հյուսում են ի-

¹² Հր. Մաթևոսյան, նշվ. գիրքը, էջ 81:

¹³ Տե՛ս **Распутин В.** Откройте русскому человеку русский свет...

¹⁴ Նույն տեղում:

րենց երկրի տարածաժամանակային պատկերը, որն ընթերցումից հետո շրջվում է (ինվերսիա) դեպի ընթերցողի հոգևոր աշխարհ և բացահայտում նրա մեջ հոգևոր հայրենիքը տարածության ու ժամանակի չչափազրվող սահմաններով: Իսկ այդ ինվերսիան արդեն իսկ հակառակ հեռանկարի սկզբունքի կարևորագույն գործառնություններից է:

Երկրորդ ի դեմս Թումանյանի/Դոստոևսկու՝ բյուրեղանում է լավագույն մտավորական գրողի սրբապատկերը, որը նույնպես հակառակ հեռանկարի սկզբունքով խոշորանում, ընդարձակվում է ընթերցող-«դիտողի» ներաշխարհում: Մրան գուգահեռ էսսենների վերջում սկսում է ուրվագծվել նաև մյուս սրբապատկերը՝ ի դեմս հեղինակի: Այլ խոսքով՝ նույն ստեղծագործության մեջ ծնունդ են առնում երկու սրբապատկերներ. առաջինը՝ անցյալից ճառագող, երկրորդը՝ անցյալն ու ներկան բացահայտող և իր իդեալ սրբապատկերի լույսը ընթերցողին մատուցող հեղինակի դիմապատկերը:

Իսկ այժմ՝ մի քանի խոսք լսարանի հետ Մաթևոսյանի և Ռասպուտինի երկխոսության որոշ նրբերանգների մասին:

2. Հեղինակը և լսարանը հակառակ հեռանկարի դիտանկյունից

Նախ՝ հստակեցնենք կարևոր մի իրողություն. երկու հեղինակներն էլ անցումային հասարակության փորձությունները տեսած գրողներ են, իսկ սա նշանակում է, որ նրանք ունեցել են առնվազն **երկու տարբեր լսարան**՝ խորհրդային և հետխորհրդային: Վերջինս նույնպես անցել և անցնում է լուրջ փորձությունների միջով, ուստի նրա ներսում գրողի, առավել ևս սրբապատկեր գրողի կերպարը միանշանակ չի ընկալվում:

Հ. Մաթևոսյանը և Վ. Ռասպուտինը տարիներ շարունակ գործ են ունեցել խորհրդային լսարանի հետ, որն առանձնանում էր իր հավաքական «ես»-ով, գաղափարական դրդապատճառներով, ընդհանրական շահի գիտակցմամբ¹⁵: Հենց այս իրողությունն էլ թերևս մեծացնում էր ընթերցողի ներսում հակառակ հեռանկարի սկզբունքով ծավալվող լայն արձագանքը, ինչը չի կարելի ասել հետխորհրդային կամ անցումային շրջանի լսարանի մասին:

Տեխնոլոգիական նոր զարգացումները 21-րդ դարասկզբին էապես փոխեցին լսարանի կառույցն ու որակը¹⁶: Այժմ վերջինիս առավելապես բնորոշ են գաղափարախոսության բացակայությունը, գրող-ընթերցող հորիզոնական հարաբերությունները, սոցցանցային ակտիվ երկխոսությունները, նաև՝ հատվածային լսարանը, մեդիայի անհատականացումն

¹⁵ Տե՛ս **Հ. Բայադյան**, Հրանտ Մաթևոսյանի հրապարակախոսությունը <https://hetq.am/hy/article/30627>, **Цветова Н. С.** Валентин Распутин в слове и за словом, СПб., изд. Алетея, 2018:

¹⁶ Տե՛ս «Чтение в XXI веке: традиции и тенденции. Материалы всероссийской научно-практической конференции». Екатеринбург, 29-30 мая 2014 г. <http://elib.uraic.ru/bitstream/123456789/12450/1/0017149.pdf>

ընդհանրապես: Ըստ այդմ՝ հակառակ հեռանկարն ընթերցողի ներսում ծավալվում է հիմնականում մակերեսային ու չտարրորշված չափումներով և **մեծ լսարան չի կարող ակնկալել**: Բարձր մշակույթի տեղատվության ֆոնին գերիշխողը «սերիալային մշակույթի» հետաքրքրություններով ապրող լսարանն է, որի համարժեքը ենթադրում է ոչ թե հակառակ հեռանկարի, այլ գծային նկարչության սկզբունքներին բնորոշ ընկալումներ: Դրանց անմիջական արտահայտությունները սփռված են սոցիալական մեդիայում՝ սոցցանցեր, տելեգրամյան լիքներ և այլն: Ուստի այս իրողությանը համաչափ են գրականության առիթով Ռասպուտինի հնչեցրած տազնապն ու մտահոգությունը. «Եթե նախկինում ...ամերոյակովները ինչ-որ ձևով նախազգուշացնում էին աշխարհին իրենց վտանգավորության մասին,- գրում է նա,- ապա այժմ ամերոյակովները դառնում են գրքերի ու հոդվածների հեղինակ: Նրանք դառնում են մտքերի տիրակալ: Եվ դառնում են հոծ ամբոխով, պաշտպանելով մեկը մյուսին այն բանի համար, որ զավթեն ողջ գրականությունը»¹⁷:

Նույն մտահոգությունն ունի նաև Մաթևոսյանը. «...Մեր թույլ գրիչները, կարճատեսի մեր թույլ հայացքները, վրձինները չեն կարողանում ընդգրկել էն ողբերգական խորը, մեծը, համաշխարհայինը, խորքայինը, կոսմիկականը, որ իրականությունն է: Իրականությունը մեր մշակույթից խուսափում է: Էս մեր թուլության պատճառով»¹⁸:

Երկու գրողների տազնապն ու անհանգստությունն ակնհայտ են, սակայն նրանց միտքը ժամանակի կարճ տարածությամբ չի բավարարվում: Բրողելյան հայտնի **երկար ժամանակի տևողությունն**¹⁹ ուղեկցում է Մաթևոսյանին ու Ռասպուտինին հատկապես ապագայի մասին մտորումներում: Այդ տևողությունը չափվում է հազարամյակներով և առնչվում տվյալ ազգի գոյատևման խորքային գործընթացներին, որոնք հակառակ հեռանկարին բնորոշ մտահոգևոր չափումները ուղղում են դեպի լսարան, այն է՝ ընթերցողի հոգևոր աշխարհ՝ վերածնելու ազգի ու երկրի անցնելիք ճանապարհի տևական ռիթմերը: «Ժողովուրդը ոչ միայն ապրողների ներկա սերունդն է, այլև անցյալում ապրած սերունդը, որ լիարժեք գիտի անցյալի փորձը, այլ նաև հույսեր փայփայող գա-

¹⁷ **Распутин В.** Время Достоевского...

¹⁸ **Հր. Մաթևոսյան**, նշվ. գիրքը, էջ 68:

¹⁹ Ֆրանսիական Անալների դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ Ֆեռնան Բրողելի առաջադրած հղացքն է ժամանակի կառույցի մասին: Նա պատմական գործընթացը դիտարկում է ժամանակային երեք չափումների համատեքստում՝ կարճ տևողություն, որին առավել բնորոշ են քաղաքական տեղաշարժերը, միջին տևողություն՝ բնութագրվում է տնտեսական տեղաշարժերով, և երկար տևողություն, որտեղ ժամանակի ընթացքը շատ դանդաղ է և չափվում է հարյուրամյակներով կամ հազարամյակներով: Բրողելը առանձնակի ուշադրություն էր դարձնում երկարատև պատմական գործընթացներին: Տե՛ս **Ա. Մտեփանյան, Ե. Մարգարյան**, ժամանակի կառույցը Ֆ. Բրողելի պատմահայեցողության ծիրում, «Պատմություն և կրթություն», Եր., 2005, թիվ 1-2, էջ 33-42: Տե՛ս նաև **Чеканцева З. А.** Время историка, «Образы времени и исторические представления. Россия-Восток-Запад», изд. «Круг», М., 2010, էջ 66-78, **И. Л. Тучкова И. Л.**, Специфика категории «историческая время» в трудах Ф. Броделя, www. Nbu.gov.ua

լիք սերունդը»²⁰, - գրում է Ռասպուտինը և մեկ այլ հրապարակման մեջ շարունակում. «Պատմության դժվարին պահերին նրա լավագույն հատվածը ժամանակավորապես նահանջում է դեպի իր հազարամյակները, ինչպես «պարտիզաններն անտառում», հավատարիմ մնալով սեփական ինքնության նախնական արժեքներին»²¹:

Սա Ռասպուտինի համոզմունքն է:

Նույն համոզմունքով է ապրել նաև Մաթևոսյանը. «Եղել է այն, ինչ լինելու էր: Կլինի այնպես, ինչպես լինելու է՝ հարատևելու ենք, հայրենիք միշտ ուզենալու ենք ունենալ, հայրենիք միշտ ունենալու ենք»²²: Այլ խոսքով՝ երկուսն էլ հավատում են հակառակ հեռանկարի խորքային անդրադարձով ստեղծված ու ստեղծվելիք **գրականության հարատևությանը**:

Ամփոփենք:

Հակառակ հեռանկարի սկզբունքը ինչպես գեղանկարչության մեջ, այնպես էլ հրապարակախոսական ժանրի ստեղծագործություններում ի հայտ է բերում նյութի ընկալման ու վերաիմաստավորման նոր հնարավորություններ: Հատկապես տարածաժամանակային վեկտորների և հեղինակի հայացքի բազմավեկտոր ուղղվածության շնորհիվ դրանցում բացահայտվում են ուշագրավ գործառույթներ:

Հ. Մաթևոսյանի և Վ. Ռասպուտինի պարագայում, անցումային հասարակությամբ պայմանավորված, փոխվում են ընթերցողական լսարանի (խորհրդային և հետխորհրդային տարիների մարդու) ընկալման չափումները, որոնք հանգեցնում են հակառակ հեռանկարի սեմանտիկ փոխակերպումների: Հուսով ենք՝ այս սկզբունքը հետագայում ևս կշարունակի գործել՝ նոր իմաստավորումների և բացահայտումների առիթներ տալով հետազոտողներին:

ДАВИД ПЕТРОСЯН – Публицистика Г. Матевосяна и В. Распутина с точки зрения принципа обратной перспективы. – Тенденции расширения информационных границ медиа, активность социальных сетей, их новые инструменты требуют переосмысления содержания и социальной значимости публицистики. В этом контексте особую важность представляет анализ творческого опыта литераторов-публицистов предыдущего поколения. Нами выбраны знаменитые писатели Г. Матевосян и В. Распутина, творчество которых рассматривается с точки зрения известного в живописи принципа обратной перспективы.

Тема исследовалась в двух направлениях: наличие иконописных функций, характерных для принципа обратной перспективы в публицистике вышеуказанных авторов, и проявления того же принципа в отношениях автора и аудитории.

В произведениях Г. Матевосяна и В. Распутина принцип обратной перспективы открывает новые возможности понимания и переосмысления материала. Именно благодаря пространственно-временным векторам и многовекторной направленности авторского взгляда в них были выявлены примечательные функции.

²⁰ **Распутин В.** Коренная порода нации, «Восточно-сибирская правда», 22 января 2000.

²¹ **Распутин В.** Мой манифест, «Наш современник», 1997, № 5, с. 42.

²² **Հր. Մաթևոսյան**, նշվ. գիրքը, էջ 305:

Оба автора, как писатели переходного периода, имели две разные аудитории: советскую и постсоветскую. Если советскую аудиторию отличали идеологические мотивы, осознание общего интереса, то для постсоветской аудитории характерны горизонтальные отношения писатель-читатель, активные диалоги в социальных сетях и т. д. В последнем случае обратная перспектива разворачивается в поверхностных измерениях. Тем не менее оба писателя верят в будущее высокой литературы, отраженной векторами обратной перспективы в духовном мире читателя.

Ключевые слова: *принцип обратной перспективы, публицистика, Грант Матевосян, Валентин Распутин, Павел Флоренский, иконические функции, автор и аудитория*

DAVID PETROSYAN – *Publicity of Hrant Matevosyan and Valentin Rasputin from the Point of View of the Principle of Reverse Perspective.* – The trends of expanding the information boundaries of the media, the activity of social networks, and their new tools require a rethinking of the content and social significance of journalism. In this context, the analysis of the creative experience of literary publicists of the previous generation is of particular importance. We have chosen the famous writers G. Matevosyan and V. Rasputin, whose works are analyzed, whose creative works are considered from the point of view of the principle of reverse perspective known in painting.


The theme was investigated in two main directions: the presence of iconic functions characteristic of the principle of reverse perspective in the above mentioned authors' journalism, and the manifestations of the same principle in the relationship between the author and the audience.

In the works of G. Matevosyan and V. Rasputin, the principle of reverse perspective opens up new ways. Rasputin's works, the principle of reverse perspective opens up new possibilities of understanding and rethinking the material. Due to the spatial and temporal vectors and multi-directional orientation of the author's point of view, remarkable functions have been revealed in them.

Both authors, as writers of a society in transition, had two different audiences: Soviet and post-Soviet. While the Soviet audience was distinguished by ideological motives, awareness of common interest, the post-Soviet audience was characterized by horizontal writer-reader relations, active dialogues in social networks, etc. In the latter case, the reverse perspective unfolds in superficial dimensions. However, both writers believe in the future of high literature reflected by the vectors of reverse perspective in the spiritual world of the reader.

Key words: *principle of reverse perspective, publicism, Hrant Matevosyan, Valentin Rasputin, Pavel Florensky, iconic functions, author and audience*

ԱԿԱԴ. ԷՂՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՄԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ



2023 թ. նոյեմբերի 8-10-ը տեղի ունեցավ հորեյանական գիտաժողով՝ նվիրված մեծավաստակ գրականագետ, ակադեմիկոս Էղվարդ Ջրբաշյանի ծննդյան 100-ամյակին:

Եռօրյա գիտաժողովի բացումը նոյեմբերի 8-ին էր՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում. այն նախագահում էր հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: Նա ներկայացրեց Էղվարդ Ջրբաշյանի անցած գիտական ուղին, նրա մեծագույն վաստակը XX դարի երկրորդ կեսի խորհրդահայ գրականագիտության կայացման և

զարգացման գործում, շուրջ կեսդարյա ներդրումը, որ նա ունի ԳԱԱ գրականության ինստիտուտի պատմության մեջ:

Ողջույնի խոսքով հանդես եկան ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Աննա Ասատրյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Դավիթ Գասպարյանը, Սուրեն Աբրահամյանը, գիտնականի դուստրը՝ Աշխեն Ջրբաշյանը:

Ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում հնչեցին նաև հետաքրքիր ու արժեքավոր զեկուցումներ՝ նվիրված Էղվարդ Ջրբաշյանի գիտական և գիտակազմակերպչական գործունեությանը: Պրոֆեսոր - Ժենյա Քալանթարյանը խոսեց Ջրբաշյան գիտնականին՝ նրա գրականագիտական հետաքրքրությունների լայն շրջանակի և հիմնական ուղղությունների մասին: Բանասիրական գիտությունների դոկտոր Սուսաննա - Հովհաննիսյանի զեկուցումը վերնագրված էր «Էղվարդ Ջրբաշյանը՝ իբրև հայ գրականագիտության հենասյուն», որտեղ նա ներկայացրեց ակադեմիկոսին իբրև մարդու, գիտնականի և գիտության կազմակերպչի, XX դարավերջի հայ գրականագիտության յուրօրինակ «հենասյան»:

ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանը հանգամանալիքնությամբ անդրադարձավ Էդ. Ջրբաշյանի «Վահան Տերյանի տաղա-

չափական համակարգը» մենագրությանը, ցույց տվեց այն նորույթը, որ նա բերեց տերյանագիտություն այդ գրքով, իսկ բանասիրության դոկտոր Պետրոս Դեմիրճյանը քննության ենթարկեց Խաչատուր Աբովյանի գրական-պատմական սխրանքի ջրբաշանական գնահատականը: Նիստի վերջում հանդես եկավ ԳԱԱ հիմնադրող գրադարանի տնօրեն, բ.գ.թ. Մայա Գրիգորյանը, որը ներկայացրեց գրադարանի աշխատակազմի լայնածավալ աշխատանքը բոլոր ակադեմիկոսների և մասնավորապես Էդվարդ Ջրբաշյանի գիտական ժառանգության թվայնացման ուղղությամբ:

Նոյեմբերի 9-ի նիստը տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի մեծ դահլիճում. այն վարում էր ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ալբերտ Մակարյանը: Նիստին մասնակցում էին ոչ միայն գիտնականի կրտսեր գործընկերները, աշխատակիցներն ու մտերիմները, այլև բարձր կուրսերի ուսանողներ, մագիստրանտներ և ասպիրանտներ: Ողջույնի խոսքով հանդես եկավ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Արշալույս Գալստյանը, որն ընդգծեց Էդ. Ջրբաշյանի գիտական ժառանգությունը նորովի արժևորելու կարևորությունը գրականագետների նոր սերնդի դաստիարակության և կրթության գործում: Ալբերտ Մակարյանը կարևորեց այն լայն մտահորիզոնը, որ բնորոշ էր Ջրբաշյանին՝ իբրև գրականագետի, միութենական գիտական լայն հանրության հետ նրա կապերը, որոնք հնարավորություն տվեցին միջազգային մակարդակի բարձրացնելու հայ գրականագիտական միտքը, հարստացնելու այն տեսական և գրական-պատմական նոր մոտեցումներով: Հնչեցին հետաքրքիր և արժեքավոր զեկուցումներ: Պրոֆ. Սամվել Մուրադյանն իր ելույթում ընդգծեց Ջրբաշյանի ավանդը իսահակյանագիտության մեջ և կարևորեց մեծ բանաստեղծին նվիրված նրա գիտական հոդվածների մեծ արժեքը՝ հատկապես կարևորելով «Աբու-Լալա Մահարի» պոեմի քնարական հերոսի մեկնությանը նվիրված աշխատությունը:

Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Սեյրան Գրիգորյանն իր զեկուցման մեջ («Հատվածի ժանրը Վ. Տերյանի և Ե. Չարենցի պոեզիայում») ներկայացրեց գրական-պատմական ուշագրավ փաստեր. 1918 թ. Ե. Չարենցը տպագրում է «Հատված» վերնագրով մի ստեղծագործություն՝ քաղաքացիություն տալով «հատված» կոչվող բանաստեղծական ժանրին, որը հայ պոեզիա էր ներմուծել Վ. Տերյանը իր «Ոսկի հեքիաթ» շարքի համանուն վերնագրով մի բանաստեղծությամբ: Գրականագետն ընդգծեց, որ բանաստեղծության առեղծվածին և հատկապես նրա ժանրային բնույթին տերյանագիտության մեջ ամենաշատը մոտեցել է ակադ. Էդ. Ջրբաշյանը, որի դրույթներն էլ ընկած են իր զեկուցման հիմքում:

Բ.գ.թ., դոցենտ Վաչագան Ավագյանը անդրադարձավ Սունդուկյանի «Վարինկի վեչեր» պատմվածքին նվիրված Ջրբաշյանի արժեքավոր հոդվածին, դրա տեղը և դերը սունդուկյանագիտության մեջ: Նիստի վերջին հատվածում իրենց զեկուցումներով հանդես եկան երիտասարդ գրականագետներ և ուսանողներ Գոհար Վահանյանը (Ե. Չարենցի տուն-թանգարանի գիտաշխատող), Թովմաս Չարլզ Տողրամաճյանը (ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանող), Էլեն Գրիգորյանը (հայ բանասիրության ֆակուլտետի 4-րդ - կուրսի ուսանողուհի), որոնց զեկուցումները նույնպես կառուցված էին Ջրբաշյանի գրականագիտական մի շարք դրույթների համատեքստում:

Հատկապես հարուստ և բազմազան էր ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում կայացած երկու նիստերի օրակարգը: Ելույթ ունեցան ոչ միայն ինստիտուտի գիտաշխատողներ, այլև արտերկրից ժամանած գիտնականներ, եղան նաև Աթենքից և Հռոմից հեռավար միացումներով զեկուցումներ: Ողջույնի խոսքով հանդես եկավ Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը, որն ընդգծեց ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային տարիներին Ջրբաշյանի ունեցած գիտական և կազմակերպչական մեծ դերը Հայկական հանրագիտարանի ստեղծման գործում: Նա նաև նշեց, որ 2020 թ. տպագրված «Հովհաննես Թումանյան. Հանրագիտարան» հրատարակության մեջ տեսակարար մեծ կշիռ ունեն Էդվարդ Ջրբաշյանի թումանյանագիտական աշխատությունները:

Պրոֆ. Մագդա Ջանփոլադյանը հանգամանալի անդրադարձ կատարեց Ջրբաշյանի՝ Ե. Չարենցի անմահ գործին՝ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությանը նվիրված աշխատություններին՝ ցույց տալով այն ներդրումը, որ ունի մեծ գիտնականը այդ բանաստեղծության բնագրագիտական աղբյուրների բացահայտման, ճշգրտման և մեկնաբանման գործում: Ուշագրավ էր բանասիրության դոկտոր Մարգարիտա Խաչատրյանի ելույթը, որտեղ նա հատկապես շեշտեց Էդվարդ Ջրբաշյան մարդու, գիտնականի և ուսուցչի լուսավոր կերպարը: Բ.գ.թ., դոց. Վահան Նավասարդյանն իր ելույթում ներկայացրեց այն մեծ ներդրումը, որ ունեցավ Ջրբաշյանը XX դարի երկրորդ կեսի հայ ոտանավորի տեսության զարգացման և տաղագետների նոր սերնդի պատրաստման գործում: 1930-ականներին Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն. մետրիկա» աշխատության երևան գալուց հետո տաղագիտությունը մեզանում կարծես մտել էր փակուղի, և միայն 1960-70-ական թթ. Ջրբաշյանը հիմնավորեց հայկական ոտանավորի վանկական բնույթի մասին տեսությունը՝ զարկ տալով տաղագիտական նոր ուսումնասիրությունների և մեկնությունների: Բանասիրության դոկտոր Եվա Մնացականյանի զեկուցման հիմքում ընկած էր Հովհ. Թումանյանի «Դեպի Անհունը» պոեմի ջրբաշյանական մեկնության քննությունը, իսկ Բ.գ.թ. դոցենտ Սիրանուշ Մարգարյանն անդրադարձ կա-

տարեց Ջրբաշյանի տեսական մի հոդվածի, որը նա կարդացել էր 1979 թ. Ավստրիայի Բնաբույս քաղաքում՝ Համեմատական գրականագիտության միջազգային կազմակերպության 9-րդ համաժողովում: Մարգարյանը ցույց տվեց, թե ինչպես է Ջրբաշյանը կարողացել կապել հայ գրականության մեջ նկատվող երևույթները և ուղղությունները համաշխարհային գրական գործընթացների հետ:

Հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան Ռուսաստանի Դաշնությունից հատուկ գիտաժողովին մասնակցելու համար ժամանած հյուրերը՝ Դոնարա Մկրտչյանը (Մանկո Պետերբուրգի պետական համալսարանի դասախոս) և Աիդա Մարջանյանը (Մոսկվայում ՀՀ դեսպանատան մշակույթի կենտրոնում գործող հայագիտական ամբիոն): Մկրտչյանը անդրադարձ կատարեց հայ պոեզիայի չորս նշանավոր դեմքերի՝ Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի՝ ջրբաշյանական բնութագրմամբ՝ «չորս գագաթների» պետերբուրգյան կյանքին ու գործունեությանը, ներկայացրեց նաև նորահայտ փաստեր՝ ցույց տալով պետերբուրգյան մշակութային կյանքի մեծ ազդեցությունը հայ բանաստեղծների վրա: Աիդա Մարջանյանը ընդգծեց ներաշխարհային «պայծառացումները» Վահան Տերյանի բանաստեղծական շարքերում՝ դրանք դիտարկելով ռուս և եվրոպական սիմվոլիզմի համատեքստում: Մասնակիցներն առանձնակի ուշադրությամբ ունկնդրեցին հեռավար կապով միացած Նաիրա Թամամյանի (Աթենք) և Աննա Հունանյանի (Հռոմ) զեկուցումները. վերջինս նվիրված էր Մեծարենցի պոեզիայի ջրբաշյանական մեկնությանը:

Բ.գ.թ. Արքմենիկ Նիկողոսյանը ներկայացրեց Եղիշե Չարենցի ակադեմիական հրատարակությունը կազմելու սկզբունքները՝ նշելով, որ աշխատանքների ընթացքում հրատարակության խմբագրական կազմը հատուկ ուշադրություն է դարձնում և հետևում այն սկզբունքներին, որոնք մեծ պատասխանատվությամբ մշակվել են Էդ. Ջրբաշյանի կողմից Հովհ. Թումանյանի ակադեմիական տասհատորյակի ստեղծման և հրատարակման ընթացքում:

Գիտաժողովին ուշագրավ զեկուցումներով հանդես եկան նաև բանասիրության դոկտոր Վանո Եղիազարյանը, թեկնածուներ Ալա Խառատյանը, Նաիրա Բալայանը, Արմեն Մանուկյանը, Նունե Մկրտչյանը, Սիրանուշ Փարսադանյանը:

Խմբագրության կողմից. Էդ. Ջրբաշյանը նաև «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդեսի հիմնադիր գլխավոր խմբագիրն էր (1967-1977) և իր խորը գիտելիքներով ու գիտնականին վայել սկզբունքային մոտեցումներով նպաստել է հանդեսի բարձր հեղինակությանը թե՛ համալսարանականների, թե՛ գիտական այլ հաստատությունների ներկայացուցիչների շրջանում:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Վաչագան Ավագյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ
Вачаган Авагян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянской литературы и теории литературы ЕГУ
Vachagan Avagyan – Candidate of Philology, Associate Professor at YSU Chair of Armenian Literature History and Literary Theory
Էլ. փոստ՝ vachagan.avagyan@ysu.am
2. **Արժրուհի Ավագյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր
Артсрун Авагян – доктор филологических наук, профессор кафедры истории современной армянской литературы и литературной критики
Artsrun Avagyan – Sc. D. in Philology, Professor at YSU Chair of History of Modern Armenian Literature and Literary Criticism
Էլ. փոստ՝ a.avagyan@ysu.am
3. **Սարգիս Ավետյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ
Саргис Аветян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ
Sargis Avetyan – Candidate in Philology, Associate Professor at YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics
Էլ. փոստ՝ sargisavetyan@ysu.am
4. **Վարդան Պետրոսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ
Вардан Петросян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ
Vardan Petrosyan – Candidate in Philology, Associate Professor at YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics
Էլ. փոստ՝ vz.petrosyan@ysu.am
5. **Նարինե Դիլբարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ
Нарине Дилбарян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ
Narine Dilbaryan – Candidate of Philology, Associate Professor at YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics
Էլ. փոստ՝ narine.dilbaryan@ysu.am
6. **Աննա Աբաջյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ
Анна Абаджян – доктор филологических наук, профессор, заведующая кафедрой истории армянского языка и общего языкознания ЕГУ
Anna Abajyan – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics
Էլ. փոստ՝ abajyan.anna@ysu.am
7. **Անահիտ Յուզբաշյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Анаит Юзбашян – кандидат филологических наук, доцент
Anahit Yuzbashyan – Candidate in Philology, Associate Professor
Էլ. փոստ՝ anahit.yuzbashyan@ysu.am

- 8. Գայանե Մուրադյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր
Гаяне Мурадян – доктор филологических наук, профессор кафедры английской филологии ЕГУ
Gaiane Muradian – Sc. D. in Philology, Professor at YSU Chair of English Philology
 Էլ. փոստ՝ g.murad@ysu.am
- 9. Շուշանիկ Պարոնյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ
Шушаник Паронян – доктор филологических наук, профессор, заведующая кафедрой английского языка и межкультурной коммуникации ЕГУ
Sushanik Paronyan – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of English for Cross-Cultural Communication
 Էլ. փոստ՝ shushanik.paronyan@ysu.am
- 10. Աստղիկ Գեղամյան** – ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս
Астхик Гегамян – преподаватель кафедры иранистики ЕГУ
Astghik Geghamyan – Lecturer of YSU Chair of Iranian Studies
 Էլ. փոստ՝ geghamyanastghik@ysu.am
- 11. Մկրտիչ Ս. Մկրտչյան** – ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող
Мкртыч С. Мкртчян – младший научный сотрудник отделения общего и сравнительного языкознания Института языка им. Р. Ачаряна НАН РА
Mkrtich S. Mkrtchyan – Junior Researcher of the Department of General and Comparative Linguistics of the H. Acharyan Institute of Language NAS RA
 Էլ. փոստ՝ mkrtchyan09@gmail.com
- 12. Դավիթ Պետրոսյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ
Давид Петросян – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой новых медиа и коммуникации ЕГУ
David Petrosyan – Sc. D. in Philology, Head of YSU Chair of New Media and Communication
 Էլ. փոստ՝ davidpetrosyan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ
LITERARY CRITICISM

- Վաչագան Ավագյան* – Նար-Դոսը «Անահիտ» հանդեսում և Արշակ Չոպանյանի գնահատականներում 3
Вачаган Авагян – Нар-Дос в журнале «Анаид» и в оценках Аршака Чобаняна
Vachagan Avagyan – Nar-Dos in "Anahid" Journal and Archag Tchobanian's Evaluations
- Արծրուն Ավագյան* – Մեծ եղեռնի Արմտանի վկան 15
Арирун Авагян – Свидетель Геноцида армян из Армтана
Arcrun Avagyan – The Witness of the Armenian Genocide from Armtan

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ЯЗЫКОЗНАНИЕ
LINGUISTICS

- Սարգիս Ավետյան* – Արարատյան բարբառում եզակի հրամայականի մեկ կարևոր առանձնահատկության շուրջ (անգլ.) 30
Sargis Avetyan – Об одной важной особенности императива единственного числа в Араратском диалекте (англ.)
Sargis Avetyan – On One Important Peculiarity of the Imperative Singular in the Dialect of Ararat
- Վարդան Պետրոսյան* – Հ.-ե. երկբարբառային համակարգից սերած երկբարբառակերպերը հին հայերենում (տարածամասնակյա և սպա-ժամանակյա քննություն) 39
Вардан Петросян – Древнеармянские дифтонгоиды, происходящие из индоевропейской дифтонгоидной системы (диахроническое и ахроническое исследование)
Vardan Petrosyan – Diachronic and Achronic Nature of Old Armenian Diphthongoids Deriving from IE Diphthongal System
- Նարինե Դիլբարյան* – Օրենք և կրոն իմաստային դաշտերի միավորները Դավիթ Ալավկա Ռդդու «Կանոնական արբենսդրություն» երկում 49
Нарине Дилбарян – Словасемантических полей права и религии в труде Давида Сына Алавка «Канонический кодекс»
Narine Dilbaryan – The Words of the Semantic Fields of Law and Religion in the Work of David Son of Alavk "Canonical Code"
- Աննա Աբաջյան, Անահիտ Յուզբաշյան* – Տարածական բաժանումներ արտահայտող եզրույթները գրարարում 73
Анна Абаджян, Анаит Юзбашян – Термины, выражающие пространственные разделения в габаре
Anna Abajyan, Anahit Yuzbashyan – Terms Expressing Spatial Divisions in Old Armenian

<i>Փայանե Մուրադյան, Ճուշանիկ Պարոնյան</i> – Իմացաբանություն և գիտաֆանտաստիկ գրականության լեզու (անգլ.).....	84
<i>Gayane Muradyan, Shushanik Paronyan</i> – Эпистемология и язык научной фантастики (англ.)	
<i>Gaiane Muradian, Shushanik Paronyan</i> – Epistemology and Language of Science Fiction	
<i>Աստղիկ Չեղամյան</i> – Հայերին պարսկերեն ուսուցանելու համար կազմված դասագրքերի պատմությունից (ըստ «Պարսկերեն և հայերեն քերականություն» ձեռագրի).....	97
<i>Астхик Гегамян</i> – Из истории учебников, составленных для обучения армян персидскому языку (согласно рукописи – «Персидская и армянская грамматика»)	
<i>Astghik Geghamyan</i> - From the History of the Textbooks Compiled to Teach Persian Language to Armenians (The Manuscript "Persian and Armenian Grammar")	
<i>Սկրտիչ Ս. Սկրտչյան</i> – Սուբյեկտիվ և օբյեկտիվ իրրև հակադրության դրսևորում. նոր հայացք դասական մոտեցումներին.....	110
<i>Мкртыч С. Мкртчян</i> – Субъективное и объективное как проявление оппозиции: новый взгляд на классические подходы	
<i>Mkrtich S. Mkrtchyan</i> – Subjective and Objective as a Manifestation of Opposition: a New Perspective on Classical Approaches	

**ԺՌԻՌՆԱԼԻՍՏԻԿԱ
ЖУРНАЛИСТИКА
JOURNALISM**

<i>Գավիթ Պետրոսյան</i> – Հ. Մաթևոսյանի և Վ. Ռասպուտինի հրապարակախոսությունը հակառակ հեռանկարի սկզբունքի դիտանկյունից	123
<i>Давид Петросян</i> – Публицистика Г. Матевосяна и В. Распутина с точки зрения принципа обратной перспективы	
<i>David Petrosyan</i> – Publicity of Hrant Matevosyan and Valentin Rasputin from the Point of View of the Principle of Reverse Perspective	

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ
НАУЧНАЯ ЖИЗНЬ
SCIENTIFIC LIFE**

Ակադ. Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով.....	132
Юбилейная научная конференция, посвященная 100-летию со дня рождения акад. Эдварда Джрбашяна	
Anniversary Scientific Conference Dedicated to the 100 th Anniversary of Birth of Acad. Edward Jrbashyan	
Տեղեկություններ հեղինակների մասին.....	136
Сведения об авторах	
Information about the Authors	

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ journals.y-su.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝
Издательский редактор
Publishing Editor

Արմեն Հովակիմյան
Армен Овакимян
Armen Novakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Թողարկման պատասխանատու՝
Ответственный выпуска
Issued by

Հասմիկ Եսայան
Hasmik Yesayan
Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության 11. 11. 2023: